ՀՀ ԳԱԱ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ,
ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Նազինյան Սյուզաննա Բորիսի

Սահմանադրությունը ազգային օրենսդրության համակարգում, տեսական-իրավական վերլուծություն

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
համար

Գիտական ղեկավար՝
Իրավաբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Հ. Մ. Ստեփանյան

Երևան-2017

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3

Գլուխ 1

Սահմանադրության կոնցեպտը և օրենսդրության համակարգի ընդհանուր բնութագիրը

1.1. Սահմանադրության կոնցեպտը. պատմատեսական ասպեկտները----------13

1.2. Սահմանադրության հասկացությունը և էությունը----------42

1.3. Գործող օրենսդրության համակարգի ընդհանուր իրավաբանական բնութագիրը-71

Գլուխ 2

Սահմանադրությունը և գործող օրենսդրության համակարգի հարաբերակցության հիմնախնդիրը

2.1.Օրենսդրության համակարգում Սահմանադրության անմիջական գործողության հիմնախնդիրը----------76

2.2.Սահմանադրությունը և օրենսդրության համակարգվածության հիմնախնդիրը----99

2.3. Օրենսդրության համակարգում սահմանադրական գործառույթների դերն ու նշանակությունը----------115

Ամփոփում----------123

Օգտագործված գրականության ցանկ----------126

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի հետազոտության արդիականությունը ամենից առաջ, պայմանավորված է մեզանում իրականացված սահմանադրական փոփոխությունների համատեքստում վերաիմաստավորել և արժևորել Սահմանադրության դերն ու նշանակությունը ազգային օրենսդրության համակարգում և իրավակարգավորումների ոլորտում: Սույն հետազոտության արդիականությունը նաև նրանում է, որպեսզի բացահայտվի պոզիտիվ իրավունքի նորմատիվ կարգավորիչների համակարգում սահմանադրության՝ որպես պետության հիմնական օրենքի տեղն ու դերը:

Ընդհանրապես գիտական հետազոտությունների մեջ «սահմանադրություն» եզրույթը կիրառվում է տարբեր նշանակություններով և ոչ միանշանակ բնութագրիչներով (խոսում են փաստացի, իրավաբանական, չգրված, «կենդանի» սահմանադրության վերաբերյալ), սակայն մարդկանց մեծամասնության համար սահմանադրությունը՝ մարդու, կոլեկտիվի, հասարակության, պետության կյանքում կարևոր նշանակություն ունեցող հատուկ իրավաբանական փաստաթուղթ է: Այն ամրագրում է հասարակական և պետական կառույցի, մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի, ժողովրդի կողմից հանրային իրավունքի իրականացման հիմքերը, տեղական ինքնակառավարման կազմակերպման սկզբունքները, ինչպես նաև պարունակում է համաշխարհային հանրույթի հետ տվյալ պետության հարաբերությունների վերաբերյալ դրույթներ: Այդ իսկ պատճառով սահմանադրությունը հաճախ անվանում են հիմնական օրենք: Երբեմն նման անվանումը հանդիսանում է պաշտոնական (օրինակ, ԳԴՀ (Գերմանիայի) 1949թ. Հիմնական օրենքը, Ֆինլանդիայի 1999թ. Հիմնական օրենքը): Սույն հետազոտությունում խոսք է գնում իրավական սահմանադրության վերաբերյալ, չնայած նաև կիրառում ենք որոշ փաստացի տվյալներ հասարակական և պետական կառույցի, այս կամ այն երկրում մարդու և քաղաքացու դրության, քաղաքական իրավիճակի (փաստացի սահմանադրության կարևոր տարրի) վերաբերյալ իրական առկա տվյալներ:

Աշխատանքում հետազոտվում է ժամանակակից սահմանադրությունը: Ներկայումս աշխարհում գործում են պետությունների 200 և դաշնության սուբյեկտների մոտ 300

սահմանադրություններ (այլ հիմնական օրենքներ): Գոյություն ունի նաև Եվրոպական Միության փաստացի սահմանադրություն, օրինակ՝ Լիսաբոնի պայմանագիրը (2007)[1]:

Գործում են նաև Չինաստանում հատուկ վարչական շրջանների՝ Սյանգանի (1997թ.) և Առմինի (1999թ) հիմնական օրենքները: Հեղինակը փորձ է կատարել տեսականորեն ընդհանրացնել այդ հսկայական փորձը (ներառելով պատմական զարգացման միտումները) և նման հիմքերով բացահայտել ժամանակակից սահմանադրության հիմնական գծերը, սահմանադրական զարգացման միտումները: «Ժամանակակից» բառը տվյալ դեպքում ունի ոչ այնքան ժամանակային, որքան բովանդակային նշանակություն: Ժամանակակից սահմանադրությունը՝ այնպիսի հիմնական օրենք է (որոշ երկրներում մի քանի հիմնական օրենքների համախումբ), որը համապատասխանում է համամարդկային արժեքներին, սոցիալական առաջընթացի պահանջներին և ժողովրդավարական ավանդույթներին: Այս իմաստով տոտալիտար հակադեմոկրատական սահմանադրությունները չեն հանդիսանում ժամանակակից: Դրանցից որոշները հիշատակվում են տվյալ աշխատանքում, սակայն միայն համեմատության նպատակով:

Վերոնշվածով է պայմանավորվում թեմայի հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական հետազոտության վիճակը: Աշխարհի տարբեր երկրների գիտական գրականության մեջ սահմանադրության, սահմանադրական իրավունքի, սահմանադրական կարգավորման, սահմանադրական վերահսկողության խնդիրներին նվիրվել են աշխատությունների հսկայական քանակություն:

Հայրենական իրավագիտության մեջ սահմանադրականության, սահմանադրության էության և հասկացության, սահմանադրական իրավունքի գիտության զարգացման ոլորտում նշանակալի ներդրում ունեն անվանի պետականագետ-սահմանադրագետներ՝ Վլ. Ռ. Նազարյանը[2], Հ. Մ. Խաչատրյանը[3], Ն.Ա. Այվազյանը[4], Գ.Գ. Հարությունյանը[5], Գ.Բ. Դանիելյանը[6] և ուրիշներ:

---

[1] Տես՝ Право Европейского Союза. Под. ред. **С.Ю. Кашкина.** М, 2012. էջ 114-115:

[2] Տես՝ **Նազարյան Վ. Լ.** Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան, Երևան, 1992:

[3] Տես՝ **Խաչատրյան Հ. Մ.** Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը (պետաիրավական վերլուծություն): Գիտական զեկուցման ձևով իրավ. գիտ. դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 1998:

[4] Տես՝ **Այվազյան Ա.Ն.** Սահմանադրության էությունը և բովանդակությունը (համեմատական

Ռուս գիտնականներից սահմանադրության և սահմանադրականության հիմնախնդիրների հետազոտության ոլորտում իրենց ծանրակշիռ խոսքն են ասել. Ս.Ա. Ավագյանը[7], Մ. Վ. Բագլայը[8], Բ.Ս. էբզևը[9], Տ.Յա. Խաբրիևան, Վ. Ե. Չիրկինը[10] և այլոք:

Անցյալի մտածողները սկսել են գրել սահմանադրության (կամ դրա նման փաստաթղթերի) վերաբերյալ մինչև դրա փաստացի ծագումը[11]: Առաջատար մտքի ներկայացուցիչները, հանդես գալով թագավորական միահեծան իշխանության դեմ, հիմնադրեցին պետության «արդարացի» կառավարման համար սահմանադրության վերաբերյալ կանխադրույթը: Երբ ծագեց սահմանադրությունը (պետության առաջին սահմանադրությունը ԱՄՆ-ի 1787թ. Սահմանադրությունն էր), փիլիսոփայական մտահանգումները լրացվեցին Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի, Ամերիկայի, Ավստրալիայի և Օկեանիայի տարբեր պետությունների սահմանադրական հետազոտություններով:

Ներկայումս գոյություն ունեն աշխատությունների հսկայական քանակություն, որոնք նվիրված են բազմաթիվ պետությունների սահմանադրություններին: Դրանց բովանդակությունը բացահայտվում է նաև տարբեր պետությունների պետական կառուցվածքի վերաբերյալ ընդարձակ աշխատություններում: Առաջարկվող աշխատանքը՝ ժամանակակից սահմանադրության հայեցակարգի ստեղծման փորձ է: Իհարկե հեղինակի եզրակացությունները և հետևությունները չեն հանդիսանում վերջին ատյանի ճշմարտություն, քանի որ ստեղծվում են սահմանադրություններ, ձևավորվում սահմանադրական իրավունքի նոր ճշմարտություններ, նոր գաղափարներ,

---

սահմանադրական վերլուծություն): Երևան 2005:

[5] Տես՝ **Հարությունյան Գ. Գ.** Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրա ները: Վերահրատարակություն՝ լրամշակումներով: Երևան, 2016: Նույնի՝ Սահմանադրական մշտադիտարկում: Երևան, 2016:

[6] Տես՝ **Դանիելյան Գ. Բ.** Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (համահեղինակներ՝ Վ.Ն. Այվազյան, Ա.Ա. Մանասյան), Երևան 2015:

[7] Տես՝ **Авакьян С. А.** Конституция России: природа, эволюция, современность. 2-е изд. М., 2000.

[8] Տես՝ **Баглай М. В.** Конституционное право Российской Федерации. Учебник для вузов. М. 1997.

[9] Տես՝ **Эбзеев Б. С.** Введение в Конституцию России. М. 2013.

[10] Տես՝ **Хабриева Т. Я., Чиркин В.Е.** Теория современной конституции.М., 2005.

[11] Մանրամասն տես՝ **Հարությունյան Գ.** Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատարակություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, էջ 64-129:

հայեցակարգեր և հիպոթեզներ[12]: Այս ամենը պահանջում է մշտական տեսական վերլուծություն և վերաիմաստավորում:

Տեսական ընդհանրացումներին զուգահեռ հեղինակը տվյալ աշխատանքում առաջադրել է նաև գործնական խնդիրներ, ըստ հնարավորության առաջարկել ժամանակակից սահմանադրության մոդելի համար առաջարկություններ և եզրակացություններ: Նպատակը կայանում է նրանում, որպեսզի փորձել գտնել սոցիալականացված, հետինդուստրալ, ժողովրդավարական հասարակության պայմաններում ժամանակակից դարաշրջանի որոշ հասարակական հարաբերությունների կարգավորման համար օպտիմալ սահմանադրական ձևակերպումներ:

Տվյալ փուլում մարդկային զարգացման ընդհանուր միտումը հավանաբար հանդիսանում է նոր հասարակական կառուցվածքին՝ սոցիալական շուկայական հարաբերություններին համընթաց շարժումը: Դա կհանդիսանա հասարակության հատուկ տեսակ, որը կընդունի տարբեր երկրների և քաղաքակրթությունների ձեռքբերումները վերաիմաստավորված, վերամշակված ձևով: Ժամանակակից սահմանադրությունը պետք է համապատասխանի վերջինիս:

Հարատև սահմանադրություններ, որոնք պիտանի են բոլոր ժամանակների և ժողովուրդների համար, զարգացող հասարակությունում գոյություն ունենալ չեն կարող:

Ժամանակակից սահմանադրության տեսական հիմքերի մշակումը կարող է օգտակար հանդիսանալ նաև այդ նպատակների համար: Հայտնի է, որ չկա առավել գործառնական, քան լավ տեսությունը: Հեղինակը գիտակցում է, որ ժամանակակից սահմանադրության վերաբերյալ տեսական պատկերացումները, աշխատանքում առաջարկված տեսական-իրավական ձևակերպումները հեռու են կատարելիությունից, սակայն գտնում է նաև, որ սույն հետազոտությունը ինչ-որ աստիճանով խորացնում է իմացությունը քննարկվող հիմնախնդրի տեսական և գործնական կողմերի վերաբերյալ:

Ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակն է իրավունքի

---

[12] Մանրամասն տես՝ **Хабриева Т. Я., Чиркин В. Е**. Теория современной конституции. М., 2005. Конституция в XXI веке. Сравнительно-правовое исследование. Отв. ред. В.Е. Чиркин. М, 2014.

համընդհանուր տեսության առումով բացահայտել սահմանադրության էությունը և բնութագրական հատկանիշները, ինչպես նաև հիմնավորել ՀՀ Սահմանադրության տեղն ու դերը ազգային օրենսդրության համակարգում:

Հետամուտ լինելով այդ նպատակին, հեղինակը առաջադրել է հետևյալ **խնդիրները.**

- բացահայտել Սահմանադրության էությունը, նրա բնութագրիչ գծերը և կապը սահմանադրականության ու սահմանադրական մշակույթի հետ,
- վերլուծել ՀՀ սահմանադրության տեղն ու դերը ազգային օրենսդրության համակարգում,
- բացահայտել ՀՀ Սահմանադրության՝ հիմնարար նորմատիվ իրավական ակտի համակարգաստեղծ դերը ազգային օրենսդրության վերափոխության և զարգացման գործընթացում
- վերլուծել ՀՀ Սահմանադրության և օրենսդրության նորմատիվ իրավական ակտերի միջև համակարգված կապերը,
- մշակել առաջարկություններ գործող օրենսդրության կատարելագործման
- վերաբերյալ, որոնք բխում են ՀՀ փոփոխված Սահմանադրության դրույթներից,
- ներկայացնել ազգային օրենսդրության սահմանադրականացման հիմնական ուղղությունները:

Հետազոտության տեսական հիմքն են կազմել հայրենական և արտասահմանյան ճանաչված գիտնականների, մասնավորապես՝ Ս.Ա.Ավագյանի, Ն.Ա.Այվազյանի, Գ.Բ. Դանիելյանի, Գ.Գ. Հարությունյանի, Վլ. Ռ. Նազարյանի, Հ.Մ. Խաչատրյանի, Մ.Վ. Բագլայի, Բ.Ս. Էբզևի, Տ. Յա. Խաբրիևաի, Վ. Ե. Չիրկինի և այլոց աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ հիմքը:

Սույն աշխատանքի համար նորմատիվ բազա է հանդիսանում ՀՀ Սահմանադրությանը, արտասահմանյան երկրների սահմանադրությունները, ազգային օրենսդրությունը, գիտական և պաշտոնական դոկտրինները (հայեցակարգերը):

Հետազոտության գիտական նորույթը:

Սույն ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը նրանում է, որ իրավունքի ընդհանուր տեսության տեսանկյունից հեղինակը համակողմանի և

համակարգված ձևով վերլուծության է ենթարկել սահմանադրության՝ ընդհանրապես և ՀՀ Սահմանադրության՝ մասնավորապես էությունը և առանձնահատկությունները և տեղն ու դերը ազգային օրենսդրության համակարգում:

Աշխատանքում բացահայտվել է նաև Սահմանադրության ազդեցության հիմնական ուղղությունները ազգային օրենսդրության համակարգի զարգացման վրա, ինչպես նաև հատուկ ուշադրություն է դարձվել Սահմանադրության արժեքանության և նրա անմիջապես գործողության վրա՝ իրավական կարգավորման արդյունավետության ապահովման հիմնախնդիրների հետ կապված համարժեք լուծումներ ձևակերպելու տեսանկյունից:

Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում.

1. Սահմանադրությունը որպես հիմնադիր իրավաքաղաքական փաստաթուղթ, ամենից առաջ իրենից ներկայացնում է քաղաքացիական հասարակության միասնական համաձայնության իրավաբանական պայմանագիր (դաշինք)՝ անհատի, հասարակության և պետության միջև փոխադարձ իրավունքների և պարտականությունների վերաբերյալ:

2. Սահմանադրությունը ինքնին իրավական, սոցիալ-քաղաքական և մշակութային արժեքային համակարգ է, որը պատմականորեն ձևավորված ազգային գոյին բնորոշ օրգանական հատկանիշ է՝ իր կոնկրետ առանձնահատկությունների, ժամանակի խնդիրների, դրանց հնարավոր լուծումների ու իրավակարգավորումների տեսանկյունից:

3. Աշխատանքում ճշգրտվում է ազգային օրենսդրության համակարգի հասկացությունը, համաձայն որի՝ այն մեկնաբանվում է որպես նորմատիվ իրավական ակտերի միասնական և ամբողջական հանրագումար, որը պարունակում է ազգային իրավունքի նորմերի հիմնական զանգվածը՝ որպես միասնական ամբողջականություն, որը բաղկացած է Սահմանադրության նորմերով, սկզբունքներով և ելակետային դրույթներով, իրավունքի ճյուղերով, ենթաճյուղերով, ինստիտուտներով և նորմերով:

4. Աշխատանքում հիմնավորվում է ազգային օրենսդրության քառաստիճան կառուցվածքը, ա) բնական (բանական) իրավունքը (իր սկզբունքներով և

հիմնադրույթներով), բ) միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը (ամենից առաջ՝ ՀՀ վավերացրած կամ հաստատած միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի, կոնվենցիաների) նորմատիվ դրույթները, գ)պոզիտիվ իրավունքի նորմերը (Սահմանադրության, օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը), դ) օժանդակ իրավունքի աղբյուրների նորմերը (նախադեպային իրավունքը, իրավական դիրքորոշումները, սովորութային իրավունքի նորմերը):

5. Ազգային օրենսդրության նորմատիվ իրավական ակտերի համակարգում առանձնացվում է ՀՀ Սահմանադրությունը: Այս առումով հանգամանորեն ուսումնասիրվել է ՀՀ Սահմանադրության առանձնահատկությունները, գերակայությունը, անմիջական գործողությունը, սոցիալական արժեքը, կայունությունը:

Կարևորվում է նաև Սահմանադրության կողմից պետության իրավաստեղծ, իրավակիրառ և իրավապահպան գործառույթների իրականացման հիմնական ուղենիշների կանխորոշումը:

6. Աշխատանքում հիմնավորված է սահմանադրական օրենքների և սովորական օրենքների անխզելի կապը և միասնականությունը ՀՀ Սահմանադրության և գործող օրենսդրության հետ: Առանց սահմանադրական ընդհանուր դրույթների կոնկրետացմանը նշված օրենքներում հիմնական օրենքը լիարժեքորեն չի իրականացնի իր գործառույթները, որը թույլ է տալիս ենթադրելու, այսպես կոչված, «կենդանի և հարաշարժ» Սահմանադրության մասին, ինչպես նաև հիմնավորված է հետևյալ տեսակետը. ՀՀ Սահմանադրությունը հանդես է գալիս որպես ազգային օրենսդրության զարգացման հայեցակարգային ծրագիր, ինչպես նաև իրականացնում է հասարակական հարաբերությունների սահմանադրականացում և համընդհանուր նորմատիվ կարգավորիչ գործառույթ:

7. Աշխատանքում առանձնացված է ՀՀ Սահմանադրության հիմնական գործառույթները՝ համակարգաստեղծ, կայունացնող, նորմատիվ իրավական զանգվածի հաջորդականության ապահովման, ազգային օրենսդրության զարգացման հիմնադրական, իրավակազմիչ և համակարգավորիչ: Բացահայտված է նշված յուրաքանչյուր գործառույթի իրավաբանական-առարկայական բովանդակությունը, որի

շնորհիվ գործող ազգային օրենսդրության համակարգում նախանշվում է նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունը (հիերարխիա), որոշվում է նորմատիվ իրավական ակտերի գործողության սահմանները և դրանց շփման եզրերը իրավունքի այլ աղբյուրների հետ և դրանով իսկ ապահովվում է նորմատիվ իրավական ակտերի միասնական իրավական տարածությունը:

8. Հեղինակի կողմից հիմնավորվում է այն տեսակետը, ըստ որի սահմանադրահիրավական կարգավորման տարրերը գոյություն ունեն բոլոր ճյուղային իրավական ռեժիմների իրացման կառուցակարգերում: ՀՀ Սահմանադրության դրույթների գործողությունը կրում է համալիր, բազմակողմ բնույթ, ինչպես նաև ապահովվում է պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական ինստիտուտների մշտական և անխափան փոխներգործությունը, խթանում է ազգային սահմանադրական մշակույթի և սահմանադրականության կայացման ու զարգացման գործընթացը, ապահովում է ազգային օրենսդրության և իրավունքի ճյուղերի գործառնության միասնականությունը:

9. Սահմանադրությունը խթանում է ազգային օրենսդրության և հասարակական հարաբերությունների սահմանադրականացմանը: Իդեալական առումով սահմանադրականությունը սահմանադրական սկզբունքների և նորմերի իրական իրողություն են հասարակական կյանքում (սա իդեալական տարբերակ է, որին ձգտում են իրավական համակարգերը): Գործնական առումով սահմանադրականությունը սահմանադրական դրույթների անընդմեջ կայացման գործընթաց է առնվազն երեք հարթություններում. իրավական գիտակցությունում, իրավունքի համակարգում և իրավակիրառ պրակտիկայում: Այստեղ խոսքը ոչ թե պարզապես սահմանադրական նորմերի իրացումն է պոզիտիվ իրավունքում և իրավահարաբերություններով, այլև սահմանադրական մշակույթի և սահմանադրականության դոկտրինի «սեփականաշնորհումն» է իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից:

10. Աշխատանքում հիմնավորվում է այն մոտեցումը, ըստ որի ՀՀ Սահմանադրության ծրագրային ներգործությունը գործող օրենսդրության և իրավունքի համակարգի վրա իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով, նոր նորմատիվ իրավական ակտերի ընդունումով, գործող օրենսդրության ակտերի

համապատասխանեցումը ՀՀ Սահմանադրությանը, նոր սահմանադրաիրավական ինստիտուտների ստեղծումով, ՀՀ Սահմանադրությանը չհակասող միջազգային պայմանագրային նորմերի ինպլեմենտացիայի միջոցով, սահմանում է ազգային օրենսդրության զարգացման մարտավարությունը և ռազմավարությունը, ապահովում է սահմանադրական օրինականությունը գործող օրենսդրական համակարգում:

11. Աշխատանքում բացահայտված են սահմանադրաիրավական նորմերի առանձնահատկությունները ազգային իրավունքի համակարգում: Այս առումով սահմանադրաիրավական նորմը որոշվում է որպես ելակետային հիմնադիր բնույթի ընդհանուր վարքագծի կանոն, որով սահմանվում է գործող օրենսդրության և իրավունքի համակարգի ելակետային սկզբունքները, պետական և հասարակական կարգի հիմունքները, անձի իրավական կարգավիճակը և իրավական համակարգի հիմնային բնույթի այլ հարցերը: Գործող օրենսդրության և իրավունքի համակարգի այլ նորմերը սահմանադրական դրույթների նկատմամբ հանդես են գալիս որպես հատուկ նորմեր, որոնք չպետք է հակասեն Սահմանադրության և սահմանադրական օրենքների դրույթներին: Հատուկ ընդգծվում է նաև ընդհանուր սահմանադրական նորմերի և իրավունքի ճյուղային նորմերի դիալեկտիկական փոխկապակցվածությունը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի տեսական նշանակությունը նրանում է, որ մենագրության մակարդակով համակարգված ձևով երլուծության է ենթարկվել ՀՀ Սահմանադրության դերն ու նշանակությունը ազգային օրենսդրության և իրավունքի համակարգում, բացահայտվել է սահմանադրական ընդհանուր նորմերի և ճյուղային իրավունքի հատուկ նորմերի դիալեկտիկական հարաբերության հիմնախնդիրները, իսկ ստացված արդյունքները անշուշտ ճանապարհ կհարթի հետագա հետազոտողների և ուսումնասիրողների համար:

Գործնական առումով հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել պետական ապարատի աշխատակիցների, ինչպես նաև «Պետության և իրավունքի տեսություն», «Սահմանադրական իրավունք», «Ուսմունք սահմանադրության մասին», ընդհանուր և հատուկ դասընթացների ուսումնասիրության ժամանակ:

Հետազոտության արդյունքների փորձաքննությունը: Սույն ատենախոսական

աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ տեղի է ունեցել նաև աշխատանքի քննարկումը և երաշխավորումը: Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են ստացել հեղինակի մի շարք գիտական հրապարակումներում:

Աշխատանքի կառուցվածքը: Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, վեց ենթագլխից, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից:

Գլուխ 1

Սահմանադրության կոնցեպտը և գործող օրենսդրության համակարգի ընդհանուր բնութագիրը

1.1. Սահմանադրության կոնցեպտը. պատմատեսական ասպեկտները

Սահմանադրության, որպես պետության հիմնական օրենքի ձևավորումն ու զարգացումն ունի երկարաձիգ տարիների պատմություն, որի հիմնախնդիրը մշտապես գտնվել և շարունակվում է գտնվել իրավաբան-պատմաբանների, իրավաբան -տեսաբանների, սահմանագրագետների, քաղաքագետների գիտական հետաքրքրությունների կիզակետում[13]:

Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում սահմանադրությունների և սահմանադրական ակտերի երևան գալը պայմանավորված է պատմաքաղաքական և սոցիալ-տնտեսական համալիր գործոններով: Այս առումով, առաջին սահմանադրությունները՝ որպես ազատական-իրավաբանական իրավամտածողության արդյունքներ, ուղղված էին գաղութատիրության, ավատական միահեծան կարգերի և հասարակության դասակարգային շերտավորման դեմ: Սահմանադրությունները երևան եկան հաստատելու հասարակության բոլոր անդամների ազատությունը և հավասարությունը, բոլորի հավասարությունը օրենքի և դատարանի առջև, օրենքի գերակայությունը հասարակական հարաբերությունների բոլոր ոլորտներում և վերահսկելի պետական իշխանություն:

Ազատական-իրավաբանական հայեցակարգի ձևավորումը Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում գերակա դարձրեց մարդու պատիվն ու արժանապատվությունը, բնական և անօտարելի իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանությունը, որոնք իրենց իրավաբանական ամրագրումը ստացան Ազատությունների Մեծ խարտիայում (1215թ.), 1689թ. Իրավունքների

---

[13] Մանրամասն տես՝ **Հարությունյան Գ.Գ.** Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատարակություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Գիրք առաջին: Դասագիրք բուհերի համար: Պատ. խմբ. պրոֆ. Ն.Ա. Այվազյան, Երևան, 2016, էջ 57-106, Хабриева Т.Я., Чиркин В.Е. Теория современной конституции. М., 2005, Конституция в XXI веке. Сравнительно-правовое исследование. Отв. Ред. В.Е. Чиркин. М., 2014 և այլք:

մասին օրինագծում (երկուսն էլ Անգլիայում), «Անկախության մասին» հռչակագրում՝ Ամերիկայում, ԱՄՆ-ի Սահմանադրությունում (1787թ.) «Մարդու և քաղաքացու իրավունքների մասին» ֆրանսիական հռչակագրում (1789թ.), որում մասնավորապես նշված էր, որ «Այն հասարակությունը, որում ապահովված չեն իրավունքի երաշխիքները և չկա իշխանությունների բաժանում, չունի Սահմանադրություն» (հոդվ. 6)[14]:

Սահմանադրության առկայությունը իրավական համակարգում պայմանավորեց հասարակական կյանքում ժողովրդավարության սկզբունքների, մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված պաշտպանությունը:

Հայ իրականության մեջ, ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը. «V դարի վերջերին հայ իրականության մեջ քննության առարկա հիմնահարցի տեսանկյունից տեղի է ունենում բացառիկ կարևոր իրադարձություն: Եթե նախկինում ազգային-եկեղեցական ժողովների հրավիրման նախաձեռնողը եղել է եկեղեցին՝ նպատակ ունենալով հանրային կյանքի բոլոր ոլորտները «վերանորոգել», ապա V դարում այդպիսի նախաձեռնություն է դրսևորում Վաչագան թագավորը... (Աղվանքի) ժողովի արդյունքը եղավ Կանոնական սահմանադրության ընդունումը:

Պատմագրության կողմից 21 հոդված բովանդակած այդ Սահմանադրության ընդունման ժամկետ է համարվում 488 թվականը»[15]:

Այնուհետև հայ սահմանադրական միտքը իր հետագա զարգացումը ստացավ՝ ավատական ժամանակաշրջանում՝ «Կանոնագիրք հայոց»-ում, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի Դատաստանագրքերում, իսկ նոր ժամանակաշրջանում՝ 1773թ. Հնդկաստանի Մադրաս քաղաքում հայր և որդի Շահամիրյանները նախաձեռնում և 1788 թ. ավարտին են հասցնում իրավունքի բացառիկ մի հուշարձան՝ «Որոգայթ փառաց»՝ անկախ Հայաստանի 521 հոդվածից կազմված սահմանադրական նախագիծը:

Եվ ինչպես նշում է Գ. Հարությունյանը. «Այս աշխատասիրությունը

---

[14] Տես՝ История государства и права зарубежных стран. Том 2. 3-е изд. Отв. ред. Н.А. Крашенинникова. М., 2006, с. 163.

[15] Տես՝ **Հարությունյան Գագիկ,** Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և. ժամանակի մարտահրավերները: Վերահրատարակություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, էջ 81-82:

հասարակական-իրավական մտքի պատմության եզակի ձեռքբերումներից է, որում որոշակի համակարգով առաջադրված գաղափարները, տեսական խոր ընդհանրացումների արդյունք լինելուց զատ, միջազգային սահմանադրական զարգացումների անկյունաքարային արժեք են»[16]:

Այնուհետև հայ սահմանադրական միտքը և պրակտիկան իրենց զարգացումն առաջին Հանրապետության սահմանադրական օրենսդրությունում, Խորհրդային Հայաստանի երեք սահմանադրություններում (1922, 1937 և 1978թթ.), ինչպես նաև Հայաստանի երրորդ Հանրապետության 1995թ. հանրաքվեով ընդունված Սահմանադրությունում (2005 և 2015թթ. փոփոխություններով):

Ինչպես սկզբում նշել էին, սահմանադրության կոնցեպտը իր էվոլյուցիոն զարգացումն է ստացել Արևմտքում՝ եվրոպական և ամերիկյան սահմանադրական ուսմունքներում և սահմանադրական պրակտիկայում:

Ինչպես նշում է Մ.Վ. Իլյինը «Բառեր և իմաստներ» աշխատանքում, սահմանադրության կոնցեպտը հասունացել է ավելի լայն ու հիմնարար աշխատանքի՝ քաղաքական ամբողջության կամ համակարգի ներսում: Ի սկզբանե սկսեցին տարբերակվել հենց քաղաքական ամբողջությունն ու դրա կազմակերպման ու գոյության հիմնական սկզբունքները[17]:

Ինչ վերաբերում է սահմանադրական իրավունքին, ապա որպես գիտություն այն իր մեջ ներառում է իրավունքի տվյալ ոլորտի հետ կապ ունեցող հետազոտողների տեսություններ, կոնցեպցիաներ, հայացքներ, ինչպես նաև գործող և նախորդ օրենսդրության վերլուծության արդյունքներ: Սահմանադրական իրավունքը միշտ էլ սերտորեն կապված է եղել հասարակական այլ գիտությունների հետ (քաղաքագիտություն, փիլիսոփայություն, սոցիոլոգիա), ինչպես նաև աստվածաբանության հետ: Հաշվի առնելով, ընդհուպ մինչև մեր օրերը, կրոնական ինստիտուտների որոշակի ազդեցությունը մարդկային քաղաքակրթության քաղաքական զարգացման վրա, կարելի է պնդել, որ սահմանադրական իրավունքը, ամբողջական զարգացման նախադրյալներ ստացել է միայն XVII դարում: Եթե

---

[16] Տես՝ **Հարությունյան Գ.,** նշվ. աշխ., էջ 120:

[17] Տես՝ **Ильин М.В.** Слова и смысли. Опыт описания ключевых политических понятий/ М.В. Ильин, М. РОССПЭН, 1997, էջ 310:

սահմանադրական իրավունքի սահմանմանը մոտենանք բառացիորեն, ապա կարելի է ասել այն մասին, որ դրա վերջնական ձևավորումը տեղի է ունեցել սահմանադրության առաջացման հետ մեկտեղ:

Այսպիսով, չնայած, որ սահմանադրական իրավունքը ձևակերպվել է ոչ շատ վաղուց, ակնհայտ է, որ պետական կառավարման պաշտոնական ձևակերպման մասին գաղափարներն արտահայտվել են շատ ավելի վաղ: Ժամանակակից Իրաքի տարածքում 1877 թվականին իրականացված պեղումները ֆրանսիացի հնագետ Էռնեստ դե Սարզեկի կողմից, թույլ տվեցին բացահայտել օրենքների ժողովածուի գոյության վկայությունը, որը հրապարակվել էր շումերյան արքա Ուրուինիմգինի կողմից[18] մ.թ.ա. մոտավորապես 2300 տարի առաջ: Սա հայտնի փաստաթղթերից հնագույնն է, որը շումերյան քաղաքակրթությունների ու այլ խնդիրներով հետաքրքրվող գիտնականների կարծիքով, մասնակիորեն կանոնակարգել է իշխանությունների գործունեությունը, որոշակի իրավունքներ էր սահմանում ենթակաների համար, օրինակ իջեցված հարկեր այրիների ու որբերի համար: Ավելի ուշ, օրենքների ժողովածուն, դարձավ տարածված երևույթ, նման օրենքներ հրապարակեցին թագավորներ Ուր-Նամմուն[19], Համուրաբին, ինչպես նաև խեթերն ու ասորացիները:

Ինչպես պնդում է ռուս հետազոտող Պ. Բարենբոյմը, առաջին գրված սահմանադրությունն ի հայտ է եկել նոր ժամանակաշրջանից գրեթե երկու հազար տարի առաջ ու հրատարակվել է դատավորների ու Սամուել մարգարեի կողմից՝ հին Իսրայելում միապետության ինստիտուտի ներդրման ժամանակ:[20]

---

[18] Ուրուինիմգինան շումերական Լագաշ պետության թագավորն է, ով թագավորել է մ.թ.ա. 2318- 2311 թթ-ին:Ուրոփնիմգինայի կառավարման օրոք իջեցվեցին հարկերն ու վերջ դրվեց չինովնիկների կամայականությանը, ովքեր իրենց կաշառքներով ու բռնություններով տանջում էին ժողովրդին: Մասնավոր անձանց կողմից յուրացված բոլոր հողերը վերադարձվեցին աստվածներին: Մանրամասն տես՝**Рыжков К.В.** Все монархии мира. Древный Восток/ **К.В. Рыжковым.,** Вече, 2006:

[19] Ուր-Նամմու՝ Շումերի և Աքքադի թագավոր, ով կառավարել է Ուր քաղաքում՝ մ.թ.ա. 2112-2094 թթ.-ին: Մանրամասն տես՝ **Рыжков К.В.** Все монархии мира. Древный Восток/ **К.В. Рыжковт-М.,** Вече, 2006:

[20] Տես՝ **Баренбойм П.** Древнеегипетские корни Библейской Конституции/ П. Баренбойм// Российская юстиция. 199, N 1, էջ 19: Գրեթե նույն գաղափարներն է արտահայտել ամերիկացի հայտնի հետազոտող Դ. էլեյզերը: Տե՛ս օրինակ՝ Elazar D.J. Covenant and Civil Society.The Constitutional Matrix of Modern Democracy/ D.J. Elazar. New Brunswick. N.J. Transaction Publishers, 1998; Elizar D.J. Covenant and Constitutionalizm: The great frontier and the matrix of federal democracy/D.J. New Brunswick. N.J. Transaction Publishers, 1998:

Տվյալ փաստաթղթի տարբերությունը մյուս, այդ թվում ավելի հին օրենսգրքերից կայանում է նրանում, որ դրանում առաջին անգամ շարադրվել ու սահմանվել են կառավարչի իրավունքները: Այս սահմանադրության նախնական տեքստը, գծագրվել է պապիրուսի կամ կաշվե գլանի վրա, իսկ այսօր դրա բովանդակությունը հայտնի է աստվածաշնչյան վերարտադրության մեջ:

Աստվածաշնչում է պարունակվում նաև մինչև հռոմեական իրավունքի ստեղծումը անտիկ շրջանի համար առավել առաջադեմ իրավական օրենսգիրքը: (Սամուելի սահմանադրությունը)[21]:

Ընդ որում, հարկավոր է շեշտել, որ Սամուելի սահմանադրությունը և մինչև Նոր ժամանակները ձևավորված նմանատիպ այլ փաստաթղթեր, լավագույն դեպքում հանդիսանում են այն երևույթի նախատիպը, ինչը մեր օրերում սահմանադրություն ենք անվանում: Այս փաստաթղթերը հիշատակման արժանի են այն պատճառով, որ պարունակում էին սահմանադրական կարևոր գաղափարներ, որոնք արդյունքում զարգացել ու դարձել են սահմանադրական իրավունքի փաստաթղթային մասը: Նման գաղափարները, մասնավորապես ենթադրում էին կառավարիչների իշխանության սահմանափակումը, սկզբունք, որը հիմնարարներից մեկն է հանդիսանում սահմանադրության ժամանակակից կոնցեպտի ընկալման գործում:

Սահմանադրական որոշ գաղափարներ են առկա նաև Պլատոնի և Արիստոտելի աշխատանքներում: Ա.Մ. Բարնաշովի մենագրության մեջ[22], առաջարկվում է իշխանությունների բաժանման ուսմունքի պատմական արմատների հետաքրքիր վերլուծություն՝ սկսած Պլատոնից, Արիստոտելից և Պոլիբիայից: Հեղինակը հղում է կատարում Պլատոնի գաղափարներին, ով օրենսդրությունը, կառավարումը և արդարադատությունը տարբերակում էր, որպես պետական գործունեության տեսակներ, ինչպես նաև մեջբերումներ է կատարում Արիստոտելի աշխատանքներից, ով առանձնացնում էր օրենսդիր մարմինը, վարչական մագիստրատուրան և դատական մարմինները: Խորհրդային հետազոտող Վ.Վ. Աբաշմաձեն նշում էր, որ «իշխանությունների բաժանումը նույնքան հին է, որքան

---

[21] Տես՝ **Примаков Д.Я.** История еврейского и израельского права. М., 2015. էջ 25-26:
[22] Տես՝ **Барнашов А.М.** Теория разделения власти; становление, развитие, приминенние /А.М. Барнашов Томск. Изд-во Томского ун-та, 1998:

պետությունն ու իրավունքը»:[23] «Աթենական քաղաքականություն», «Քաղաքականություն» և «Նիկոմաքյան էթիկա» աշխատանքներում, Արիստոտելն առանձնացրել է կառավարման «լավ» և «վատ» համակարգերը ու եկել այն եզրակացության, որ օպտիմալ է համարվում միապետության, ժողովրդավարության ու արիստոկրատիայի համադրությունը:

Ինչպես Պլատոնը, այնպես էլ Արիստոտելը խոսում էին «կատարյալ» պետության մասին, այսինքն տալիս էին խնդրի դոկտրինալ մեկնաբանությունը:[24]

Դրա հետ մեկտեղ, երկու հին հունական մտածողների ներդրումը քաղաքական գիտության մեջ, ավելի քան նկատելի է: Նրանց մտքերը հիմք հանդիսացան, որի վրա արևմտյան իրավագիտության և քաղաքագիտության մեջ ձևավորվեց ուժեղ սահմանադրական ավանդույթ, որը նախատեսում էր հատուկ ինստիտուտների առկայությունը՝ քաղաքական հաշվեկշիռ պահպանելու և բռնատիրությունը կանխարգելելու համար: Հնարավոր է, որ հենց այս պատճառով է, որ նման ինստիտուտների պակասն առավել հաճախ դրսևորվում է այն երկրներում, որոնք արևմտաեվրոպական տարածաշրջանին չեն դասվում: Աֆրիկայում, Ասիայում, Հարավային Ամերիկայում ներկայումս գոյություն ունեն այնպիսի ռեժիմներ, որոնք գերմանացի հայտնի պատմաբան Կառլ Վիտֆելը՝ իր «Արևմտյան բռնատիրություն» դասական աշխատանքում, բնութագրել է որպես «համընդհանուր իշխանության» ռեժիմներ կամ «հիդրավլիկ քաղաքակրթություններ»:[25] Նման քաղաքականություններում, նշում է Վիտֆոգելը, սահմանադրությունը «տրվում է վերևից, կառավարիչները... ստեղծում, պաշտպանում ու չափում են հասարակությունը, ոչ թե որպես վերահսկվող գործակալներ, այլ որպես նրանց ղեկավարներ»:[26] Վիտֆոգելի աշխատանքում թույլ տեղ է հանդիսանում մյուս երկրների հակադրությունը արևմտյան աշխարհին՝ առանց ազգային

---

[23] **Абашмадзе В.В.** Учение о разделении государственной власти и его критика/ **В.В.Абашмадзе.** Тбилиси; Сабчота Сакартвело, 1972, էջ 4:

[24] **Баренбойм П.** 3000 лет доктрины разделения властей. Суд. Сьюера/ **П. Баренбойм.** М. РОССПЭН, 2003, էջ 42:

[25] «Հիդրավլիկ քաղաքակրթություններ» տերմինն առաջարկել է ինքը՝ Վիտֆոգելը: Դրա հետ մեկտեղ նա նշում էր, որ այս կամ այն տարածաշրջանի բոլոր երկրների քաղաքական ռեժիմները չի վերագրում «հիդրավլիկների» թվին:

[26] Տես՝ **Wittfogel K.** Oriental Despostism/K. Wittfogel. New Haven; Yale University Press, 1957. էջ 102:

յուրահատկությունն հաշվի առնելու:

Հին հռոմեացիները, համաձայն Մ.Վ. Իլյինի, ընդգծում էին համոզիչ իրային այն բնույթը, որը կարող էր ունենալ և՛ բնական (constitution rei republicae) և՛ արհեստական (ordo rei republicae), և՛ վերացական (forma rei republicae) բնույթը, ինչի պատճառով էլ գիտակցությամբ հեշտորեն ընկալվում էր՝ օրենքի համընդհանուր սխեմաների միջոցով:[27] Հենց հռոմեացիների մոտ գոյություն ուներ «constitutio» բառը, որը տարբեր տարբերակումներով օգտագործվում է մինչ օրս: Այն նշանակում էր, իրավունքի աղբյուր հանդիսացող, կայսերական կարգադրույթների տարբեր տեսակներ (էդիկտներ, մանդատներ, դեկրետներ և այլն):

Նախասահմանադրական կարգերը տարածված են եղել ոչ միայն Եվրոպայում: 622 թվականին Մերձավոր Արևելքում, պայմանագիր կնքվեց Մուհամեդ մարգարեի մահմեդական համայնքի և Մեդինայի բնակիչների միջև, որը ստացավ «Մեդինյան սահմանադրություն» անվանումը: Այս փաստաթուղթը կոչված էր դադարեցնել Մեդինայի սահմաններում որոշ կլանների միջև բախումները ու կանոնակարգել հարաբերությունները մահմեդականների և նրաց մոտ կանգնած կրոնական այլ հավաքների այլ ներկայացուցիչների միջև:

Ուսումնասիրելով սահմանադրության պատմությունը, արևմտյան և մերձավոր արևելյան նախադեպերի հետ, հարկավոր է հիշատակել նաև Ճապոնիան, որտեղ 604 թվականին Սետոկու արքայազնի կողմից հրատարակվեց «Տասնյոթ հոդվածի սահմանադրությունը»: Սակայն, այս սահմանադրությունը կանոնակարգում էր ոչ այնքան պետական կառավարման սկզբունքները, ինչն ակնկալում ենք ժամանակակից հիմնական օրենքից, որքան պետական ծառայողների և ենթակաների վարքագծի բարոյա-էթիկ չափորոշիչները՝ բացարձակ միապետությունում: Փաստաթղթի բարոյական բնույթը պայմանավորված է այն ազդեցությամբ, որը Սետոկոկույի ու նրա ժամանակակից Ճապոնիայի վրա գործել է բուդդայականությունը: Ամերիկյան մայրցամաքում 1090-1150 թթ-ին, ստեղծվեց վեց հնդիկ ժողովուրդների միությունը, որի հիմքում ընկած էր Գայ էնեշա Գո՛Նա-ի կամ Աշխարհի մեծ օրենքի բանավոր ավանդույթը, որն այսօր առավել հայտնի է

[27] Տես՝ **Ильин М. В.** Слова и Смысли. Опыт описания ключевых политических понятий/М.В. Ильин. М. РОССПЭН, 1997. էջ 314:

Իրոկեզների լիգայի սահմանադրություն անվամբ: Կարևոր է նշել, որ Մեծ օրենքի երրորդ սկզբունքը միանգամայն արդիական է նաև այսօր, այն, վկայում է նաև այն մասին, որ միության մեջ մտնող ժողովուրդներին պահանջվում է ճիշտ այնքան իշխանություն, որքան անհրաժեշտ է համադաշնության խաղաղության ու դրա անդամների բարեկեցության համար[28]:

Նախասահմանադրական փաստաթղթերի ստեղծման գործում, որոշակի հաջողությունների են հասել նաև աֆրիկյան ղեկավարները: Մալի կայսրության սահմանադրությունը[29] ամրագրում էր միասնական դաշնության շրջանակում, մի շարք մանդինգյան ցեղերի միասնական դաշնության գոյությունը: Այս փաստաթուղթը[30] չորս բաժին էր պարունակում հասարակական կազմակերպությունների, սեփականության իրավունքների, բույսերի ու կենդանիների պաշտպանության, ինչպես նաև ենթակաների անձնական պատասխանատվության մասին: Այս սահմանադրության գլխավոր առավելություններից է հանդիսանում այն հանգամանքը, որ այն դարձավ մարդու իրավունքների առաջին ազդարարներից մեկը ոչ միայն Աֆրիկայում, այլև ողջ աշխարհում: Ինչ վերաբերում է քաղաքական կազմակերպմանը, ապա սահմանադրության առկայության շնորհիվ, Սալիի կայսրությունը իր տարածքում տիրապետում էր իրավական միակ դաշտին, ինչը թույլ էր տալիս պահպանել միակ օրենքներն ու կանոնները: Որոշ իրավունքներ հռչակվեցին նաև կանանց ու ստրուկների համար, ինչն այն ժամանակ, բնականաբար, նորարություն էին հանդիսանում: Սահամանադրական փաստաթղթի մյուս նախատիպը, այդ ժամանակների նորարարությունը հանդիսացավ Ֆետա-Նեգեստը[31], որը որպես հիմնական օրենք, սկսեց օգտագործվել Եթովպիայում՝ Սարցի-Դենգել կառավարչի տիրապետությունից ի վեր: Ֆետա-Նեգեստը, որի անվանումը, ռուսերեն լեզվով

---

[28] Տես՝ Конституция Лиги Ирокезов: **Гай Энэша Го'На** (Великый Закон Мира) Перевод **А. Канева//** Մուտք՝ http://www.mesoamerica.ru/indians/north/gayanashagowa.thml.

[29] Մալիի կայսրությունը գոյություն է ունեցել 1235 1645 թթ-ները՝ Արևմտյան Աֆրիկայի ժամանակակից մի շարք պետությունների տարածքում ու տարածքով համադրելի է Արևմտյան Եվրոպայի հետ:

[30] Konstitucia Imperii Mail//Revim dostupa; http;//wildafao.org//IMG/pdf/The-CHARTER-OF-KURUKAN-FUGA-Anglais-1-pdf

[31] Տես՝ Fetha Nagast: The Law of the Kings/English Translation from Ge'ez by Abba Paulos Tzabua, and edited by Peter L. Strauss. Addis Ababa; Faculty of Law, Haile Sellasive University, 1968. էջ 339:

թարգմանաբար նշանակում է «Թագավորների գիրք», երկար ժամանակ շարունակում էր մնալ Եթովպիայի հիմնական օրենքը, միայն 1931 թվականին, դրան փոխարինեց սահմանադրությունը, որն իր ժողովրդին նվիրեց կայսր Խայլե Սելասիեն:

1100 թվականին, Անգլիայում, Հենրի 1-ին արքայի կողմից ստորագրվեց Իրավունքների առաջին խարտիան: Այն միապետին պարտադրում էր ազնվականության և հոգևոր ծառայողների հետ շփման ժամանակ պահպանել մի շարք օրենքներ: Այն հանդիսանում է բրիտանական սահմանադրական ավանդույթի հիմքում դրված առաջին քարը: Իրավունքների առաջին խարտիան դարձավ ավելի հայտնի փաստաթղթի՝ Իրավունքների մեծ խարտիայի նախակերպարը, որն ընդունվեց Անգլիայում 1215 թվականին՝ Յոհան Հողազուրկի կառավարման տարիներին: Շատ հետազոտողների կարծիքով, 1215 թվականի խարտիան, այսօր ևս ազդեցություն է գործում սահմանադրական իրավունքի վրա, նախ և առաջ այն պատճառով, որ մտնում է բրիտանական սահմանադրական օրենքների ժողովածուի մեջ: Գոյություն ունեցող կարծրատիպն այն մասին, որ հենց Իրավունքների մեծ խարտիան է առաջին անգամ սահմանափակել միապետի իշխանությունը Անգլիայում, այնքան էլ ճիշտ չէ: Նման փաստաթուղթ 115 տարով ավելի շուտ դարձավ Իրավունքների առաջին խարտիան: Կարևոր է ընդգծել նաև, որ Իրավունքների մեծ խարտիան միասնական փաստաթուղթ չի համարվում ու գրեթե չէր սահմանափակում միապետի իշխանությունը, անկախ նրանից, որ պաշտոնապես ուժի մեջ էր գտնվում: Իրավունքների մեծ խարտիայի մեջ հատուկ նշանակություն ունի 39 հոդվածը, որում արգելվում է ֆեոդալներին, որպես ազատ մարդկանց բանտարկությունը, կալանավորումը, տիրույթներից զրկելը, աքսորն ու իրավունքների այլ ոտնահարությունը: Հենց այս հոդվածն էր, որ Մեծ խարտիային տվեց հիմնարար, սահմանադրական բնույթ, այն արդիական դարձավ անգլիական բուրժուական հեղափոխության ժամանակ: Ընդհանուր առմամբ, հետազոտողները ենթադրում են, որ Իրավունքների մեծ խարտիայի ազդեցությունը նկատվում է աշխարհի ժամանակակից շատ սահմանադրություններում, ներառյալ՝ ամերիկյանը:

Ամեն դեպքում, մինչև XVII դարը, աշխարհում ժամանակակից ընկալմամբ սահմանադրություն, որը կանոնակարգում էր քաղաքացիների իրավունքներն ու

ազատությունները, ինչպես նաև պետական կառուցվածքը, գոյություն չուներ. նախասահմանադրությունները, որոնց մասին խոսեցինք վերևում, չէին հանդիսանում համընդհանուր համաձայնության առարկա, քանի որ մշակվում ու ընդունվում էին կառավարիչների կողմից՝ կամ միանձնյա, կամ ազնվականության հետ համագործակցությամբ: Ընդ որում, ազնվականությունը հանդես էր գալիս ոչ այնքան միապետի կողմից, որքան պահպանում էր սեփական շահերը: Եվ շատ հաճախ նման փաստաթղթերի ընդունումը, նախաձեռնվում էր հենց ազնվականության կողմից ու նպատակ էր հետապնդում միապետի առաջ սեփական նպատակներն ու շահերը: Բնակչությունը, որը երբեմն, անգամ պատկերացում չուներ սահմանադրական փաստաթղթերի մասին, այս գործընթացներում մասնակցություն գրեթե չէր ունենում:

Շատ փորձագետներ ենթադրում են, որ ներկայումս գոյություն ունեցող պետություններից, առաջինը Սան-Մարինոն էր, որ ընդունեց գրավոր սահմանադրությունը: 1600 թվականին լատիներենով գրված ու վեց գիրք[32] պարունակող ստատուտները, մշակված են 1300 թվականի Քաղաքային ստատուտի հիման վրա ու, ամեն ինչից զատ, վերջինից փոխառել են Վաթսունի խորհրդի գաղափարը[33]: Ոչ այնքան ստատուտների չորսդարյա պատմությունը, որքան հռոմեական իրավունքի համակարգը գնացող արմատներն են, որ ստիպում են Սան-Մարինոյի սահմանադրությունը, ներկայումս գոյություն ունեցողների շարքում, համարել հնագույնը: Մյուս կողմից, ստատուտներն ընդունվում էին մինչև այն ժամանակները, երբ Եվրոպայում սկսեցին զարգանալ հասարակական պայմանագրի, իշխանությունների բաժանման, քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները հարգելու կոնցեպցիաները: Հենց այս պատճառով է, որ 1974 թվականին Սան-Մարինոյի սահմանադրության կազմի մեջ մտավ քաղաքացիական իրավունքների հռչակագիրը, որն ամրագրում էր այդ պետության ենթակաների իրավունքներն ու սահմանում Սան-Մարինոյի քաղաքական համակարգի նկատմամբ ազգային ինքնավարության ու իշխանությունների բաժանման ուսմունքի

[32] Վաթսունի խորհուրդը Սան-Մարինոյի մինչ օրս գործող պառլամենտի անվանումն է:

[33] Տես՝ Subverteth the fundamental law. Huges A. The Execution of Charles I/A. Huges // Մուտք գործելու ռեժիմը, http.bbc.co.uk/history/british/civil-war-revolution/charlesi-execution—shtml.

կիրառության կարգը: 2002 թվականին հռչակագիրը ուղղումների էր ենթարկվում՝ իշխանության մարմինների գործունեության կարգը սահմանելու նպատակով:

Առաջին անգամ, սահմանադրություն բառը, ժամանակակից իմաստին առավել մոտ նշանակությամբ արտահայտվել է Անգլիայում 1647 թվականին՝ անգլիացի դատավոր Ջեյմս Ուիթլոքի կողմից՝ Կառլ I միապետի գործը քննելու ժամանակ, միապետն, ամեն ինչից զատ, մեղադրվում էր «թագավորության հիմնական օրենքը» խախտելու մեջ[34]: Տերմինաբանության ոլորտում, նման առաջընթացները զարմանալի չեն, եթե հաշվի առնենք 1640-1660 թթ. ընկած ժամանակահատվածում երկրում տիրող քաղաքական իրավիճակը, երբ Անգլիան վերապրեց քաղաքացիական պատերազմը, արքայի մահապատիժն ու մի քանի նոր ռեժիմներ: Ինչպես հայտնի է, արդյունքում այս իրադարձությունները հանգեցրին միապետության վերածննդին ու Սթյուարտների դինաստիայի վերականգնմանը: Ամեն դեպքում, նշված ժամանակահատվածի համար կուտակվել է քաղաքական մեծ փորձ, որն իր ծավալով, նորարարությամբ ու մասշտաբով գերազանցեց, թերևս միայն Ֆրանսիական հեղափոխության ժառանգությունը: Եթե նկատի ունենանք, բացառապես, սահմանադրական պրակտիկան, ապա այն կարելի է նշել, որպես առավել բարենպաստը քաղաքական ողջ պատմության մեջ:[35] Կարող ենք պնդել, որ ամերիկյան ու ֆրանսիական հեղափոխությունների դարաշրջանների մտածողների գաղափարները, իրենց արմատներով գնում են հենց դեպի հեղափոխական Անգլիա: Շատ հետազոտողներ, ժամանակակից իմաստով, սահմանադրականության ձևավորման ժամանակահատված են համարում XVII դարի սկիզբը:[36] Հենց այս ժամանակ է, որ արևմտյան հասարակական- քաղաքական ուսմունքներում ու պրակտիկայում սկսվեց սահմանադրականության հիմքը կազմող երկու գաղափարների մաքրազտումը: Առաջին հերթին, պետության իշխանության սահմանափակումն է հասարակության նկատմամբ, անձի իրավունքների հարգումը: Երկրորդ հերթին, հենց պետական մեքենայի ներսում տարբեր ինստիտուտների

---

[34] Տես՝ **Wormuth F.D.**The Origins of modem constitutionalism/F.D. Wormuth. N.Y. Harper & Brothers, 1949. էջ 43:

[35] Տես՝ **Lane J.E.** Constitutions and Political Theory/ **J.E. Lane** Manchester; Manchester University Press, 1996, էջ 25:

[36] Տես՝ **Крусс В.И.** Конституционализация права: основы теории. М., 2016. էջ 9-13:

միջև իշխանությունների բաժանման սկզբունքի օգտագործումն է: Երկու գաղափարներն էլ արմատներ ունեն դեռևս բնական իրավունքի միջնադարյան ուսմունքում ու գոյություն ունեցող ավանդույթներով ու ի օգուտ հասարակության բարեկեցության՝ քաղաքական իշխանության սահմանափակման գաղափարում:[37]

Կարելի է առանձնացնել մի քանի տեսություն, որոնք առկա են սահմանադրականության հունում, նախ և առաջ՝ այսպես կոչված, հակադրման տեսությունն է: Դրա ելակետային հիմքը, որը սերտորեն կապված է քրիստոնեական հայացքների[38] հետ, կայանում է նրանում, որ մարդիկ ունեն այն իշխանությանը հակադրվելու իրավունք, որը սահմանադրությանը չի ենթարկվում: Այս վարկածը, գոյություն ուներ, մասնավորապես, ֆեոդալական դարաշրջանի գերմանական իրավունքում, երբ միապետը, ով չի կատարում նախկինում կնքված համաձայնագրերն ու չի պահպանում ավանդույթները, կարող էր գահընկեց լինել: Երբ սովորույթներն ու ավանդույթները, իրենց տեղը զիջում էին գրավոր օրենքներին, ծագում էր ոչ անձնային քաղաքական կառուցվածքի գաղափարը, որը կարող էր ապահովել ողջ համակարգը և այն պահպաներ չարաշահումներից: Հաշվեկշռված ու արդյունավետ գործող սահմանադրությունը դրա համար ունի անհրաժեշտ բոլոր հատկանիշները:

Սահմանադրականության մյուս հենքը հանդիսանում է պայմանագրային տեսությունը, որը բխում է պուրիտանական գաղափարից այն մասին, որ կառավարիչների ձեռքում գտնվող իշխանությունը հանդիսանում է վստահության արտահայտություն՝ ենթակաների կողմից: Այս կանխադրույթը հարում է Ի. Այլտուգիայի «Քաղաքականություն» աշխատանքին, որում իրավունքի այս տեսաբանը, փաստացիորեն առաջին անգամ, առաջ քաշեց կոնսոցիացիայի գաղափարը, որին համապատասխան մարդիկ ու խմբերը միավորվում են՝ պակտի հիման վրա՝ վերադաս կազմակերպությունների տեղծման համար: Նման պակտը կարող է ներկայացվել սահմանադրության տեսքով, որը ոչ միայն ամրագրում է հենց պայմանագիրը, այլև սահմանում է կոնկրետ հասարակության քաղաքական

---

[37] Տես՝ **Lane J.E.** Constitutions and Political Theory/J.E. Lane Manchester; Manchester University Press, 1996, էջ 27-29:

[38] Տես՝ **Alen J. W.** A history of political thought in the sixtenth century/ J. W. Allen. L. Methuen & Co. Ltd., 1977:

կազմակերպման չափորոշիչները:

Պակտի նշված սկզբունքը, սույն աշխատանքում, կարող է որպես հիմնական կռվան հանդես գալ՝ կազուսները վերլուծության ենթարկելու ու հաջողություններն ու անհաջողությունները սահմանադրական կառուցվածքում ամրագրելու համար: Տվյալ պակտը ներկայումս խորհրդանշական հասարակական հարաբերություն է ներկայացնում, որը միմյանց միջև կնքում են ինչպես շարքային քաղաքացիները, այնպես էլ քաղաքական կարևոր գործիչներ: Վերջինների թվին են դասվում ինչպես ինքնուրույն քաղաքական լիդերները, այնպես էլ այն ինստիտուտները, որոնք ունեն յուրօրինակ առանձնահատկություններ ու շարժման սեփական ուղեծիրը՝ այս կամ այն պետության իրավաքաղաքական տարածության մեջ: Նման մոտեցումը մեզ թույլ է տալիս վերլուծության ինստիտուցիոնալ հեռանկարը կրել ուսումնասիրության ողջ ընթացքում ու ապահովել սահմանադրական գործընթացի ինչպես միկրո, այնպես էլ մակրո մակարդակները:

Գործնական տեսանկյունից, անձի իրավունքների ու ազատությունների պահպանության, միապետի իշխանության սահմանափակման, ինչպես նաև թագից անկախ օրենսդրությունների ամրապնդման կողմն ուղղված շարժերը, սկսվում են Անգլիայում (Մեծ Բրիտանիայում) այնպիսի փաստաթղթերի օգտագործմամբ, ինչպիսիք են Խաբեաս կորպուս ակտը (1679) և Իրավունքների մասին բիլը (1689 թ): Մեծ Բրիտանիայից հետո, նմանատիպ փաստաթղթեր ընդունվեցին նաև ԱՄՆ-ում և Ֆրանսիայում: Իրավունքների մասին բրիտանական բիլլի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ դրանում կանոնակարգվում են միապետի իշխանության սահմաններն ու քաղաքացիների կողմից բողոք-դիմումները ներկայացնելու պահաջները, ինչպես նաև նշված են քաղաքացիների կողմից թագի որոշակի գործողություններին հավանություն տալու անհրաժեշտությունը: Մենք կարող ենք ենթադրել, որ Մեծ Բրիտանիայի առաջնային դերը իրավունքները սահմանադրորեն ամրագրելու գործում, պայմանավորեց սահմանադրական փաստաթղթերի ու սահմանադրական իրավունքի հատուկ բնույթը այս պետությունում, առաջին հերթին՝ Մեծ Բրիտանիայի սահմանադրությունը կոդավորված չի հանդիսանում, իսկ երկրորդ հերթին՝ հիմնվում է ինչպես գրված, այնպես էլ չգրված աղբյուրների վրա: Գրավոր կոդիֆիկացված (կամ այլ կերպ ասած միասնական) փաստաթղթի

բացակայությունը որոշ հետազոտողների թույլ է տալիս հայտարարել Մեծ Բրիտանիայում սահմանադրության բացակայության մասին: Սակայն, եթե ուշադրություն դարձնենք սահմանադրական սկզբունքների իրական գործողությունը, փաստաթղթերի առկայությունը, ինչպես նաև ավանդույթների պահպանումը, չենք կարողանա խոսել տվյալ երկրում սահմանադրության ու սահմանադրական իրավունքի բացակայության մասին:

Ներկայիս նշանակությամբ «սահմանադրություն» եզրույթը սկսեց օգտագործվել XVIII դարում: Աշխարհում առաջին գրավոր սահմանադրությունը, որը համապատասխանում է հիմնական օրենքի մասին ժամանակակից պատկերացումներին, դարձավ ամերիկյանը, որն ընդունվել է 1787 թվականին: Եվրոպայում, առաջին երկրները, որ նման փաստաթուղթ ձեռք բերեցին, դարձան Լեհաստանն ու Ֆրանսիան: Ֆրանսիայում, դա 1793 թվականի հունիսի 24-ի սահմանադրական ակտն է,[39] որը կոչվում է նաև Յակոբինյան սահմանադրություն կամ մոնտանյարների սահմանադրություն, որը դարձավ այս պետության առաջին ժողովրդավարական սահմանադրությունը, որն այդպես էլ ուժի մեջ չմտավ: Ինչ վերաբերում է Լեհաստանին, ապա այն հաճախ անվանում են եվրոպական սահմանադրական շինարարության առաջատար-պետություն: Մինչև 1791 թվականի մայիսի 3-ը «սահմանադրությունը» Լեհաստանում նշանակում էր ցանկացած օրենսդրություն, որն ընդունվել էր Սեյմի կողմից: Սակայն, նույն օրը թագավորն ու Պոսպոլիտային պառլամենտը ընդունեցին առաջին կոդիֆիկացված եվրոպական սահմանադրությունն ու աշխարհում «տարիքով» երկրորդ ազգային սահմանադրությունը՝ ամերիկյանից հետո: Անգամ Ռուսաստանի, ու Տարգովիցյան համադաշնությունից նրա դաշնակիցների կողմից Պոսպոլիտային պարտությունից հետո, այս սահմանադրությունն իր հետքը թողեց եվրոպական գիտական ու քաղաքական էլիտաների միջավայրում, քանի որ իր ժամանակի համար միանգամայն առաջադեմ փաստաթուղթ էր: Այն մեծ նշանակություն ուներ Լեհաստանի քաղաքական մշակույթում, քանի որ սահմանադրական ինքնավարության, այլ երկրներին ու բլոկների ենթական լինելու

[39] Այս ակտը կազմված էր 124 հոդվածներից ու համեմատաբար համառոտ փաստաթուղթ էր:

ժամանակահատվածում, հիշեցնում էր իրական անկախության ու քաղաքացիական հասարակության մասին: Ստանիսլավ Օգոստոս (Պոնյատովսկի) թագավորը նշում էր, որ Մայիսի 3-ի սահմանադրությունը հիմնված է Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի սահմանադրական փորձի վրա, սակայն հաշվի է առնում երկու օրինակների սխալները, առավելագույնս ադապտացված է երկրի առանձնահատկություններին: Ներկայումս մայիսի 3-ը հանդիսանում է Լեհաստանի պետական տոնը: Դրա հետ մեկտեղ, հարկավոր է նշել, որ 1791 թվականի սահմանադրության կիրառումը կրում էր սահմանափակ բնույթ, չի բարելավել բնակչության հիմնական հատվածի դրությունը՝ հիմնականում արտոնություններ սահմանելով մագնատների, հոգևորականության ու ազնվականության համար:

Հասարակական կարգը, սկզբունքորեն չէր փոխվել ու կրում էր գերակայորեն ֆեոդալական բնույթ, չնայած, որ հեռանկարում, այս փաստաթուղթը նպաստում էր ֆեոդալիզմի քայքայմանը:

Կարևոր է նշել, որ առաջին սահմանադրությունների մշակումից հետո, հղումներ էին արվում հիմնականում երկու մտածողների՝ Ջ. Լոկի և Շ. Ա. Մոնտեսքյոի աշխատանքների վրա: Եթե առաջինն աշխատում էր անգլո-սաքսոնյան ավանդույթներով, ապա երկրորդը դասվում է արևմտյան սահմանադրական մտքի ուղղությանը: Նրանք ունեին քաղաքական տարբեր հայացքներ,[40] սակայն եկան միևնույն այն եզրահանգմանը, որը կայանում է օրենքի գերակայության, սահմանադրական կառուցվածքի վրա հիմնված՝ իշխանությունների բաժանման սկզբունքի ներդրման մեջ:

Ընդհանուր առմամբ, Ֆրանսիական հեղափոխությունից հետո, սահմանադրականությունը դարձավ իշխանության, այդ թվում միապետական օրինականացման համընդհանուր ընդունված ձև: Միաժամանակ, լայն մասշտաբային քննարկում ձևակերպվեց այն հարցի շուրջ, թե ի՞նչն է հարկավոր սահմանադրականություն ու դրա կիրառման ոլորտ անվանել: Ռուս հայտնի հետազոտող Ա.Ն. Մեդուշևսկին ենթադրում է, որ ֆրանսիական հեղափոխության ժամանակից ի վեր կարելի է առանձնացնել սահմանադրականության զարգացման

[40] Տես՝ **Локк Дж.** Два трактата о государственном правлении // Сочинения; В. 3-ь т. М. Мель, 1991. Т. 1 **Монтескье Ш. Л.** Дух Законов// Избранные произведения; В. 3-ь т. М. Политидат, 1955:

երկու ուղղություն՝ կառավարական ու հեղափոխական: Առաջին տարբերակը ենթադրում է, ըստ էության, սահմանափակ, «ի վերուստ տրված» սահմանադրություն: Որպես օրինակ կարելի է նշել Ֆրանսիական սահմանադրական խարտիան, որը հրատարակվել է Լյուդովիկոս XVIII- ի կողմից 1814 թվականին, Ճապոնիայի 1889 թվականի շնորհված սահմանադրությունը, 1906 թվականի Ռուսաստանի կայսրության հիմնական օրենքներն ու բոլոր մյուս փաստաթղթերը, որոնք որպես տեսական հիմք ունեին՝ ֆրանսիական խարտիան: Երկրորդ տեսակն ավելի շատ համապատասխանում է սահմանադրականության կոնցեպտի ոգուն, քանի որ կարող է իրականացվել հասարակության բուրժուական զարգացման շրջանակներում ու իշխանության վրա «ներքևից» ճնշում գործադրելու միջոցով: Տվյալ տեսակն ընդգրկում է այն սահմանադրությունները, որոնք Եվրոպայում և Ամերիկայում ձեռք են բերվել բուրժուական հեղափոխությունների ընթացքում XVIII-XIX դդ ընթացքում[41]:

Հայտնի հետազոտող Յան Էրիկ-Լեյնը սահմանադրականության շրջանակներում, առաջարկում է հոսանքների փոքր-ինչ այլ մեկնաբանություն: 1791 թվականի ֆրանսիական սահմանադրությունը ենթադրում էր սահմանադրական միապետության գոյություն, այն դեպքում, երբ չորս տարով ավելի վաղ լույս տեսած ամերիկյանը հանրապետության գոյությունն էր ենթադրում: Գոյություն ունի նաև սահմանադրականության երրորդ՝ բրիտանական տարբերակը, որը ենթադրում է չգրված, սակայն ոչ պակաս ազդեցիկ սահմանադրություն, որը հիմնված է պառլամենտարիզմի վրա: Այս մոդելի ազդեցությունն ուժեղանում էր նաև Մեծ Բրիտանիայի հզորությամբ: Լաբե Աեյնը և այլ հետազոտողներ կարծում են, որ, պառլամենտական ինստիտուտները կարող են սահմանափակ գոյություն ունենալ, ինչպես սահմանադրական միապետության, այնպես էլ հանրապեության պայմաններում:

XIX դարում, Եվրոպայում գերիշխում էին սահմանադրական միապետությունները՝ հանրապետությունների ոչ մեծ թվի դեպքում: Այս

ժամանակաշրջանում ամրապնդվեց ու սկսվեց իրագործվել միապետի

[41] Տես՝ **Медушевский А.Н.** Демокатия и автократизм; российский конституционализм в сравнительной перспективе/**А.Н. Медушевский.** М. **РОССПЭН** 1997, էջ 308-309:

իշխանության սահմանափակման միտումը: Շուտով լույս տեսան Շվեյցարիայի սահմանադրությունը (1809 թվ), Իսպանիայի (1812 թվ), Նորվեգիայի (1814 թվ), Պորտուգալիայի, Բրազիլիայի, Բելգիայի, Պյեմոնտի (Պյեմոնտյան ստատուտ 1848 թվ), Ավստրիայի (1867 թվ) և Գերմանիայի (1871 թվ) սահմանադրությունները: Առավել ժամանակակից ձևում, սահմանադրական միապետության տեսությունն արտահայտվել է Բենջամեն Կոնստանի կողմից մոտավորապես 1815 թվ-ին. նա միապետին ընկալում էր որպես պետության կայունության երաշխիք, ով վետոյի իրավունք ունի օրենքի հետ կապված խնդիրների, նախարարներին պաշտոնից հեռացնելու ու ներում շնորհելու հարցերում. Կոնստանը շեշտադրում էր պետության ղեկավարի անհատականությունը, նրան համարելով «ղեկավարող, սակայն՝ ոչ կառավարող», իշխանության հիմնական՝ օրենսդրական, գործադիր ու դատական ճյուղերի միջև յուրօրինակ հաշվեկշռող ու վերահսկող[42]:

Միևնույն ժամանակ, գոյություն ունեին ավտոկրատության բարձր աստիճան ունեցող՝ սահմանադրական միապետության ձևեր: Այստեղ, որպես օրինակ կարելի է նշել խարտիայի (սահմանադրության) միջոցով 1814 թվ-ին Ֆրանսիայում հաստատված ռեժիմները, գերմանական պետությունները՝ XIX դարում՝ Բավարիա, Վյուրտեմբերգ, Բադեն, Հեսսեն-Կասել, Սաքսոնիա և Հանովեր: Դրանք, սակայն, բռնատիրական չէին, ինչից կարող ենք ենթադրել, որ սահմանադրության առկայությունը չի ենթադրում ժողովրդավարության գոյությունը: Այս վարկածն ավելի արտահայտիչ ձևով հաստատվում է՝ ողջ աշխարհում ժամանակակից հասկացությունները վերլուծելու միջոցով: Ինչ վերաբերում է սահմանադրականությանը, ապա խոսքը գնում է ոչ թե ժողովրդավարության, այլ «խաղի կանոնների» մասին, որոնք նույնն են բոլոր գործող անձնանց համար, և համապատասխանաբար՝ փոխադարձորեն միմյանց պարունակող ինստիտուտների մասին:[43]

Լեյնի կոնցեպցիայում, որպես սահմանադրական միապետությունների

---

[42] Տես՝ **Lane J.E.** Constitutions and Political Theory/ **J.E. Lane** Manchester; Manchester University Press, 1996, էջ 63. Bryce J.Constitutions/J. Bryce Oxfod; Oxford University Press, 1997 (reprint by Gaunt); Hawgood J. A. Modem Constitutions since 1787/J. A. Hawgood. L. Mcmillan, 1987 (reprint by Fred B. Rothman &Co):

[43] Տես՝ **Constant B.** Political writings / B. Constant N. Y. Cambridge University Press, 1988, էջ 184:

այլընտրանք, հանդես են գալիս նախագահական հանրապետությունները: Այստեղ նախադեպեր դարձան ԱՄՆ-ն ու 1787 թվ-ի սահմանադրությունը: Կարևոր է նշել, որ հանրապետական հայացքներն այդ ժամանակ նոր չէին, քանի որ իրենց արմատներով գնում էին դեպի անտիկ շրջան, իսկ միջնադարից ի վեր, գոյություն ունեին հանրապետական համակարգերի մի քանի օրինակներ, օրինակ՝ Վենետիկում, Շվեյցարիայում, իսկ ավելի ուշ՝ Նիդեռլանդներում: Ուշադրություն չէր դարձվում կոլեգիալ նախագահական հանրապետության տեսքով առկա այլընտրանքներին, որն այսօր ունի Շվեյցարիան և փորձում էր ներդնել Ուրուգվայը (1918-1933 և 1952-1967 թթ-ին): Արդյունքում, ամերիկյան սահմանադրության ստեղծողները գերադասեցին երկրի ղեկավարի ընտրությունը՝ իրավասությունների սահմանափակ ժամանակ ունեցող ընտրողների կոլեգիայով: Ուժեղ նախագահության ամերիկյան մոդելը լայն տարածում է գտել ողջ աշխարհում: Այն ադապտացվել է նախկին իսպանական գաղութների կողմից՝ Լատինական Ամերիկայի երկրներում՝ XIX դարում[44], Ասիայի ու Աֆրիկայի երկրներում՝ Համաշխարհային երկրորդ պատերազմից հետո: Եվրոպայում, այս մոդելը կիրառվել է Ֆինլանդիայում (1919թվ), Չեխոսլովակիայում (1920թվ), Ֆրանսիայում (հանրապետության սահմանադրություն): Նման ադապտացիայի հետևանքները քայքայիչ եղան, ամերիկյանի նման զսպումների ու հակակշիռների գործող համակարգի բացակայության դեպքում, սկսեցին շեղումներ դիտվել դեպի ավտոկրատիայի, քաղաքականությանը՝ զինվորականների միջամտության, իշխանության ոչ սահմանադրական փոփոխությունների ավելացման կողմը:

Յա. Է. Լեյնի կարծիքով նաև չպետք է մոռանալ բրիտանական սահմանադրական մոդելը, որն ինքը համարում է սահմանադրական միապետության տարատեսակը ու անվանում է այն պառլամենտական միապետություն: Այս դեպքում, կարևոր դեր է խաղում պառլամենտի ստորին պալատը, այն դեպքում, երբ վերինը, որը հիմնականում կազմված էր ազնվականության ներկայացուցիչներից ու միապետը կատարում են առավելապես

[44] Տես՝ **Lane J.E.** Constitutions and Political Theory/j.E. Lane Manchester; Manchester University Press, 1996, էջ 64-65:

ներկայացուցչական գործառույթներ ու զուրկ են քաղաքական գործընթացների վրա օպերատիվ ազդեցության լծակներից: Պառլամենտարիզմը դարձավ միապետներին քաղաքական թատերաբեմից հեռացնելու միջոց՝ առանց հանրապետության հռչակման: Այս լույսի ներքո ապահովվում է սահմանադրական միապետությունից դեպի սահմանադրական հանրապետություն սահուն անցումը: Բացի այդ, այս մոդելը թույլ է տալիս օպտիմալ հարաբերություններ կառուցել իշխանության օրենսդրական ու գործադիր ճյուղերի միջև: XIX դարում բրիտանական մոդելը բավականին արագ տարածվեց ողջ աշխարհում և պառլամենտարիզմը սկսեց լայն կիրառություն ստանալ միապետություններում՝ Բելգիայում (1831 թվ), Նիդեռլանդներում (1848թվ), Նորվեգիայում (1884 թվ)[45], Դանիայում (1901 թվ), Շվեդիայում (1917 թվ): XX դարում, այս մոդելը, ձևափոխումներով, սկսեց, օգտագործվել նաև հանրապետություններում՝ Գերմանիայում (1919 թվ), Ավստրալիայում (1920 թվ), Չեխոսլովակիայում (1920 թվ), Լեհաստանում (1921 թվ), ինչպես նաև Լիտվայում, Լատվիայում և Էստոնիայում՝ 1920-1922 թթ. ընկած ժամանակահատվածում:[46] Ընդ որում, որոշ երկրներ Առաջին համաշխարհային պատերազմից հետո, հրաժարվեցին պառլամենտարիզմի ներդրումից՝ գերադասելով սահմանադրական միապետության պահպանումը (դրանց թվում են Բուլղարիան, Հարավսլավիան և Ռումինիան):

Արդյունքում, պառլամենտարիզմի արդյունավետությունը, որպես կառավարման ձև, կասկածի տակ դրվեց մի շարք երկրներում ավտոկրատ միտումների ամրապնդման պատճառով. Լեհաստանում սահմանվեց նախագահական (1926թվ), իսկ հետո նաև՝ գերնախագահական ռեժիմը (1935թվ): Նույնը տեղի ունեցավ Լիտվայում (1928 թվ), Լատվիայում և Էստոնիայում (1934թվ), Թուրքիայում (1922 թվ): Ավելին, օգտագործելով պառլամենտարիզմի մեխանիզմներն ու

---

[45] Տես՝ **Lane J.E.** Constitutions and Political Theory/ J.E. Lane Manchester; Manchester University Press, 1996, էջ 67-71, 85:

[46] 1884 թվ-ին Սթորթինգում մեծամասնությունը կազմող լիբերալները ստիպեցին պաշտոնաթող լինել պահպանողական վարչապետ Սելմերին: Քաղաքական այս նախադեպը Նորվեգիան դարձրեց իսկապես ուժեղ պառլամենտ ունեցող առաջին Սկանդինավյան պետությունը: Չնայած, որ Նորվեգիայի սահմանադրությունն ընդունվել էր դեռևս 1814 թվ-ին, մենք նշում ենք 1884 թվ-նը, քանի որ պառլամենտն իր ակտով առաջին անգամ բաց հակասության մեջ մտավ Շվեդ-նորվեգական ուինիայի թագավոր Օսկար 11-ի հետ: Արդյունքում, ճնշումն արքայի վրա մեծացավ և 1905 թվ-ին ունիան քայքայվեց, ինչը Նորվեգիան դարձրեց անկախ պետություն:

հնարավորությունները, Եվրոպայում, առաջաբեմ դուրս եկան առաջնորդները (լիդերները) իրենց երկրներում հաստատելով ֆաշիստական ռեժիմներ: Այսպես, նացիստական Գերմանիայում, 1933թվ.-ին Ռեյխստագի այրումից հետո հրապարակված դեկրետով ու մի շարք այլ օրենքներով, փաստացիորեն հեշտացվեցին Վեյմարյան հանրապետության սահմանադրության այն նորմերը, որոնք երաշխավորում էին քաղաքացիական իրավունքները, իսկ երկրում, ըստ էության, սահմանվեց միակուսակցական համակարգ: Իսպանիայում, 1931 թվ-ի սահմանադրությունը, որը մշակված է Մեքսիկայի 1917 թվ-ի ու Գերմանիայի 1919 թվ-ի սահմանադրության հիման վրա, կորցրեց իր ուժը գեներալ Ֆրանկոյի կողմից՝ քաղաքացիական պատերազմի ավարտից հետո, միապետական[47] ու ֆաշիստական ռեժիմ սահմանելուց հետո: Պորտուգալիայում «պառլամենտարիզմը» տևեց 7 տարի՝ 1919-1926 թթ-ը, այնուհետև ներմուծվեց նախագահական կառավարումը, իսկ 1933-ին՝ Նոր պետության ռեժիմը: Ինչ վերաբերում է Իտալիային, ապա այստեղ, թեև ուժեղ պառլամենտ ունեցող սահմանադրական միապետության պայմաններում, «բրիտանական» մաքուր պառլամենտարիզմ գոյություն չուներ, Մուսոլինիին հաջողվեց աստիճանաբար սահմանել անձնական իշխանության ռեժիմը: Այսպիսով, բոլոր դեպքերում, առկա էին սահմանադրություններ կամ հիմնական օրենքների ժողովածուներ, սակայն դրանք չէին նպաստում ժողովրդավարական կառավարման ինստիտուտների ու պրակտիկաների ամրապնդմանը:

Ակնհայտ է, որ սահմանադրական միապետությունների ու պառլամենտական ռեժիմների ներկայացված երկրային օրենքները, ինչպես նաև ավտորիտար «ետընթացների» սահմանները, ընդհանուր առմամբ համընկնում են ժողովրդավարականացման «ալիքների» պարթերականացման հետ, ինչն առաջարկվել է ամերիկացի հայտնի քաղաքագետ Ս. Խանտիգտոնի կողմից: Սույն համընկնումը վկայում է ժողովրդավարացման գործընթացների փոխադարձ պայմանավորվածության ու մարդու ու քաղաքացու իրավունքներն ու պարտավորությունները նախատեսող արդյունավետ սահմանադրական փաստաթղթերի ընդունման, ինչպես նաև իշխանության տարբեր ճյուղերի միջև

[47] Տես՝ **Munro W.B.** The Government of Europe/W.B. Munro. N.Y. Macmillan, 1931; Headlam -Morley A. The New Democratic Constitutions of Europe/A. Headlam-Morley.L.Oxford University Press, 1928:

արդյունավետ փոխազդեցության մասին: Տվյալ դեպքում, չպետք է ուշադրությունը կենտրոնացնել ամսաթվերի հստակության վրա, քանի որ ուսումնասիրողները, որպես հիմնական առանձնացնում են քաղաքական գործընթացների տարբեր ասպեկտներ: Սակայն, Յա. Է. Լեյնը ենթադրում է, որ ժողովրդավարացման «ալիքների» պարբերականացումը չի կարող ամբողջությամբ կիրառվել սահմանադրականության զարգացման և սահմանանադրական փաստաթղթերի առաջացման նկատմամբ: Նա սահմանադրությունների առումով առաջարկում է ժողովրդավարացման սեփական պարբերականացումը, որի շրջանակներում գոյություն ունեն արդեն չորս «ալիք», առաջին «ալիքը» 1789-1799 թթ-ն է, երկրորդ ալիքը 1914-1926 թթ, երրորդ ալիքը 1945-1965 թթ, չորրորդ ալիքը՝ 1989-մինչև մեր ժամանակները[48]:

Լեյնը ենթադրում է, որ նման պարբերականացումը պետության զարգացման գործում հաշվի է առնում բիֆուրկացիայի կետերը, մասշտաբային սոցիալական ու քաղաքական շարժերը, այդ թվում հեղափոխություններն ու պատերազմները: Առաջին, միանգամայն ոչ տևական «ալիքը» միավորում է բացառապես եվրոպական կազուսները ու կենտրոնացված է ֆրանսիական հեղափոխությունից հետո իրադարձությունների զարգացման վրա: Պաշտոնապես, Ֆրանսիայում առաջին ժողովրդավարական սահմանադրությունը դարձավ Յակոբինյանը, որն ընդունվել է 1793 թվ-ին՝ պատմության մեջ առաջին համազգային հանրաքվեի ժամանակ[49]:

Սակայն, հիմնական այս օրենքը այդպես էլ ուժի մեջ չմտավ, դրա փոխարեն

---

[48] Հանտինգթոնի տեսանկյունից ժողովրդավարացման «ալիքը» անցումն էր ոչ ժողովրդավարական ռեժիմներից ժողովրդավարականներին, որ տեղի է ունենում որոշակի ժամանակահատվածում: Այս «ալիքին» սովորաբար դասվում են նաև ազատականությունն ու մասնակի ժողովրդավարությունը քաղաքական այն համակարգերում, որոնք ամբողջությամբ ժողովրդավարական չեն դառնում: Ինչպես ենթադրում է Հանթինգթոնը արդի աշխարհում առկա են եղել ժողովրդավարացման երեք «ալիքներ»: Դրանցից յուրաքանչյուրը վերաբերում էր երկրների որոշակի թվի ու յուրաքանչյուրի դեպքում տեղի էին ունենում նաև անցումներ ոչ ժողովրդավարական ուղությամբ: Հարկ է նշել նաև, որ ժողովրդավարության ուղղությամբ ոչ բոլոր փոփոխություններն էին տեղի ունենում այդ «ալիքների» շրջանակում: Ալիքների տևողությունները ըստ Հանթինգթոնի հետևյալներն են՝ առաջին «ալիքը» 1789- 1799 թթ-ն է, երկրորդ ալիքը 1914-1926 թթ, երրորդ ալիքը 1945-1965 թթ, չորրորդ ալիքը՝ 1989-մինչև մեր ժամանակները: Մանրամասն տես՝ Huntington S. The Third Wave; Democratization in the Late Twentieth Century/S. Huntington. Norman, Okla; University of Oklahoma Press, 1993:

[49] Տես՝ **Lane J.E.** Constitutions and Political Theory/J.E. Lane Manchester; Manchester University Press, 1996, էջ 73-80:

1795 թվին ընդունվեց սահմանադրություն, որը հաստատվել էր ազգային կոնվենտով ու սահմանել դիրեկտորիայի ռեժիմը Դիրեկտորիայի մոդելը տարածվեց նաև Բատավյան հանրապետության, Շվեյցարիայի, Մոդենայի, Միլանի, Դենուայի և Նեապոլի վրա: 1799 թվ-ին Նապոլեոն Բոնապարտի իշխանության գալու հանգամանքը, վերջ դրեց առաջին «ալիքին»:

Ժողովրդավարացման երկրորդ «ալիքի» տևողությունը, որը ևս համեմատաբար կարճատև էր, հիմնված է հիմնականում եվրոպական պետություններում, ինչպես նաև Լատինական Ամերիկայում, համընդհանուր ընտրական իրավունքի ներդրման վրա (ինչպես կանացի, այնպես էլ տղամարդկային): Եվրոպայում, այս «ալիքին» ձեռքբերումները Առաջին համաշխարհային պատերազմից հետո, շատ թույլ եղավ ու դրանց փոխարինեց զանգվածային նահանջը ավտորիտարիզմից: Լատինական Ամերիկայում երկրների փորձը տարբեր է. այսպես, Արգենտինուսյում, համընդհանուր տղամարդկային ընտրական իրավունքի ներդրումից հետո 1912 թվին, ժողովրդավարական ռեժիմը պահպանվեց մինչև 1930 թվ-ը[50], Բրազիլիայում, այսպես կոչված Առաջին կամ Հին, հանրապետությունը, որը սահմանվել էր 1889 թվ-ին[51], նույնպես պարզեցվեց 1930 թվ-ի ռազմական հեղաշրջման ժամանակ:[52] Չիլիում ու Ուրուգվայում, ժողովրդավարական ռեժիմները գոյություն ունեցան, ավելի քան կես դար, քանի դեռ 1973 թվ-ին, երկու երկրներում էլ ռազմական հեղաշրջում տեղի չունեցավ[53]Վենեսուելայում, ժողովրդավարական ավանդույթը, որը հազիվ էր

---

[50] Այս հանրաքվեն տեղի ունեցավ 1793 թվ-ի հուլիսին, ըստ դրա արդյունքների, հիմնական օրենքի ընդունմանը կողմ քվեարկեցին ընտրողների 99,41 %-ը (ընտրողների ընդհանուր թվի 74,11%-ը քվեարկությանը չի մասնակցել):

[51] **Weisman C.H.** Argentina; Aukratic idustrialization and illegitimacy/ **C.H. Weisman**// **L. Diamond, J.J. Linz, and S.M. Lipset** (eds.). Democracy in developing countries. Vol. 4. Boulder, London; Lynne Rienner, 1989, էջ 59-110:

[52] Հին հանրապետության սահմանադրությունն ընդունվել է հանրապետության հռչակումից երկու տարի անց՝ 1891 թվ-ին:

[53] Չնայած, որ հանրապետական սահմանադրությունն ընդունվել է դեռևս 1833 թվ-ին, համընդհանուր տղամարդկային ընտրական իրավունքը ներմուծվել է միայն 1910-ական թթ-ին: Մանրամասն տես Constitutions and Political Theory/ **J.E. Lane** Manchester; Manchester University Press, 1996, tg 75: Valenzuela A. Chile; Origins, consolidation and breakdown of a democratic regime /A. Valenzuela// **L.Diamond, J.J. Linz** and **S.M. Lipset** (eds.). Democracy in Developing Conuntries; Latin America Vol. 4. London; Lynne Rienner, 1999. էջ. 191-216; **Gillespie C.G., Gonzales L.E.** Uruguay. The survival of old and autonomous institutions/ C. G. Gillespie, L. E. Gonzales//L. Diamond, J.J. Linz, and S.M. Lipset (eds.) Democracy in Developing Conuntries vol. 4,- Boulder, London; Lynne Rienner, 1989.
Pp. 159- 246.

սկսվել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, դադարեցվեց 1948 թվ-նի հեղաշրջումով, ու վերադարձը դեպի ժողովրդավարություն տեղի ունեցավ միայն 1958 թվ-ին[54]: Առավել երկարատև ժողովրդավարական ավանդույթները տարածաշրջանում ունի Կոստա-Ռիկան[55]:

Երրորդ «ալիքը», նախորդներից առավել տևականն ու ծավալունն է համարվում. այն ընդգրկում է Եվրոպայի այն երկրները, որտեղ ժողովրդավարական ռեժիմներ սահմանվեցին Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ինչպես նաև Աֆրիկայի ու Ասիայի երկրները, որոնք անկախություն էին ստացել ապագաղութացման պայմաններում: Կայուն ժողովրդավարական համակարգերը, համապապատասխան ինստիտուտների հետ, ի հայտ եկան Հնդկաստանում ու Ճապոնիայում: Հնդկաստանի սահմանադրության ընդունումը, 1950 թվ-ին դարձավ այս «ալիքի» կարևորագույն իրադարձություններից մեկը: Երրորդ «ալիքի» առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ապագաղութացված շատ երկրներ, ձեռք բերեցին ժողովրդավարական սահմանադրություններ, որոնք իրականում դարձան դիկտատորական ռեժիմների ծածկ: Կարելի է առանձնացնել նաև երկրների մի այնպիսի խումբ, որտեղ, արդյունքում, մի քանի անգամ սահմանադրությունները փոփոխությունների ենթարկվեցին ու ըստ էության, ռազմական իրադրություն մտցվեց: Այդ երկրներն են՝ Պակիստանը, Ինդոնեզիան, Ֆիլիպինները, Հարավային Կորեան, Մալազիան և Շրի Լանկան (վերջինում, ժողովրդավարական գործընթացների արդյունավետությունը մինչ օրս լրջորեն բարդացված է ապստամբ շարժման գործունեությամբ):[56]

---

[54] Տես՝ **Levine D.H.** Venezuela; The nature, sources and future prospects of democracy/ D. H. Levine// L.Diamond, J.J. Linz and S.M. Lipset (eds.). Democracy in Developing Conuntries; Boulder, London; Lynne Rienner, 1989. էջ247-290:

[55] Առաջին ժողովրդավարական ընտրություններն անց են կացվել 1889 թվ-ին, ու այդ ժամանակից ի վեր Կոստա Ռիկայում ընդլայնվեցին ընտրական իրավունքները, կատարելագործվեցին Ժողովրդավարական կառավարման ինստիտուտները: Այս ավանդույթում բացառություն են համարվում Ֆեդերիկո Տինոկո Գրանադոսի կարճատև դիկտատուրան՝ 1917- 1919 թթ-ին և 1948 թվ-ի 44 օրյա քաղաքացիական պատերազմը: Մանրամասն տես՝ **Booth J. A.** Costa Rica, The Rooths of Democratic Stability / **J. A. Booth**// **L.Diamond, J.J. Linz** and **S.M. Lipset** (eds.). Democracy in Developing Conuntries; Boulder, London; Lynne Rienner, 1989, էջ 387-422:

[56] Տես՝ **Lane J.E.** Constitutions and Political Theory/J.E. Lane Manchester; Manchester University Press, 1996, էջ 75-76:

Յա. Է. Լեյնը խոսում է նաև Փոքր Ասիայի[57] և «բարեբեր կիսալուսնի» երկրների[58] նկատմամբ ժողովրդավարացման «երրորդ ալիք» տերմինի օգտագործման անթույլատրելիության մասին: Վերջին խմբի երկրները բնութագրվում են ավանդական կառավարման տարրերի պահպանմամբ: Գաղութային ժամանակաշրջանի վերջում արաբական 19 երկրներում, պետությունների փաստացի ղեկավարներ էին հանդիսանում ժառանգական միապետերը: Չնայած, որ 1950-1960-ական թթ-ին, դրանցից հինգում՝ Եգիպտոսում, Թունիսում, Իրաքում, Լիբիայում և Հյուսիսային Յեմենում, միապետերը գահընկեց արվեցին, միևնույն է 14 պետություն և դաշնության տարածքային անդամ, այս կամ այն չափով, շարունակում են մնալ, թագադրված անձանց տիրապետության ներքո: Այս երկրների թվում են՝ Մարոկոն, Հորդանանը, Սաուդյան Արաբիան, Ուվեյթը, Բահրեյնը, Կատարը, Օմանը և Միացյալ Արաբական Էմիրությունների դաշնության յոթ անդամ:[59] Այնպիսի երկրներին, ինչպիսիք են Մարոկոն, Հորդանանը, որոնք ունեն գրավոր սահմանադրություններ, վերագրում ենք սահմանադրական ժողովրդավարական ինստիտուտների կայացման առաջընթացները: Այս պետությունները կարելի է անվանել սահմանադրական միապետություններ ու քաղաքագետների միջև քննարկումները, ներկայումս վերաբերում են հիմնականում այն չափին, որքանով դրանց է դասվում տվյալ սահմանումը: Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրների մի ամբողջ շարք ունի գրավոր սահմանադրություններ, որոնց համաձայն, իշխանությունը կենտրոնացած է այս կամ այն մարմիններում: Միևնույն ժամանակ,

---

[57] 1982 թվ-ի Թուրքիայի սահմանադրությունն իրենից ներկայացնում է իբրև ժողովրդավարական փաստաթուղթ: Սակայն այս երկրում, այնպես ինչպես հարևան պետություններում բացառությամբ Հայաստանի, դժվարություններ են նկատվում նախատեսված սահմանադրական ժողովրդավարական զորձընթացների ու քաղաքացիների իրավունքների պահպանման հետ: Այսպես Թուրքիայի հիմնական օրենքը հաճախ քննադատում են զինվորականներին Անվտանգության ազգային խորհրդի միջոցով չափազանց մեծ ազդեցություն տրամադրելու համար: Ինչ վերաբերում է քաղաքական ու քաղաքացիական իրավունքներին, ապա այս երկրում միշտ և շարունակական ոտնահարվում են անձի իրավունքներն ու ազատությունները:

[58] Սույն տերմինը շրջանառության մեջ դրեց Չիկագոյի համալսարանից Զ.Գ. Բրեստեդ անունով հնագետը: «Բարեբեր կիսալուսինը» ընդգրկում է Մերձավոր Արևելքի մի շարք պետություններ ու տարածքներ՝ Եգիպտոսը, Իսրայելը, Պաղեստինյան տարածքները, Լիբանանը, ինչպես նաև Հորդանանը, Սիրիան, Իրաքը, Թուրքիան, Իրանը ու նշանակում է այն երկրները, որտեղ անկախ տաք կլիմայի, ձմռանը դիտվում են բավարար թվով տեղումներ և որոնց տարածքով հոսում են տարածաշրջանի կարևորագույն գետերը՝ Նեղոսը, Հորդանանը, Տիգրիսը և Եփրատը:

[59] Տես՝ **Owen R. State,** Power.and Politicsin the Making of Modern Middle East/ R. Owen, L. Rou.ledge, 1992, էջ 56:

տվյալ պետություններում կարող է գոյություն ունենալ միակուսակցական համակարգ կամ գերնախագահություն, որպես յուրօրինակ այլընտրանք՝ սահմանադրական միապետին:

Ինչ վերաբերում է աֆրիկյան մայրցամաքին, ապա ապագաղութացման ընթացքում ու դրանից հետո, նկատվում են սահմանադրության ընդունման բազմաթիվ դեպքեր: Ամեն դեպքում, այս սահմանադրությունները, ժողովրդավարական էին միայն արտաքին տեսքից, «ժակատային էին» ու թաքցնում էին ժողովրդավարական ինստիտուտների ու ընթացակարգերի իրական բացակայությունը: Գաղութացումն իր դրոշմը թողեց. 1970-ական թ-ի սկզբին, Հասարակածային Աֆրիկայում, գրեթե բոլոր անկախ ռեժիմները կամ ռազմական էին, կամ՝ միակուսակցական: Այլ կերպ ասած, խոսքը գնում է կամ ավտորիտար ռեժիմների մասին կամ ռազմական հեղաշրջումների ու դիկտատուրաների մասին: Գաղութարարության հետքը տևական ժամանակ դրսևորվել է աֆրիկյան երկրների սահմանադրական զարգացման գործում, քանի որ առաջին հիմնական օրենքները հիշեցնում էին մետրոպոլիտների քաղաքական կազմակերպումը:[60] Սակայն, ոչ տևական ժամանակահատվածից հետո, որի ընթացքում ջանքեր են գործադրվել քաղաքական կարգերը նախկին «հովանավորներին» ադապտացնելու համար, աֆրիկյան երկրները մուտք գործեցին անկայունության տևական շրջան ու սկսեցին հակում ցույց տալ նախագահության նկատմամբ: Նախագահության փորձը աֆրիկյան հողի վրա, այս երկրների մեծ մասի համար վերածվեց քաղաքական անկայունության ու ոչ սահմանադրական իշխանության մշտական սպառնալիքի: Վեսթմինսերյան մոդելը պահպանվեց միայն երկու պետությունում՝ Բոտսվանում և Սավրիկիայում, ընդ որում երկու պետությունն էլ իրենցից ներկայացնում են կայուն զարգացման հազվադեպ նմուշներ, ինչն, ընդհանուր առմամբ, հատկանշական չէ տարածաշրջանի համար: Տվյալ դեպքում, դիտարկելով ժողովրդավարացման երրորդ «ալիքի» ընթացակարգերը, Յա. Է. Լեյնը գալիս է այն եզրակացության, որ աֆրիկյան պետություններին, առավելագույնս համապատասխանում է

[60] Նախկին ֆրանսիական Կոնգոյում 1959,1961, 1963 թթ. սահմանադրությունները մշակվեցին ըստ ֆրանսիական օրինակի, այն դեպքում, երբ 1970,1973,1979 թթ. հետագա փաստաթղթերը հիշեցնում էին սովետական պրակտիկան: Ընդ որում Կոնգոյի օրինակը մայրցամաքի միակ օրինակը չէ:

վեսթմինսթերյան մոդելը:[61] Ենթադրում ենք, որ հիմնարար նման եզրակացությունները պահանջում են առավել խորը մշակում՝ շեշտադրելով ուսումնասիրվող պետությունների պատմական ու սոցիոմշակութային առանձնահատկությունները:

Ժողովրդավարացման չորրորդ «ալիքը», սահմանադրական փաստաթղթերի ծագումնաբանության, ժողովրդավարական ինստիտուտների ու փորձի զարգացման համատեքստում, ուղղակիորեն կապված է սառը պատերազմի ավարտի հետ: Այս «ալիքը» նշմարում էր սոցիալիստական ճամբարի[62] ձախողումը, և նախ և առաջ վերաբերում է Կենտրոնական ու Արևմտյան Եվրոպայի այն երկրներին, որտեղ սոցիալիստական ռեժիմներն անկում են ապրել: Սոցիալիստական ճամբարի նախկին երկրներում, ի հայտ եկան, ժողովրդավարական սահմանադրություններ, սակայն, դրանց՝ կյանքի կոչելու աստիճանը տարբեր եղավ: Երեք նման կազուս՝ Լեհաստանը, Հունգարիան ու Ալբանիան, սույն աշխատանքում դիտարկված են համեմատական համատեքստում, ինչպես միմյանց միջև, այնպես էլ ընտրված այլ պետությունների հետ համեմատելիս: Լեյնը խոսում է նաև Լատինական Ամերիկայի վրա չորրորդ «ալիքի» ներգործության մասին[63], սակայն հաշվի առնելով ներկայումս Հաիթիում, Վենեսուելայում, Բոլիվիայում տիրող քաղաքական վիճակը ու մի շարք այլ երկրների ոչ կայուն վիճակը, համոզվում ենք նման ազդեցության անկայունության մասին: Ավելի ուշ, ընտրված որոշ կազուսների օրինակով, ցույց կտանք, որ արտաքին ազդեցությունը սահմանադրական ձևավորման ու ժողովրդավարական կառավարման ինստիտուտների ու փորձի զարգացման կարևոր, սակայն ոչ վճռորոշ գործոնն է հանդիսանում: Բացի այդ, չորրորդ «ալիքը» հարեց նաև ՀԱՀ, որը մեր ուսումնասիրության մեջ ևս դիտարկվում է որպես կազուս: Մի շարք աֆրիկյան երկրներ ևս՝ Մալաբին, Զամբիան, Քենիան, Զիմբաբվեն և Գանան, փորձեր արեցին դուրս գալ զարգացման սահմանադրական,

---

[61] Տես **Lane J.E.** Constitutions and Political Theory/ **J.E. Lane** Manchester; Manchester University Press, 1996, էջ 75-79:

[62] Ներկայումս խորհրդային ոգով պահպանված սահմանադրություններ մնացել են ՉԺՀ-ում (1972 թվ-ից), Կաբայում (1976 թվ-ից) և ԿԺԴ-Հ-ում:

[63] Տես՝ **Bemzten E.** Democratic Consolidation in Central America. A Qualitative Comparative Approach / **E. Bemzten**// Third World Quarterly. 1993 Vol. 14, No. 3, էջ 589-604:

ժողովրդավարական ուղի, սակայն՝ հաջողության տարբեր աստիճանով: Հարկ է նշել, որ եթե մյուս «ալիքները», ըստ Լեյնի դասակարգման, վերաբերում էին աշխարհի գրեթե բոլոր երկրներին, ապա չորրորդը գրեթե չտարածվեց Հարավ-Արևմտյան Ասիայի վրա, որտեղ դինամիկ տնտեսական զարգացումը համադրվում էր կամ դեպի ժողովրդավարացում անցման թույլ և ոչ միշտ հաջող փորձերի հետ, կամ՝ հակառակը՝ ավտորիտար ռեժիմների հաստատման հետ:

Ընդհանուր առմամբ, մենք ընդունում ենք Լեյնի պարբերականացումը ու կարծում ենք, որ այն միանգամայն կիրառելի է սահմանադրական ձևակերպման ու ժողովրդավարական կառավարման ինստիտուտների զարգացման ուսումնասիրության նկատմամբ: Դրա հետ մեկտեղ կարելի է առանձնացնել այս պարբերականացման մի շարք թերություններ: Առաջին «ալիքը» «Սահմանադրություններ ու քաղաքական տեսություն» աշխատանքում (1996 թվ.) քննարկելիս, հաշվի չի առնվում իրադարձությունների զարգացումը ամերիկյան մայրցամաքում, որտեղ սահմանադրությունն ընդունվել է դեռևս 1787 թվ-ին, կատարյալին է հասցվում Դիրեկտորիայի ռեժիմի ժողովրդավարությունը, ինչը կարող է հանգեցնել, առաջին «ալիքի», որպես այդպիսինի «գերագնահատմանը», ինչպես նաև գրեթե բացակայում են Լեհաստանի, որպես, եվրոպական մայրցամաքում, առաջին կոդիֆիկացված սահմանադրություն ունեցող պետության մասին հիշատակումները: Ժամանակահատվածների նման բաժանումը հաշվի չի առնում նաև սահմանադրական այն շարժերը, որոնք տեղի են ունեցել Լատինական Ամերիկայում՝ XIX դարում: Ժողովրդավարացման երկրորդ «ալիքի» վերլուծության մեջ, հարկավոր է հաշվի առնել նաև համընդհանուր ընտրական իրավունքի ներդրման ասպեկտները:

Ամեն դեպքում, Լեյնին հաջողվեց նշել սահմանադրականության զարգացման հիմնական ուղղությունները, որն անդրադարձել է ժողովրդավարացման «ալիքների» տեսությանը, ցույց տալ սահմանադրական ինստիտուտների, փաստաթղթերի ու ընթացակարգերի զարգացման կատարելագործումը: Ընդ որում, միանգամայն հաջող փորձ է ձեռք առնվել վերլուծության գործընթացի մեջ ներառել կառավարման տարբեր ձևերի սահմանադրական միապետության, պառլամենտական ու նախագահական հանրապետությունների, ինչպես նաև դրանց առավել կոնկրետ

տարատեսակների թերությունները: Լեյնն արդարացիորեն մատնացույց է անում, այս կամ այն երկրում, վլսրչական-տարածքային շրջանում, ընտրական համակարգում կառավարման ձևը սահմանելու գործում պետության ղեկավարի իրական դերը հաշվի առնելու անհրաժեշտությունը:

Այսպիսով, տարբեր երկրներում սահմանադրական զարգացումը ունեցել է իր ուրույն զարգացման ուրվագիծը, որ բնորոշ է տվյալ հասարակությանը:

Ընդհանրացնելով սահմանադրական զարգացման պատմական փորձը, կարելի է եզրակացնել, որ իրավական պետության և հասարակության կայացման ամենակարճ ճանապարհը ոչ թե ուրիշի (ուրիշների) փորձի մեխանիկան տրանսֆորմացիան է ազգային սահմանադրության տեքստային բովանդակության մեջ, այլ պատմականորեն փորձաքննություն անցած համամարդկային արժեքների ու փորձի իմաստավորված վերարտադրությունը պետք է ներմուծվի ազգային սահմանադրաիրավական հայեցակարգ և պրակտիկա՝ դարձնելով սեփական իրավամտածողություն և արժեհամակարգ:

Գտնում ենք, որ այդպիսի դիրքորոշումը պետք է որդեգրվի հայոց նորանկախ պետականության իրավական քաղաքականության կողմից: Այս առումով, առաջադրված սահմանադրաիրավական լուծումները կարող են կառուցվել միայն միջազգային և ազգային արժեհամակարգերի հաշվառման ու դրանց իմաստավորված փոխակերպման ճանապարհով:

Վերը քննարկված միջազգային սահմանադրական պրակտիկայի վերլուծությունը վկայում է, որ ցանկացած երկրում լուրջ դժվարություններ են առաջանում, երբ շեշտը դրվում է սահմանադրական լուծումների մեխանիկական փոխառման վրա:

Այս առումով նշենք, որ Սահմանադրությունը ինքնին իրավական, սոցիալական և մշակութային արժեքային համակարգ է, որը պատմականորեն ձևավորված ազգային գոյին բնութագրող հատկանիշ է՝ իր կոնկրետ առանձնահատկությունների, առաջադրված խնդիրների, դրանց հնարավոր լուծումների ու կարգավորումների տեսանկյունից: Իհարկե, ասվածը բոլորովին չի նշանակում ինքնամեկուսացում կամ կաղապարում: Իրավական գլոբալացման պայմաններում անհնարին է իրավունքի ընդհանուր սկզբունքների, սահմանադրականության արժեքների, միջազգային

փորձի անտեսումը: Սակայն խնդիրը դրանք մեխանիկորեն պատճենահանելու փոխարեն սեփական ազգային իրավական (սահմանադրաիրավական) արժեքային համակարգին ներդաշնակելն ու կայուն առաջընթացը ապահովելն է:

Ինչպես նշում է պրոֆ. Վ. Օսյադինսկին, փոխառումն անխուսափելի է, քանի որ սահմանադրական ընդհանուր սկզբունքներ ու կառուցակարգեր կան, որոնք վաղուց հայտնի են, համընդհանուր ճանաչում են գտել և հանդես են գալիս, այսպես կոչված, միջազգային չափորոշիչներ կամ միջազգային իրավունքի նորմեր ու սկզբունքներ[64]: Սահմանադրական իրավունքի միջազգային ընկերակցության նախկին նախագահ, պրոֆեսոր Չերիլ Սանդերսը, ընդգծելով տարբեր երկրների սահմանադրությունների լեզվական ու բովանդակային նմանությունները, շեշտում է, որ դրանց ստեղծման պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք միմյանցից են ածանցված՝ բացառությամբ, թերևս, նախադեպ հանդիսացող այնպիսի սահմանադրական համակարգերի, ինչպիսիք են՝ Միացյալ Թագավորության, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի համակարգերը[65]:

Բնականաբար, փոխառվում են առաջին հերթին սահմանադրական հասկացությունները, ընդհանուր ինստիտուտներն ու սկզբունքները: Այսուհանդերձ, առաջնահերթ խնդիրն այն է, որ դրանք ներդաշնակ լինեն այն սոցիալական գոյի արժեքային համակարգին, որի համար դառնում են սահմանադրական սկզբունքներ և նորմեր: Հակառակ պարագայում դրանք դեկլատատիվ (թղթային) բնույթ կկրեն: Դեռ ավելին, հակադրվելով իրականության արժեհամակարգին՝ դրանք վերափոխումների (բարեփոխումների) խթանից կարող են վերաճել խոր սոցիալ-քաղաքական ճգնաճամի:

Հենց սրանով է պայմանավորված վերոշարադրյալ պատմաիրավական վերլուծության անհրաժեշտությունը և դրանից բխող հետևյալ եզրահանգումները.

1. սահմանադրությունների զարգացման ուսումնասիրությունից հետևում է, որ սահմանադրական արժեքների ձևավորման ու զարգացման տեսանկյունից՝ արդի ժամանակաշրջանում առկա են մի շարք կայուն մոտեցումներ և հայեցակարգեր,

---

[64] Տես՝ **Осятыньский В.** Парадоксы конституционно заимствования// Сравнительное конституционное обозрение. 2004. № 3, էջ 53:

[65] Տես՝ **Ch. A.** Saunders Constitotional Culture in Transition // Constitotional Cultures / Ed. by M. Wyrzykowsk. Warsaw: ISP. 2000. էջ 37:

որոնք բնութագրական են ժողովրդավարական հասարակարգերին,

2. սահմանադրաիրավական կարգավորումների առանցքն է դառնում մարդը՝ իր բնական և անօտարելի իրավունքներով, ինչպես նաև անձի, հասարակության և պետության անվտանգության հետ կապված հարցերը,

3. սահմանադրական արժեհամակարգում խիստ կարևորվում է իրավունքի (սահմանադրության) գերակայությունը, իրավունքով իշխանության սահմանափակումը և սահմանադրական նորմերի անմիջական գործողությունը,

4. ամրապնդվում և երաշխավորվում է դատական իշխանության անկախությունը, ընդլայնվում են տեղական ինքնակառավարման իրավասությունները:

Հաշվի առնելով անցումային հասարակարգերում, այդ թվում Հայաստանի Հանրապետությունում, կայունության և առաջընթաց զարգացման ապահովման նշանակությունը, կարելի է պնդել, որ վերոնշված եզրահանգումները չափազանց կարևորվում են, հատկապես մեզանում իրականացված սահմանադրական բարեփոխումների համատեքստում: Խնդիրը, սակայն, կայանում է նրանում, որ այդ հնարավոր ու անհրաժեշտ լուծումները պետք է ներդաշնակեն ազգային արժեքային համակարգին, հասարակության իրավամտածողությանը և իրավական մշակույթին ու դառնան հասարակության ու նրա յուրաքանչյուր անդամի սեփականությունը:

1.2. Սահմանադրության հասկացությունը և էությունը

Ժամանակակից սահմանադրության հայեցակարգի կայացումը՝ երկարատև պատմական գործընթաց է[66]: Այն անցել է մի քանի փուլեր: Այս գործընթացը գիտական գրականության մեջ առաջին անգամ համակարգել փորձեց Յու. Ա. Ցուդինը՝ առանձնացնելով սահմանադրական զարգացման չորս փուլեր[67]:

Առաջին փուլի որակով նա նշել է Եվրոպայի և Ամերիկայի զարգացած երկրներում «բուրժուական» (կապիտալիստական) հասարակության կայացման և զարգացման շրջանը, երկրորդ փուլը, ըստ Ցու. Ա. Յուդինի տեսանկյան, բնութագրվում է նրանով, որ սահմանադրական զարգացման միասնական

[66] Տես՝ Конституция в XXI веке. Сравнительно-правовое исследование. М., 2014, էջ 31-32:
[67] Տես՝ Сравнительное конституционное право. Учеб. пособие /Отв. редактор В. Е. Чиркин. М., 2002, էջ 43-49:

գործընթացը հանդիսացավ տարանջատվող Ռուսաստանում սոցիալիստական տոտալ հասարակության և պետության ստեղծման և սոցիալիստական տիպի առաջին սահմանադրության ընդունման արդյունքում: Երրորդ փուլը, ըստ Յու. Ա. Յուդինի տեսանկյան, կապված է Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում և Օկենիայում գաղութարարական համակարգի չեզոքացման և 130 ավել նոր պետություններում սահմանադրությունների ընդունման հետ: «Առաջին անգամ գործընթացը (սահմանադրական զարգացումը) իսկապես դարձավ համաշխարհային, փաստացի տարածված բոլոր երկրների վրա»:[68] Սահմանադրական զարգացման չորրորդ փուլը, նշում է Յու. Ա. Յուդինը, կապված է սոցիալիստական և զարգացած երկրների մեծամասնությունում տոտալ և ավտորիտար ռեժիմների փլուզման և դրանց դեմոկրատական ձևափոխությունների ուղղուն անցման հետ: Այս փուլում ծագում է «հետսոցիալիստական մշակույթի Սահմանադրություն»:[69] Այս գործընթացների շրջանակներում Յու. Ա. Յուդինը առանձնացնում է երրորդ փուլի առաջին և երկրորդ ալիքի սահմանադրություններ, ինչպես նաև չորրորդ փուլում գործող սահմանադրության երկու մոդելներ (բուրժուական և սոցիալիստական):

«Սահմանադրություն» (լատ. constitutio բառից՝ հաստատում եմ, որոշում) եզրույթը ծագել է Հին Հռոմի ժամանակներից: Այդպես էր կոչվում կայսերների իրավական ակտերից մեկը: Հրամանագրերին, հրովարտակներին, կարգադրագրերին զուգահեռ առկա էին ակտեր, որոնք սկսում էին հետևյալ բառերից. (Ես) «հաստատում եմ...»: Նման ակտերը՝ հայտնի իմաստով որևէ նմանություն չունեն ժամանակակից սահմանադրության հետ, միայն երբեմն շոշափում էին հարցեր (պետական մարմիններ, սեփականություն), որոնք ներկայումս կարգավորվում են սահմանադրությամբ:

Մասնագիտական գրականության մեջ սահմանադրությունը դիտարկվում է որպես «պետության Հիմնական օրենք (օրենքների ամբողջություն), որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Տվյալ օրենքի հիմնական բնութագրիչները պայմանավորված են այն հանգամանքով, որ դրանով սահմանվում են

[68] Տե՛ս նույն տեղում: էջ 49:
[69] Տես՝ Сравнительное конституционное право. էջ 49:

– Պետական կարգի հիմունքները,

– Մարդու և քաղաքացու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման ու պաշտպանության երաշխիքները,

– Պետական իշխանության համակարգը, դրա գործառույթները, կազմակերպման սկզբունքներն ու կարգը,

– Քաղաքական իշխանության իրականացման և անհատի քաղաքական,

տնտեսական, սոցիալական ազատությունների դրսևորման իրավական սահմանները»:[70]

Միջնադարում սահմանադրություն բառիս բուն իմաստով չկար: Ճշմարիտ է, որ երբ խաչակիրները «անհավատներից Երուսաղեմի ազատման համար» արշավների ժամանակ գրավեցին Մերձավոր Արևելքի տարածքները, երբեմն կիրառում էին իրենց բնակավայրերի համար փաստաթղթեր, որոնք անվանում էին սահմանադրություններ («որոշումներ»): Դրանք գլխավորապես կրոնական և ռազմաֆեոդալական բնույթի ակտեր էին: Եվրոպայում միջնադարում ընդունվում էին փաստաթղթեր, որոնք պաշտոնապես կամ ոչ պաշտոնապես անվանվում էին սահմանադրություններ (օրինակ, քաղաքային հանրապետությունների, վանական միաբանությունների կառուցվածքի վերաբերյալ փաստաթղթեր), ինչպես նաև իրավական ակտեր, որոնք պարունակում էին սահմանադրական նշանակություն ունեցող դրույթներ: Դրանց թվին են պատկանում, օրինակ, Անգլիայի 1215թ. Ազատությունների մեծ խարտիան (այն նաև համարվում է բրիտանական չգրված Սահմանադրության մաս, չնայած դրա բովանդակությունը փոփոխված կամ կլանված է առավել ուշ ակտերով), Հունգարիայի 1222թ. Ոսկե կոնդակը, Ֆրանսիայի 1357թ. Մարտյան մեծ հրամանը և այլն[71]: Այս ակտերը սահմանադրություն չէին կոչվում, դրանց բովանդակությունը հեռու էր ժամանակակից սահմանադրությունների բովանդակությունից: Դրանցից մեծամասնությունում ընդգրկված էին հատվածներ (հոդվածներ և այլն), որոնք դասվում են քրեական, քրեական - ընթացակարգային և իրավունքի այլ ոլորտներին (ըստ ժամանակակից

---

[70] Տես՝ **Հարությունյան Գ.** Սահմանդրսւկան մշակույթ.պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատարակչություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, էջ 23-24:

[71] Տես՝ **Графский В. Г.** Всеобщая история права и государства. М., 2015, էջ 335:

դասակարգումների):

Հասարակությունում նախկին կարգը փոփոխող և նոր կարգ ներածող որպես հատուկ հիմնադրական ակտի սահմանադրության ժամանակակից հասկացությունը ձևավորվեց Եվրոպայում XVII-XVIII դարերի բուրժուական հեղափոխության նախաշեմին մտածող - լուսավորիչների աշխատանքներում: Նույն ժամանակահատվածում ծագեց սահմանադրության որպես մարդկանց միջև պայմանավորվածություն մեկնաբանությունը (առավել ուշ եվրոպական քաղաքական գրականությունը այն մեկնաբանում էր որպես իշխանավորների և ենթակաների միջև պայմանագիր): Չնայած այդ ժամանակաշրջանում սահմանադրության բովանդակության մեկնաբանությունը ավելորդ նեղ էր (նոր կարգը սահմանափակվել էր մարդու և քաղաքացու իրավունքների ամրագրմամբ, ինչպես նաև թագավորական աբսոլյուտիզմի չեզոքացման և իշխանության նոր բարձրագույն մարմինների ստեղծման պահանջներով), այդ գաղափարները ունեցան հսկայական նշանակություն: Դրանք սահմանեցին բազմաթիվ երկրների և ժողովուրդների զարգացման ուղիները:

XVII-XVIII դարերում բուրժուական հեղափոխությունների շրջանում ծագեցին սահմանադրական բովանդակության փաստաթղթերի նմուշներ, մասնավորապես Անգլիայում Կրոմվելի շրջանում «Կառավարման գործիքը» (լիարժեք անվանումը՝ «Անգլիայի, Շոտլանդիայի և Իռլանդիայի ընդհանուր բարիքի և դրանց պատկանող տիրույթների պետական կառավարման ձև», 1653թ): Դրանցում առկա էր իշխանության սահմանների, մարդկանց իրավունքների երաշխիքների (ճշմարիտ է, ամենից առաջ, հաճախ պառլամենտականների իրավունքների երաշխիքների) վերաբերյալ դրույթներ: Նման տեսակի ակտեր չկային բացարձակ միապետությունների ժամանակ, վերհիշենք Լյուդովիկոս XIV արտահայտությունը. «Պետությունը՝ ես եմ»: Միահեծան կամայականությունը սահմանափակող հիմնական օրենքի վերաբերյալ գաղափարը իրենց հետ Ամերիկա տարան հեղափոխության շրջանում և դրանից հետո ճնշումներից փախչող բրիտանական գաղթյալների տարբեր ալիքներ: Նրանց գործունեության հետ է կապված նաև առաջին սահմանադրական փորձը: Նոր Անգլիայում (այդես էր կոչվում ժամանակակից ԱՄՆ-ի արևելյան ափը) անգլիական գաղութարարները ստեղծեցին

իրենց բնակավայրերը, կոչելով դրանց տարածքային միավորումներ՝ ինչպես դա կոչվում է ներկայիս հայերենով, նահանգներ (state՝ անգլերենով, «պետություն», սակայն ունի «որոշում» նշանակությունը և այլն): Քաղաքները և նահանգները հաճախ կրկնում էին Մեծ Բրիտանիայի քաղաքների և տարածքների անվանումները new (նոր) ածական հավելմամբ՝ Նյու-Յորք, Նյու-Գրեմպշիր և այլն:

Նահանգների վիճակները կարգավորվում էր խարտիաներով:[72] Դրանք նախատեսում էին նահանգների որոշակի ինքնակառավարում, սակայն վերջիններս մնում էին Մեծ Բրիտանիայի «սպիտակ գաղութներ»: Բրիտանական միապետները ճնշում էին դրանց զարգացումը: Դա հանգեցրեց նահանգների և բրիտանական թագավորական կառավարության հակամարտության՝ իսկ հետագայում՝ 1776թ, նահանգների կողմից Անկախության հռչակագրի ընդունմանը (որում առկա էին նաև մարդու բնական իրավունքների վերաբերյալ կարևոր սահմանադրական սկզբունքների), անկախության համար պատերազմին, համադաշնության ստեղծմանը (1777թ), իսկ 1787թ. Սահմանադրության ընդունմամբ, որն իրավաքաղաքական հիմք հանդիսացավ (յուրահատուկ՝ հասարակական պայմանագրի) ԱՄՆ-ի կազմավորման համար:

Նախքան Անկախության հռչակագրի (1776թ. հուլիսի 4) ընդունումը որոշ նահանգներ, ձգտելով Մեծ Բրիտանիայից զատմանը, ընդունեցին իրենց սուսիմանադրությունները:[73] Ադ ժամանակներից սահմանադրության ընդունումը սկսեց նշանակել անկախություն, իսկ հետագայում՝ պետության ձևավորում:

Հետագայում սահմանադրություն ի հայտ եկավ դաշնության սուբյեկտների մոտ (օրինակ, Գերմանիայի հողերում), քաղաքական բնույթի որոշ տարածքային ինքնավարություններում: Ամերիկայում առաջին սահմանադրությունը ընդունվեց 1776թ. Նյու-Գրեմպշիրում: Դա ըստ ծավալի փոքր ակտ էր, որ ժամանակավոր նշանակություն ուներ, պետք է գործեր «Մեծ Բրիտանիայի հետ ոչ բնական և դժբախտ պատերազմի շրջանում»:[74] Հետագայում ընդունվեց Հարավային

---

[72] Մանրամասն տես՝ **Уильям Берном**. Правовая система Соединенных Штатов Америки. М., 2007, էջ 46- 49:

[73] Տես՝ **Уильян Берпам**, նշվ. աշխ. էջ 46:

[74] Մանրամասն տես՝ **Уильям Берном**. Правовая система Соединенных Штатов Америки. М., 2007, էջ 46- 49:

Կարոլինայի (1776թ. մարտ) սահմանադրությունը: Դրանում ևս պարունակվում էին Մեծ Բրիտանիայի հետ հաշտեցման կոչեր:

Ամերիկյան գաղութների սահմանադրական զարգացումների նոր ուղղություն հիմնադրեց 1776թ. հունիսի 12 (Անկախության հռչակագրից երեք շաբաթ առաջ) Դիջինիայի նահանգի «Սահմանադրությունը կամ կառավարման ձևերը»: Այն մերժեց նահանգներում Մեծ Բրիտանիայի թեկուզ «ուղղված» իշխանության վերականգնման հնարավորությունը և առաջադրեց մարդու բնական իրավունքների և հասարակական պայմանագրի հիման վրա նոր իշխանության կազմակերպման գաղափարը: Նախքան ԱՄՆ Սահմանադրության ընդունումը և այդ գաղափարին համապատասխան դաշնության ստեղծումը 1776-1780թթ. ընդունվեցին մոտ 10 նահանգների սահմանադրություններ:[75] Դրանք սովորաբար ունեին «Կառավարման ձև» կամ «Սահմանադրություն» անվանումը (օրինակ, Մասաչուսես նահանգինը):

Նահանգների սահմանադրական օրենսդրության փորձը ինչ-որ չափով կիրառվեց ԱՄՆ Համադաշնության հոդվածների (1777թ) և ԱՄՆ 1787թ. Սահմանադրության ստեղծման ժամանակ: Պետական իշխանության ամրապնդման համար ընդունված ԱՄՆ Սահմանադրությունը (այդ փաստաթղթի քննադատները համադաշնության հոդվածները անվանել են «ավազե պարան») հանդիսանում է մեծագույն պատմական նշանակության ակտ: Այն հսկայական ազդեցություն է ունեցել այլ երկրների սահմանադրությունների վրա, ինչն էլ ձգտում էին ցուցադրել ամերիկացի գիտնականները ԱՄՆ Սահմանադրության 200-ամյակի ժամանակ Եվրոպայում, Ասիայում, Ամերիկայում, Աֆրիկայում կազմակերպելով Ֆորդի Ֆոնդի աջակցությամբ ներկայացուցչական կոնֆերանսներ: 27 լրացումներով (վերջինը 1992թ) մինչ այսօր գործող ԱՄՆ սահմանադրությունը առաջինը հռչակեց ազգային, ինքնիշխանության սկզբունքը («Մենք, Միացյալ Նահանգների ազգերը...»), սահմանեց պետության կազմակերպման դեմոկրատական սկզբունքները (ազգային ներկայացուցչություն, կառավարման հանրապետական ձև, իշխանությունների բաժանում, ֆեդերալիզմ և այլն), հաստատեց, որ դաշնային իրավունքը

---

[75] Տես՝ Боботов С.В. Жигачев И.Ю. Введение в правовую систему США.М. 1997. С. 15-16; Шумилов В.М. Правовая система США. М, 2006, էջ 17-18:

առաջնություն ունի նահանգների իրավունքի նկատմամբ:

ԱՄՆ Սահմանադրությունը միևնույն ժամանակ ուներ պատմականորեն սահմանափակ բնույթ, կապված դրա ժամանակային պայմանների հետ, ինչպես նաև կառավարող շրջանակների՝ հիմնականում հարավային նահանգների կալվածատեր-ստրկատերերի շահերով պայմանավորված որոշ ռեակցիոն գծեր:[76] Տվյալ ժամանակաշրջանի պատկերացումներին համապատասխան ԱՄՆ Սահմանադրությունը սահմանափակվել էր պետական իշխանության կազմակերպման (պետության բարձրագույն մարմինների) փոխհարաբերությունների և կառուցվածքների) հարցերի կարգավորումներով: Սահմանադրական տեքստում բացակայում էին հասարակական կառուցվածքի հիմքերի (իրավունքի, խոսվում էր մեկ նահանգի մյուսին զգուշավորությամբ աշխատել պարտավորված անձինք անվանվող փախստական ստրուկների վերադարձման պարտականության), չկային մարդու և քաղաքացու իրավունքների (քաղաքացիական և քաղաքական իրավունքները ներառվեցին Սահմանադրական առաջին 10 լրացումներով, որոնք ստացան «Իրավունքի վերաբերյալ օրինագիծ» անվանումը (հաստատված նահանգների անհրաժեշտ թվով և 1791թ. պաշտոնապես ընդգրկված ԱՄՆ Սահմանադրության մեջ) վերաբերյալ դրույթներ, ԱՄՆ Սահմանադրության, տեքստում սոցիալ-տնտեսական իրավունքները բացակայում են նաև այսօր ԱՄՆ Սահմանադրությունը, խուսափելով «ստրուկ» բառից, բոլոր դեպքերում ամրագրել է սևամորթերի ստրկությունը՝ զրկելով նրանց, հնդկացիներին և կանանց ընտրական իրավունքից (սևամորթերին՝ մինչև 1870թ, կանանց՝ 1919թ, արգելաբնակավայրում ապրող հնդկացիներին՝ 1924թ):

1787թ. ԱՄՆ Սահմանադրությունը սկզբնավորեց սահմանադրականության ուսմունքի պաշտոնական ընդունումը (ոչ պաշտոնական այն սկսվել է մշակվել XVI XVIIIդդ. մտավորականների աշխատություններում) և այդ ուսմունքի իրական մարմնավորումը: Այդ շրջանում դրա բովանդակությունը պայմանավորված էր դարաշրջանի առանձնահատկություններով և ԱՄՆ կոնկրետ պայմաններով, սակայն ԱՄՆ Սահմանադրության և սահմանադրականության գաղափարների

[76] Տես՝ **Конституция США.** История и современность. Под. Ред. А. А. Мишина. Е. Ф. Языкова. М., Юл., 1988:

նշանակությունը մարդկության զարգացման մեջ անվիճելի է:

ԱՄՆ Սահմանադրության ընդունումից հետո 1791 թվականին Լեհաստանի և Ֆրանսիայի սահմանադրությունները, սակայն երկուսն էլ արդյունավետ չգործեցին: Բոլոր դեպքերում արդեն XIX դ. Առաջին կեսին սահմանադրական իրավաստեղծումը ընդգրկեց ամբողջ Եվրոպան: Սահմանադրությունները կամ սահմանադրական օրենքները ընդունվեցին վերջինիս տարբեր երկրներում. հարավից (Իտալիա, Իսպանիա) մինչև հյուսիս (Շվեցարիա, Նորվեգիա) և արևմուտքից (Գերմանիա, Ֆրանսիա) մինչև արևելք (Լեհաստան): Առաջին սահմանադրությունները ընդունվեցին XIX դարի սկզբում նաև Լատինական Ամերիկայի երկրներում (դրանցից առաջինը 1811թ. Վենեսուելայի սահմանադրությունը): XIX դարի երկրորդ կեսում սահմանադրության ստեղծման գործընթացը տարածվեց Ասիայում (1889թ. Ճապոնայի Սահմանադրություն), XX դ. երկրորդ կեսում շոշափեց որոշ այլ երկրներ. Իրան (1906թ), Չինաստան (1912թ): Այդ շրջանում Աֆրիկայում միակ սահմանադրություն հանդիսանում էր Լիբիայի Սահմանադրությունը՝ երկիր, որը հիմնադրվել է 1847թ. ԱՄՆ ներգաղթած սևամորթների կողմից (այն պատճենվել էր ԱՄՆ Սահմանադրությունից):

Մետրոպոլները սկսեցին ներածել շնորհված սահմանադրություններ որոշ գաղութներում (Հնդկաստան, Աֆրիկայի առանձին պետություններ): Դրանք սովորաբար անվանվում էին այնտեղ կառավարող կուսակալի անունով: Առաջին Համաշխարհային պատերազմից հետո (իսկ որոշ երկրներում մինչև դա) սահմանադրություններ ընդունվեցին Արևելյան Եվրոպայի նոր պետություններում:

1918թ. Խորհրդային Ռուսաստանում ընդունվեց առաջին սահմանադրությունը, 1924թ՝ ԽՍՀՄ-ում: 20-ական թթ. ընդունվեցին սահմանադրություններ նաև Բուլղարիայում. Մոնղոլիայում և այլն: Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո XXդ. 50-60-ական թթ. գաղութային համակարգի անկման և Ասիայում, Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում, Օկեանիայում հետագայում նոր պետությունների ձևավորման արդյունքում ընդունվեցին նոր պետությունների 200 ավելին սահմանադրություններ (հաշվի առնելով, որ որոշ հիմնական օրենքներ փոխվում էին մյուսներով, իսկ որոշ զարգացող երկրներում, օրինակ Գանայում, Թայլանդում, 10-15 տարիների

ընթացքում փոխվել են 10, իսկ երբեմն ավելի սահմանադրություններ): Բացի դրանից, սահմանադրություն էր ընդունվում նաև դաշնության սուբյեկտներում, իսկ երբեմն ինքավար ձևավորումներում (ԽՍՀՄ-ում գոյութուն ունեին ոչ միայն 15 միութենական, այլ նաև 20 ինքնավար հանրապետությունների սահմանադրություններ): Պետության (ԱՄՆ) առաջին սահմանադրության և ԱՄՆ Դաշնության սուբյեկտների սահմանադրությունների (հետագայում՝ դաշնության) ընդունման ժամանակներից բազմակի փոփոխվել են բազմաթիվ կայուն պետությունների սահմանադրությունները (օրինակ, Ֆրանսիայում 16 անգամ): Այսպիսով, սահմանադրական կառույցի ժամանակակից փորձը ընդգրկում է (դաշնության սուբյեկտների և որոշ ինքնավար ձևավորումների հաշվառման դեպքում հավանաբար տարբեր տեսակի 1000 ավելի սահմանադրություններ:

Ընդհանրացնելով վերոշարադրյալը, կարելի է տալ սահմանադրության հասկացության հետևյալ բնորոշումը. Սահմանադրությունը բարձրագույն իրավաբանական ուժով օժտված և իրավաստեղծման, իրավակիրառության և իրավագիտակցման համար իրավաբանական բազա հանդիսացող հիմնադրական, իրավաքաղաքական նորմատիվ իրավական ակտ է, ինչպես նաև «հասարակական դաշինքի» փաստաթուղթ:

Իրավական համակարգում սահմանադրական մշակույթը սահմանադրականությունն, ամենից առաջ, ամբողջականում ու դրսևորվում են տվյալ համակարգին բնորոշ սահմանադրական դոկտրինայի միջոցով:

Վերջինս իր հերթին ներառում է համակարգված գիտելիքների, սկզբունքների ու մոտեցումների ամբողջականություն՝ կենսագոյի հիմնարար հարաբերությունների, դրանց «ձևականացումը» հանդիսացող հիմնական օրենքի բովանդակության, իրավական բնույթի, սոցիալական դերի, քաղաքական նշանակության ու իրացման նախադրյալների վերաբերյալ»

Սահմանադրությունը լինելով իրավաբանական և փաստական սահմանադրության իրավականության արտահայտման ձև, պայմանավորված է մի շարք հետևյալ գործոններով.

1. իրավունքի գերակայությամբ,
2. մարդու իրավունքների և ազատությունների երաշխավորված

պաշտպանությամբ,

3. իշխանությունների տարանջատման համակարգով,

4. սոցիալական արդարությամբ,

5. անկախ դատական իշխանությամբ,

6. կայացած ինքնակառավարման մարմինների կուռ համակարգով,

7. ազատ, անկախ տեղեկատվությամբ:

«Սահմանադրության էություն» հասկացությունը ունի երկու առում. իրավաբանական և սոցիալական: Դրանք երկուսն էլ հանդես են գալիս միասնության մեջ, «զոդված» ձևով, առանց մեկի չկա մյուսը: Սույն աշխատանքում, դրանք տարբերակում ենք միայն գիտական աբստրակցիայի մակարդակում, իրականության առավել խորը ընկալման համար: Սահմանադրությունը որպես իրավաբանական երևույթ բնութագրվել է վերևում: Դրա էությունը այդ ասպեկտում արտահայտված է բարդեցված կարգով ընդունվող, բաձրագույն իրավաբանական ուժով օժտված և կարգավորման հատուկ օբյեկտ ունեցող սահմանադրության որպես հինադիր փաստաթղթի, հիմնական օրենքի որակով: Այս օբյեկտի ընդհանուր գծերի վերաբերյալ արդեն շարադրվել է, սահմանադրական կարգավորման օբյեկտի դետալային վերլուծության հարցին նվիրված են հատուկ գլուխներ:

Սահմանադրության սոցիալական էությունը կարող է ունենալ մեկ որակական բնույթ, սակայն կարող է ընդգրկել մի քանի տարբեր բաղադրիչներ: Ամենից առաջ, սահմանադրությունը կարող է արտահայտել և ամրագրել հասարակությունում գերակայող սոցիալական շերտերի գլխավոր, կենսական շահերը, նման սոցիալական շերտերի համընկնող շահերը, ըստ սոցիալական էության տարբեր շերտերի փոխզիջումը, ամբողջ ժողովրդի համընկնող շահերը հասարակության մեջ գերակայող սոցիալական շերտերի (օրինակ, այսպես կոչված «միջին խավի») առաջնության հաշվառմամբ:

Սահմանադրության ընդունման պահանջը առաջադրող լուսավորիչները չէին կիրառում «սահմանադրության էություն» և առավել ևս «սահմանադրության սոցիալական էություն» բառակապակցությունները, սակայն նրանց համար անվիճելի էր ընդհանուր դրույթը, սահմանադրությունը պետք է ծառայի ժողովրդի շահերին: Դրա համար նրանք պահանջում էին մարդանց իրավահավասարության ընդունում

(այսինքն, իրավաբանական, ֆորմալ հավասարության, ըստ օրենքի հավասարության), աբսոլյուտիզմի չեզոքացում: Նրանց ժամանակակից հետևորդները սահմանադրության գլխավոր իմաստը տեսնում էին պետական իշխանության չնայած ոչ բացարձակ սահմանափակումների մեջ: Արդեն նշված «Համեմատական սահմանադրական իրավունք» (Մ., 2002թ.) աշխատանքում բերված են ամերիկյան, ֆրանսիական, ճապոնական և այլ հեղինակների համապատասխան արտահայտությունները, որոնք հաստատում են այդ դրույթների արդարությունը:[77]

Սահմանադրության էության սահմանմանը բացարձակ այլ մոտեցում է առաջարկվել Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից: Մարքսիզմը, իսկ հետագայում լենինիզմը, բոլշևիզմը[78] բոլոր հասարակական (իսկ երբեմն ոչ միայն հասարակական) երևույթների գնահատմանը մոտենում էին դասակարգային դիրքորոշումներից, որ հասարակական դասակարգի կողմից են ստեղծվել, որ դասին են ծառայում, շահավետ են այս կամ այն հասարակական ինստիտուտները, կարգը: Մարքսիզմ-էնգելսիզմը և լենինիզմը (բոլշևիզմը) դիտարկում են ցանկացած սահմանադրություն որպես դասակարգային պայքարի արդյունք, որպես գործիք, որի օգնությամբ այս կամ այն դասը (ըստ իր բնույթի միատարր դասակարգերի, այլ սոցիալ-քաղաքական ուժերի միությունը) ամրագրում է իր գերակայումը: Նման մեթոդաբանական մոտեցում կիրառվել է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի կողմից իրենց ժամանակակից սահմանադրությունների վերլուծության համար:[79] Մարքսիզմի հիմնադիրները չէին ժխտում մարդու և քաղաքացու իրավունքները հռչակող դեմոկրատական սահմանադրությունների հսկայական դրական դերը, սակայն դրանում տեսնում էին բուրժուազիայի թաքնված շահերը:

Սահմանադրության էությանը հատուկ աշխատանք առաջին անգամ նվիրել է

---

[77] Տես՝ Сравнительное конституционное право. էջ 40.

[78] Բազմաթիվ հետազոտողներ տարբերակում են մարքսիզմ-լենինիզմը և լենինիզմը (բոլշևիզմը): Վերջինս, ինչպես համարվում է, բարեփոխել է քաղաքական մտքի առաջին ուղղության որոշ դրույքներ՝ պահպանելով հիմնական սկզբունքները: Բոլոր անվանումները ծագում են ուղղությունների հիմնադիրների ազգանուններից, իսկ «բոլշևիզմ» բառը ծագել է ռուս սոցիալ դեմոկրատների կուսակցական ժողովում բոլշևիկների (մեծամասնություն) և մենշևիկների (ժողովի ներկայացուցիչների փոքրամասնություն) բաժանման հետ կապված:

[79] Տես՝ **К.Маркс**, Классовая борба во Франции//Маркс К., Энгельс Ф. Соч. Т. 7, Маркс К. Британская конституция // Там же. Т.11. С.99-102. Энгельс Ф. Письмо И. Блоху. 21-22 сентября 1890г./Дам же Т. 37. էջ 393-397:

գերմանացի սոցիոլոգ Ֆ. Լասսելը (1825-1864):[80] Հիմնականում նա կիսում էր Մարքսի և էնգելսի դիրքորոշումները, չնայած առավել խորը մոտեցմամբ: Ֆ. Լասսելը Սահմանադրության էությունը դիտարկում է ամենից առաջ փաստացի և իրավաբանական սահմանադրությունների համեմատության տեսանկյուններից: Նա գրում է. «...Իսկապես երկրի սահմանադրությունը՝ դա հասարակությունում գոյություն ունեցող ուժերի հարաբերակցությունն է, գրառված սահմանադրությունը միայն այն դեպքում է ամուր և ունի նշանակություն, երբ հանդիսանում է հասարակական ուժերի իրական հարաբերակցության ճիշտ արտահայտում»:[81]

Վ. Ի. Լենինը ընդունեց Լասսելի դիրքորոշումը, սակայն այն սրեց, կապելով ոչ թե ուղղակի հասարակական, այլ դասակարգային ուժերի հարաբերակցության հետ, և տարածեց այս մոտեցումը այլ սահմանադրական օրենսդրության վրա: Նա հաստատում է. «Սահմանադրության էությունը նրանում է, որ ներկայացուցչական հաստատություններում ընտրական իրավունքին, դրանց իրավասությանը և այլնին վերաբերվող երկրի հիմնական օրենքները և ընդանրապես օրենքները արտահայտում են դասակարգային պայքարում ուժերի իրական հարաբերակցությունը»:[82]

Չի կարելի ասել, որ սահմանադրության էության հարցի վերաբերյալ սոցիալիստների դիրքորոշումը բացարձակ սխալական է: Այն կարող է կիրառվել որոշ սահմանադրությունների վերլուծության, հատկապես հեղափոխության հաղթանակից հետո ընդունվածների նկատամբ: ԱՄՆ 1787թ. Սահմանադրությունը ամրագրեց անգլիական միապետներից իշխանության փոխանցումը ամերիկյան գաղութների ժողովրդին, 1789թ. ֆրանսիական հեղափոխության ակտերը զրկեցին հոգևորականությանը և ազնվականությանը իշխանական արտոնություններից, 1918թ. Ռուսաստանի Սահմանադրությունը հռչակեց «պրոլետարիատի դիկտատուրան» (գործնականում գյուղացիների և աշխատավորության իշխանության չկար, սակայն բոլոր դեպքերում Սահմանադրությունը

---

[80] Տես՝ **Лассель Ф.** Сущность конституции: Что дальше? СПБ. 1905.

[81] Տես՝ **Лассель** Ф. Сущность конституции: Что дальше? էջ 33-34:

[82] Տես՝ **Ленин В.И.** Как социалисты -революционеры подводят итоги и как революция подвела итоги социалитам-революционерам//Полн. Собр. Соч. Т. 17 էջ 345:

իշխանությունից զրկում էր կապիտալիստներին և կալվածատերերին), Չինաստանի 1954թ. Սահմանադրությունը Գոմինդանի նկատմամբ կոմունիստների հաղթանակից հետո (1949թ.) ամրագրեց նոր կարգերը, գաղութային կախվածությունից երկրների ազատման արդյունքում 1950-1990-ական թվականներին իշխանությունը մետրոպոլից անցավ նախկին գաղութի ըստ իրենց բնույթի տարբեր ազգային ուժերին: Պետական իշխանության նոր բնույթ ամրագրեց Հայաստանի Հանրապետության 1995թ. Սահմանադրությունը (2005 և 2015թթ. փոփոխություններով):

Կարելի է բերել այլ օրինակներ, որոնցից հետևում է, որ կան սահմանադրություններ, որոնք ամրագրում են հասարակական կարգը որոշակի դասակարգային, սոցիալ-քաղաքական ուժերի շահերում: Սակայն երկրների մեծամասնության ժամանակակից պայմանների համար նման սահմանադրությունները տիպիկ չեն: Ժամանակակից սահմանադրության էությունը չի կարելի մեկնաբանել միակողմանի՝ հանգեցնելով այն միայն որևէ մեկ դասի, բարիդրացիական դասակարգերի միասնության, իշխանության կամ որոշ առաջնահերթ խնդիրների հիման վրա պահանջներով համընկնող սոցիալական հակադիր ուժերի ժամանակավոր բլոկի շահերի ամրապնդմանը: Առավել հաճախ ժամանակակից սահմանադրությունը ամրագրում է հասարակությունում ոչ թե որևէ մեկ կողմի կամքը, այլ տարբեր դասակարգային, սոցիալական, իսկ երբեմն այլ ուժերի սոցիալական փոխզիջումը, սակայն որոշակի սոցիալական շերտի կամ շերտերի գերակայմամբ: Փոխզիջման բովադակությունը՝ սահմանադրական կարգավորման օբյեկտը և հիմնական հասարակական հարաբերությունների կարգավորման եղանակները այս կամ այն շահերի հաշվառմամբ: Նման փոխզիջման հիմքում տեղակայված է հատուկ տեսակի պամանագիր: Դա պայմանավորվածությունն է հասարակության մեջ:[83] Նման տեսակի

[83] Ինչպես հայտնի է, ժ. ժ. Ռուսոն դեռ XVIII դարում ստեղծեց պետության պայմանագրային ծագած տեսությունը: Իհարկե բարդ գործընթացը չի կարելի հանգեցնել միայն հիպոթետիկ (ենթադրվող) պայանագրի ձևին, իսկ Ռուսսոն հատկապես այդպես էր մեկաբանում իր տեսութունը, ասելով, որ այս դեպքում որևէ փաստաթուղթ չի կազմվում: Այս հայեցակարգի ռացոնալ հատիկը կարող է կիրառվել նաև սահմանադրութան վերլուծության նկատմամբ այն էական տարբերությամբ, որ այս դեպքում միշտ արդյունքում գոյություն առկա է փաստաթուղթ: Սահմանադրության էության պայմանագրային-զիջումային տարրի հայեցակարգը արտացոլում է ժամանակակից իրականությունը:

համաձայնեցումը ունի խիստ իրավաբանական բնույթ, դրա կողմերը պաշտոնապես սահմանված չեն, չունեն որևէ փաստաթուղթ, որոնք լինելով որոշակի իրավական գործարքի կատարմանը լիազորված, ավարտված են կնիքներով: Տվյալ դեպքում խոսք է գնում ոչ թե իրավաբանական գործողությունների, այլ հասարակությունում հարաբերությունների բնույթի վերաբերյալ:

Ըստ բնույթի սահմանադրությունը՝ երբեմն սահմանադրական հանձնաժողովի, հիմադրական ժողովի կամ խորհրդարանի լռելայն, երբեմն բուռն և երկարատև քննարկումների արդյունքում համաձանություն (Իտալիա՝ 1946-1947թթ, Հայաստան՝ 1990-1995թթ., Հնդկաստան՝ 1948-1949թթ և այլն): Ինչպես ցանկացած այլ բան, նման համաձայնությունը հենված է ըստ որոշ հիմքերի առավել բարդ հարցերում կամ ըստ մասնավոր հարցերի համեմատաբար հեշտ ձեռք բերված փոխզիջման վրա: Փոխզիջումը հաճախ առկա է նաև ռազմական, հեղափոխական ժողովի կողմից ժամանակավոր սահմանադրության մշակման դեպքում (որտեղ, ինչպես թվում է առկա է կարծիքների բացարձակ միասնություն): Այդպես եղել է Եգիպտոսում, Իրաքում, Սիրայում, Մադագասկարում: Ի վերջո, մետրոպոլների կողմից շնորհված սահմանադրություններում առկա է նոր հոսանքները արտահայտող բնակչության որոշակի շերտերի հետ պայանագրի տարր, որը արտահայտվում է մուսուլմանական ֆունդամենտալիզմի երկրների նոր սահմանադրությունների կանանց և տղամարդկանց իրավահավասարության, ժողովրդի դերի վերաբերյալ նորմաներում, սոցիալական դրույթներում:

Պայմանագրային փոխզիջման մեջ, որը ունի բազմակողմ բնույթ (դրանում մասնակցում են հասարակության տարբեր ուժեր), փաստացի (իսկ երբեմն նաև իրավաբանորեն) ընդգրկվում են անհավասար ուժեր: Այս գործընթացում առկա է գերակայող կողմ, որին հաջողվում է իր համար լայնորեն կիրառել տարբեր ուժերի մրցունակության արդյունքները՝ ամրագրելով դա սահմանադրության մեջ: Այս պայմանագրային սոցիալական փոխզիջման զարգացման տարբեր փուլերում մասնակցում են տարատեսակ հասարակական ուժեր, իսկ դրանց հավասարակշռությունը կարող է փոփոխվել: Գիտության մեջ ընդունված է XVII- XIX դարերի Բրիտանական չգրված Սահմանադրության բնութագրությունը որպես

բուրժուազիայի (գործարարների) և պալատականության փոխզիջման արտահայտություն սկզբում ի օգուտ առաջինների (խորհդարանի ստորին պալատի դերի ուժեղացում, ընտրական իրավունքի մեջ գույքային ցենզեր), իսկ ներկայումս՝ ի օգուտ «միջին խավի» (սոցիալական օրենսդրություն), չնայած նաև այսօր նախկին պայքարի արձագանքները արտացոլում են ստանում սահմանադրական օրենսդրության մեջ:[84] Սոցիալական փոխզիջման վերաբերյալ վկայում է Իսպանիայի 1978թ. Սահմանադրության նախապատրաստումը, երբ դրա հիմնական դրույթները համաձայնեցվեցին քաղաքական կուսակցությունների հատուկ կոնֆերանսում, Աֆրիկայի երկրներում բազմաթիվ սահմանադրությունների ընդունումը դիկտատորական ռեժիմների փլուզումից հետո, երբ ապագա սահմանադրությունների հիմնական դրույթների մշակման համար ևս գումարվում էին ազգային կոնֆերանսներ (Զամբիա, Քենիա, Կոնգո և այլն): Այս կոնֆերանսների որոշումները գործում էին որոշ երկրներում, որտեղ սահմանադրությունները ընդունվեցին ոչ միանգամից, այլ ժամանակավոր սահմանադրական ակտերի որակով: Տարբեր կրոնական համայքների փոխզիջումը ամրագրում են Լիբիայի սահմանադրական համաձայնագրերը (1943թ), որի համաձայն պետական բարձրագույն պաշտոնները պետք է զբաղեցվեն տարբեր կրոնների և դրանց ներսում ուղղությունների ներկայացուցիչների կողմից:

Փոխզիջումը, որի վերաբերյալ խոսք է գնում, ձեռք է բերվում սահմանադրության նախապատրաստման ժամանակ տարբեր կարծիքների հակադրության, պայքարի, մրցակցության ընթացքում: Բնականաբար, նման մրցակցության ընթացքում առաջնությունը պատկանում է այն ուժերին, որոնք սոցիալական, քաղաքական, գաղափարական ոլորտներում գերակայում են հասարակության մեջ:

Սահմանադրությունը չի կարող չարտահայտել նման հարաբերակցությունը: Այդ իսկ պատճառով, խոսելով փոխզիջման որպես սահմանադրության էական հատկանիշի (ըստ ընդհանուր կանոնի) վերաբերյալ, չի կարելի մոռանալ, որ փոխզիջումը ձեռք է բերվում հասարակության մեջ գերակայող ուժերի առաջնության պահպանությամբ:

---

[84] Տես՝ **Романов А.К.** Право и правовая система Великобритании. М., 2010. էջ 32-33, **Фомичев А.В.** Основы конституционного права Великобритании, СПБ, 2008. էջ 4-8:

Ժամանակակից սահմանադրությունը՝ ոչ միայն հասարակությունում որոշակի սոցիալ-քաղաքական ուժերի կենսական շահերի ամրագրում է, ոչ միայն, որպես կանոն, ձեռք բերված փոխզիջման արտահայտում (երբեմն՝ կոնսենսիուսի, երբեմն՝ անվերապահ համաձայնության, ինչպես հաճախ է տեղի ունենում տոտալիտար ռեժիմների ժամանակ սահմանադրությունը ընդունող մարմինների շարքում),այլ նաև հասարակության մեջ հաստատված բազային փոխհարաբերությունների խտացված արտահայտում: Դրանք մարդու, կոլեկտիվի (տարբեր կոլեկտիվների, որոնք ունեն սեփական շահեր), պետության և հասարակության բազմակողմանի կապերն են:

Ի վերջո, ժամանակակից սահմանադրությունը՝ նաև հասարակության, ժողովրդի, կողմից ընդունված համամարդկային արժեքների խտացված արտահայտումն է: Նման արժեքների (համաձայնություն, բարիք, արդարություն, խաղաղություն և այլն) առաջին դրույթները սկսեցին ձևակերպվել հազարամյակներ առաջ տարբեր ավանդույթներում, իսկ հետագայում անտիկ գրողների և արևելյան մտածողների ստեղծագործություններում: Դրանք զարգացրեցին Նոր ժամանակների լուսավորիչները, հետագա փիլիսոփաները, սակայն արժեքների հայեցակարգը (սկզբում արժեքների որպես այդպիսիք) առաջին անգամ ստեղծվել է XIX դ. վերջերի -XX դ. սկզբների ավստրական և գերմանական գրականության մեջ: Սկզբում խոսք էր գնում ուղղակի արժեքների վերաբերյալ («համամարդկային» ածականը ծագել է հետագայում), որի տակ ընկալվում էին մարդկային գործունեության գնահատման համար համընդհանուր նշանակություն ունեցող ապրոիրային (այսինքն նախապես ձևակերպված) սկզբունքները: Այս սկզբունքներով հետազոտողը ղեկավարվում էր պատմական փաստերի ընտրության և ընդհանրացման, գնահատականների և եզրակացությունների ձևակերպման դեպքում:

Գիտության մեջ այս խնդրի առաջադրումը կապում են գերմանացի փիլիսոփա Վ. Վալդենբանդի (1848-1915) և նրա հայրենակից, նեոկանտության հայտնի ներկայացուցիչներից մեկի, փիլիսոփա և սոցիոլոգ Դ. Դիկերտի (1863- 1936) անվան հետ: Արժեքների համակարգավորմանը և վերլուծությանը անցումը նշմարվել է Ա. Շելերի (1875-1928), ով կազմեց արժեքների գրադիացիան (զգայական, քաղաքացիական, կրոնական, կենսական, մշակութային), Մ. Վեբերի (1864-1920),

ով հիմնական ուշադրությունը հատկացրեց սոցիալական (հասարակական) արժեքներին, իսկ առավել որոշակի Օ. Շպենգլերի (1880-1936) աշխատանքներում: Մերժելով պատմական գործընթացը՝ Շպենգլերը պնդում էր, որ յուրաքանչյուր քաղաքակրթություն ստեղծում է իր արժեքները: Սոցիալական արժեքներին առանձնահատուկ ուշադրություն են հատկացրել հեղինակներ Մ. Ադլերը (1873-1937) և Կ. Ռենները (1870-1950), ամերիկացի փիլիսոփա Ջ. Դյուին (1859-1952), իսպանացի Խ. Օրտեգա-ի-Գասետը (1883- 1955), ֆրանսիացի հեղինակ է. Մունեն (1905-1950): Առաջին երկուսը սոցիալական արժեքների թվին դասում էին ազատությունը, արդարությունը, հավասարությունը: Այս ցանկը հիմնականում պահպանվել է նաև այսօր, ավելացվել է դեմոկրատիան, մարդու իրավունքները և խաղաղությունը: Ջ. Դյուին կապում էր սոցիալական արժեքները (ինչպես նաև ընդհանրապես արժեքները) հասարակության համար դրանց գործնական օգտակարության հետ և դրանց էր դասում դեմոկրատիան և ազատությունը: Խ.Օրտեգա-ի-Գասետը հատկապես պնդում էր անհատականացման նշանակության վրա: Է. Մունեն, հակառակը, հանդես էր գալիս կոլեկտիվիզմի կողմը: Հասարակական արժեքների իր հիերարխիան առաջարկել է գերմանացի սոցիոլոգ Կ. Պոպպերը (1902-1994): Նա նախապատվություն էր տալիս ազատությանը արդարության նկատմամբ, համարելով, որ ազատությունը գոյություն ունի սկզբունքորեն տոտալիտար հասարակությունից տարբերվող բաց հասարակության մեջ: Հայտնի ամերիկացի փիլիսոփա Ջ. Ռոլսը, հակառակը, պնդում էր, որ արդարությունը՝ սոցիալական ինստիտուտների համար առաջին անհրաժեշտությունն է: Ըստ նրա կարծիքի, «արդարությունը բացառում է եսասիրության տարբեր ձևերը»[85] և այդ իսկ պատճառով առանձնահատուկ կարևոր է հասարակության համար:

XXդ. 60-70-ական թվականներին արևմտյան գրականության մեջ հասարակության արժեքների շարքում առանձնահատուկ շեշտադրություն էր կատարվում մարդու իրավունքների վրա: Մարդու իրավունքների գաղափարների քարոզչությունը իրականացվում էր պնդումների դիրքորոշումներից, որ դրանք չեն պահպանվում տոտալիտար սոցիալիզմի երկրների պայմաններում (դրանց շարքում

[85] Տես՝ **Rewls J.** Theory of Justice. Oxford, 1972, էջ 18:

ամենից առաջ նշվում էին ԽՍՀՄ, ԿԺԴՀ, Ռումինիան, Կութան և այլն), որ սոցիալիզմը որպես հասարակական կառուցվածք չի համակցվում մարդու իրավունքների պահպանման և հարգանքի սկզբունքների հետ:

70-80-ական թվականներին, սոցիալիզմի դիրքերից չեխոսլովակյան ղեկավարության հեռացման կասեցման նպատակներով Չեխոսլովակիա խորհրդային զորքի (պաշտոնապես՝ Վարշավան պայմանագրի երկրների զորքերի) մուտքից հետո համամարդկային արժեքների հայեցակարգը իրենց դիրքերից մշակում էին տարբեր երկրների եվրամարքսիստները (հատկապես Իսպանիան, Իտալիան, Ֆրանսիան): Նրանք հանդես էին գալիս որպես հասարակական կառույց սոցիալիզմի կողմ, սակայն «դեմոկրատական սոցիալիզմի», «մարդկային դեմքով սոցիալիզմին» կողմ: Նման հրատարակումների շարքում առավել հայտնի էին Ֆրանսիայի Կոմպարտիայի ղեկավարության անդամ Ռոժե Գորոդի փիլիսոփայական աշխատանքները: Հիմնականում ի շնորհիվ եվրամարքսիստների աշխատանքների «համամարդկային արժեքներ» տերմինը ստացավ լայն տարածում: Հատուկ շեշտադրություն եվրամարքսիստները կատարում էին ազատության և սոցիալական արդարութան վրա, իսկ մարդու իրավունքների գաղափարը զարգացրեցին մինչև պնդումը, «մարդը՝ բարձրագույն արժեք է»: Վերջին դրույթը ընդունվել է նաև ՀՀ Սահմանադրությամբ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է» (ՀՀ Սահ. հոդվ. 3, 1-ին կետ):

Իրականացված վերլուծությունը վկայում է համամարդկային արժեքների նկատմամբ տարբեր մոտեցումների վերաբերյալ: Ինչ-որ ընդհանուր ընդունված ռեստր գոյություն չունի: Սակայն ակնհայտ է, որ ըստ ընդհանուր կանոնի (գոյություն ունեն նաև բացառություններ) հասարակության մեջ պայանագրի գծեր (նման գծերը անխուսափելի բխում են փոխզիջումների որոնումներից) ունեցող սահմանադրությունը չի կարող չհղվել այն համամարդկային արժեքների ամրագրումից, որոնց նկատմամբ հասարակության մեջ ձեռք է բերվել (թեկուզ երբեմն ստիպողական և վերապահումներով) համաձայնություն:

Ժամանակակից սահմանադրության որպես հատուկ իրավաբանական փաստաթղթի էության առանձնահատկությունները կայանում են նրանում, որ այն իրենից ներկայացնում է տարբեր սոցիալական ուժերի կենսական շահերի, նրանց

փոխզիջումների և կոնսենսիուսի, հասարակության կողմից ընդունվող համամարդկային արժեքների նորմատիվ-իրավական արտահայտում իրականացված բարձրագույն իրավական, հիմնական օրենքի մակարդակում:

Ժամանակակից դեմոկրատական, սոցիալիզացված, կոլեկտիվացված և ինֆորմացված հասարակության պայմաններում (վերջինս սահմանում է հասարակական կարծիքի էական, իսկ երբեմն վճռորոշ ազդեցությունը իշխանական կառույցների վրա) սահմանադրության էությունը կարող է բնութագրվել որպես հիմնական օրենքով ժողովրդի համընկնող կենսական շահերի ամրագրում գերակայող սոցիալական առանձին շերտերի շահերի դոմինանտության պայմաններում, համամարդկային արժեքների ընդունում և այդ բազայի հիման վրա հասարակությունում ձեռք բերված փոխզիջման կամ կոնսենսուսի իրավաբանական արտահայտում:

Եթե այս բնութագրության հիման վրա փորձենք տալ առավել սեղմ սահմանում, ապա հնարավոր է ասել, որ ժամանակակից սահմանադրության էությունը՝ հասարակության մեջ համամարդկային արժեքների ընդունման հիման վրա ձեռք բերված փոխզիջման բարձրագույն օրենսդրական ամրագրումն է դոմինանտ սոցիալական հանրության առաջնությամբ:

Գիտական գրականության մեջ գոյություն ունեն սահմանադրության տարբեր դասակարգումներ: Չնայած դրանցում չի խոսվում էության վերաբերյալ, դասակարգումներից շատերը (դեմոկրատական և տոտալիտար, սոցիալական և գործիքակազմային և այլ սահմանադրություններ) հաշվի են առնում այդ չափորոշիչները: Նման դասակարգումները բացահայտում են էության որոշակի կողմերը, սակայն կոլեկտիվային բնույթ չունեն: Նման դիրքորոշումներից հնարավոր չէ տալ ըստ իրենց էության ժամանակակից սահմանադրությունների ընդհանրացված դասակարգումները: Ըստ մեր տեսանկյան, ներկայումս աշխարհում գործում են սահմանադրությունների չորս տեսակներ, որոնք տարբեր են ըստ իրենց սոցիալական էության, ժողովրդավարական, բռնատիրական, սոցիալիստական և հետսոցիալիստական սահմանադրություններ:

Սահմանադրության էությունը անխզելի կապված է դրա ձեռքբերումների հետ, ընդ որում էությունը արտացոլում է սահմանադրության բնույթը առավել խորը, իսկ

բովանդակությունը՝ հարուստ, բազմակողմ: Ժամանակակից սահմանադրության բովանդակությունը՝ հասարակության մեջ տվյալ պայմաններում ձեռք բերված կոնկրետ փոխզիջման նորմատիվ արտահայտման այս կամ այն եղանակ է: Արտաքնապես բովանդակությունը ներկայացված է հիմնական օրենքի նորմերի համախմբով, որոնք էլ սահմանում են մարդու - կոլեկտիվի - պետության և հասարակության փոխկապվածությունների հիմքերը այս կամ այն սահմանադրական մոդելում, իսկ կոնկրետ սահմանադրության վերլուծության ժամանակ՝ տվյալ սահմանադրության մեջ: Դիտարկելով այս կամ այն սահմանադրական մոդելի կամ կոնկրետ սահմանադրության բովանդակությունը, կարևոր է տարբերակել միավորված կերպով վերջինիս բովանդակություն կազմող երկու տարրեր, սոցիալական բովանդակությունը, այսինքն մարդու - կոլեկտիվի - պետության և հասարակության հասարակական հարաբերությունների կարգավորման բնույթը որոշակի սոցիալ-քաղաքական ուժերի շահերում, և իրավական բովանդակություն՝ այն նորմատիվ-իրավական նյութը, որից բաղկացած է սահմանադրությունը, որը ամփոփված է վերջինում (նորմեր, ինստիտուտներ, սկզբունքներ): Տարբեր սահմանադրություններում նշված փոխկապվածությունների արտահայտման համար կիրառվում են նորմերի տարբեր ձևակերպումներ, տարբեր իրավական ինստիտուտներ: Սոցիալական և իրավական բովանդակության առանձնահատկությունները, համատեղված, տրամադրում են այս կամ այն սահմանադրական մոդելը, որի սահմանումը տվել ենք վերևում: Այն կարող է ներկայացվել մեկ սահմանադրությամբ, սակայն առավել հաճախ դա մի քանի, երբեմն նաև բազմաթիվ սահմանադրությունների առանձնահատկությունների ընդհանրացումն է:

Առաջին սահմանադրությունները և սահմանադրական փաստաթղթերը, որոնք արտացոլում էին Եվրոպայի և ԱՄՆ առաջատար երկրներում կապիտալիստական հասարակության հաստատման և կայացման շրջանը (ԱՄՆ 1787թ. սահմանադրություն, ֆրանսիական 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը և 1791թ. Սահմանադրությունը և այլն), իսկ հետագայում՝ այլ մայրցամաքների երկրներում (XIX դ. 20-40-ական թվականների Իսպանիայի, Պորտուգալիայի, Լատինական Ամերիկայի երկրների, 1889թ. Ճապոնիայի, 1906թ.

Իրանի և այլ սահմանադրություններ), ըստ իրենց սոցիալական և իրավական բովանդակության, ինչպես ասվում էր, ներկայացնում էին լիբերալ-շուկայական մոդել: Դրա սոցիալական բովանդակության արտահայտման համար կիրառվել են այնպիսի սկզբունքներ, իրավական ինստիտուտներ, նորմեր, որոնք շեշտադրում էին ֆորմալ, սակայն ոչ լիարժեք հավասարությունը, սահմանափակ դեմոկրատիան, խոչընդոտում էին հասարակության և անհատի կյանքում պետական (պետական բյուրոկրատիայի) միջամտությանը, հաստատում նոր իշխանության կազմակերպչական կառուցվածքները, սակայն հասարակության մեջ սոցիալական հարաբերությունները, ինչպես նաև հասարակության կազմակերպման հիմքերը, այդ սահմանադրությունները չեն կարգավորում: Այդ իսկ պատճառով նաև դրանց իրավական բովանդակությունը լինում է հակիրճ:

Առաջին Համաշխարհային պատերազմից հետո ծագեց սոցիալիստական սահմանադրական մոդելը (1918թ. ՌԱՖԱՀ, 1924թ, 1936թ. ԽԱՀՄ, 1940թ. Մոնղոլիայի և այլ սահմանադրություններ): Այս մոդեը պահպանվել է նշված երկրներում Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո և ստացել նոր տարածում Կենտրոնական և Հարավ-Արևելյան Եվրոպայի, Արևելյան և Հարավ-Արևելյան Ասիայի երկրներում: Այն պահպանվել է նաև այդ երկրների մեծամասնությունում տոտալիտար սոցիալիզմի չեզոքացումից հետո, ներկայումս այն գործում է ԿԴՀ, Կուբայում, որոշ այլ երկրներում: Տվյալ մոդելը կառուցվում է հասարակության օրինաչափ զարգացման վերաբերյալ մարքսիզմ-լենինիզմի տեսության հիման վրա: Դրա սոցիալական և իրավական բովանդակությունը ենթակա է նորի ստեղծման, սոցիալիստական հասարակության սոցիալական պահանջներին: Դրա համար օգտագործվում են բացարձակ այլ սկզբունքներ (օրինակ, «յուրաքանչյուրից՝ ըստ ունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի»), իրավական ինստիտուտներ (սոցալիստական պետական սեփականության ինստիտուտ), իրավական նորմեր (իշխանությունը՝ Խորհուրդներին): Ժողովրդական ինքնավարության սկզբունքի փոխարեն ամրագրվում էր իշխանության դասակարգային բնույթը, «պրոլետարիատի դիկտատուրան», աշխատավորության իշխանությունը, ժողովրդական դեմոկրատիայի դիկտատուրան և այլն: «Շահագործողները» իշխանությունից

մեկուսացված են: Անհատի ինքնուրույնության սկզբունքը փոխարինվում է հասարակությանը և պետությանը նրա ենթակայությամբ, մարդու և քաղաքացու իրավունքները պետք է կիրառվեն «սոցիալիստական շինարարության շահերում»: Մասնավոր սեփականությունը ենթակա է անբեկանելի լիկվիդացման: Ներկայումս սոցիալիստական երկրներում այն թույլատրվում է, սակայն գլխավոր ձևը՝ սոցիալիստական պետական սեփականությունն է: Մարքսիստական-լենինյան կուսակցությունը (ԽԱՀՄ, սոցիալիստական Հունգարիայում, Ռումինիայում, Մոնղոլիայում և այլն՝ միակը) այդ սահմանադրություններով հռչակվում է հասարակության և պետության ղեկավարող ուժ: Պետությանը տրվում է առաջնային դեր հասարակության զարգացման մեջ. այն հայտարարվում է սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման գլխավոր զենք: Այս ամենի համար անհրաժեշտ են իրավական նորմերի այլ ձևակերպումներ, դրանք հաճախ բնութագրվում են առանձնահատուկ դաժանությամբ: Ըստ իրենց բովանդակության սոցիալիստական սահմանադրությունները դուրս են գալիս լիբերալ-շուկայական հարաբերությունների շրջանակներից, դրանք կարգավորում են հասարակության գլխավոր հիմքերը, սոցիալական, քաղաքական և հոգևոր հարաբերությունները: Այս սահմանադրությունները առաջին անգամ ամրագրել են քաղաքացիների տնտեսական և սոցիալական իրավունքները: Սոցիալիստական սահմանադրություններում սոցիալական և իրավական բովանդակության փոփոխությունը, դրա նկատմամբ նոր սկզբունքային մոտեցումները ունեցան դրական նշանակություն սահմանադրական տեսության և պրակտիկայի զարգացման մեջ, հետագայում մեծ ազդեցություն՝ ժամանակակից սահմանադրությունների բովանդակության վրա: Սակայն նման փոփոխությունների էությունը հակադեմոկրատական էր. դրանք ամրագրում էին տոտալիտար կարգերը:

Ինչպես ասվեց, Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո աշխարհում ձևավորվեց և հետագայում սկսեց գերակայել ժամանակակից հասարակության սահմանադրության սոցիալ-գործիքակազմային դեմոկրատական մոդելը: Նույն ուղղով ընթացան հետ սոցիալիստական պետությունները տոտալիտար սոցիալիզմի փլուզումից հետո, ինչպես նաև Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի բազմաթիվ երկրներ՝ ազատվելով տոտալիտար կառավարման տարբեր

համակարգերից: Այս մոդելն ունի բազմաթիվ տարատեսակություններ: Հետ սոցիալիստական սահմանադրությունները տարբերվում են 1947թ. Իտալիայի կամ 1978թ. Իսպանիայի սահմանադրություններից, հետ սոցիալիստական սահմանադրությունների խմբի ներսում ևս առկա են տարբերություններ (Ուզբեկստանի Հանրապետության Սահմանադրությունը, օրինակ, էականորեն տարբերվում է Լեհաստանի Հանրապետության Սահմանադրությունից):

Ժամանակակից տեղեկացված, բաց հասարակության (առկա են նաև այլ բնութագրություններ) սահմանադրության սոցիալ - գործիքակազմային դեմոկրատական մոդելի բովանդակությունը ամենից առաջ սահմանվում է նրանով, որ այն ելնում է համամարդկային արժեքներից՝ մեկնաբանելով դրանք սոցիալական դիրքորոշումներից (սոցիալական համերաշխություն, սոցիալական արդարություն և այլն), միևնույն ժամանակ պահպանելով և զարգացնելով նախկին դարաշրջանների ժողովրդավարական արժեքները: Ըստ իր իրավական բնութագրության այն դուրս է գալիս լիբերալ սահմանադրության շրջանակներից, կիրառելով անպիսի իրավական գործիքակազմ, որը հնարավորություն է տալիս իրավական նորմերում և ինստիտուտներում ամրագրել մարդու, կոլեկտիվի, պետության և հասարակության համար կենսական կարևորություն ունեցող արժեքները: Միևնույն ժամանակ ժամանակակից սահմանադրություններում ծագում են այնպիսի իրավական ինստիտուտներ, որոնք բացակայում են Նախկին հիմնական օրենքներում:

Սոցիալական և իրավական բովանդակությունը իր արտահայտումն է ստանում ըստ կարգավորվող հարաբերությունների բնույթի, իրավաբանական նշանակության, ըստ արտահայտման ձևի տարբերակվող սահմանադրական նորմերի տարբեր տեսակներում: Դրանց շարքում սահմանադրություններում հիմնական զանգվածը կազմում են նորմեր-կանոնները, որոնք հաստատում են այս կամ այն սահմանադրական-իրավական հարաբերությունների սուբյեկտների (մասնակիցների) կոնկրետ իրավունքները և պարտականությունները, նրանց իրավական գործունեության եղանակները (պարտադիր, հանձնարարվող, թույլատրվող): Նորմեր-կանոնները կարգավորում են քաղաքացու և մարդու իրավունքները և պարտականությունները, ամրագրում նախագահի, խորհրդարանի, կառավարության և այլնի իրավասությունները: Նորմ-կանոնների շարքում

գերակայում են առարկայականը, այսինքն իրավունքներով օժտող (օրինակ, նախագահական վետոյի իրավունք) և վերագրում պարտականություններ (նախագահի օրենքի հաստատման և հրապարակման իրավունք):

Նորմ-կանոնները լինում են մշտական (հաշվարկված գործունեության անորոշ ժամանակի համար) և ժամանակավոր (դրանք սովորաբար առկա են սահմանադրության անցումային դրույթներում), լիազորող (իրավունքներ տրամադրող) և պարտադրող, հղվող (այլ նորմերին հղող) և այլն:

Նորմ-կանոնների համեմատությամբ նորմ-նպատակները սահմանադրության մեջ զբաղեցնում են համեմատական քիչ տեղ, սակայն դրանց նշանակությունը սովորաբար մեծ է: Հաճախ հիմնական օրենքի նորմատիվ ձևով սահմանում են երկրի զարգացման կողմնորոշումը: Ճապոնական 1946թ. Սահմանադրության նախաբանում (ներածությունում), մասնավորապես, ասվում է. «Մենք ցանկանում ենք զբաղեցնել պատվավոր տեղ միջազգային հանրույթում...», Չինաստանի 1982թ. Սահմանադրության նախաբանում առաջադրվում է երկիրը «բարձր քաղաքակրթված, բարձր դեմոկրատական, սոցիալիստական պետության» վերածման նպատակները:

Բազմաթիվ կոնկրետ նպատակներ («հաստատել իրավական պետություն», զարգացնել մշակույթը և տնտեսությունը և այլն) ձևավորված են Իսպանիայի 1978թ. Սահմանադրության մեջ: Նորմ նպատակները սովորաբար ընդգրկվում են նախաբանում, սակայն առկա են սահմանադրության նաև այլ հոդվածներում:

Նորմ-նպատակները սովորաբար ընդգրկվում են նախաբանում, սակայն առկա են սահմանադրության նաև այլ հոդվածներում:

Նորմ սկզբունքները, որոնք առկա են սահմանադրություններում՝ դա հիմքերի իրավական արտահայտումներն են, վերջիններով ամիրաժեշտ է ղեկավարվել: Դրանք բնույթի տեսանկյուններից կարող են տարանջատվել համապարփակների (համընդհանուրների), հատուկների և միավորականների: Ժամանակակից սահմանադրությունների համապարփակ ձևակերպումները մշակվել են համաշխարհային քաղաքակրթության կողմից և հաճախ ունեն համամարդկային արժեքների նշանակություն: Դրանց են դասվում, օրինակ, սեփականության, աշխատանքի, արդարության, իշխանության, ժողովրդավարության ժողովրդի,

մարդու իրավունքների վերաբերյալ նորմերը:

Այս բառերը կիրառվում են բոլոր մոդելներին դասվող սահմանադրություններում, սակայն դրանք գտնում են տարբեր բեկումներ որոշակի սոցիալական շահերի միջոցով: Այդ իսկ պատճառով դրանք մեկնաբանվում են բացարձակ տարբեր, երբեմն նաև հակադիր ձևով: Իրենց սոցիալիստական անվանող երկրների սահմանադրություններում ժողովրդի տակ ընկալվում է միայն «աշխատավոր դաս», խոսվում է պրոլետարիական կամ սոցիալիստական դեմոկրատիայի վերաբերյալ, «շահագործողները» սահմանադրությամբ կամ այլ օրենքներով զրկվում են որոշակի (առավել հաճախ իրավական) իրավունքներից, մասնավոր սեփականությունը արգելված է կամ սահմանափակված և այլն:

Հատուկ սահմանադրական նորմ-սկզբունքները բնորոշ են սահմանադրությունների այս կամ այն խմբերին, որոշակի սահմանադրական մոդելներին: Դեմոկրատական երկրների սահմանադրություններում խոսվում է սեփականության բոլոր ձևերի իրավահավասարության, քաղաքական և գաղափարական պլյուրալիզմի, իշխանությունների ճյուղավորման, տեղի ինքնակառավարման վերաբերյալ: Սոցիալիստական սահմանադրության տոտալիտար մոդելում ամրագրվում են սոցիալիստական (հատկապես պետական) սեփականության գերակայման սկզբունքները, մեկ կուսակցության (կոմունիստականի) ղեկավարական դերը, մեկ գաղափարախոսության (մարքսիզմ-լենինիզմի) գերակայումը, մերժվում տեղի ինքնակառավարումը, ասվում, որ ամբողջ իշխանությունը կենտրոնացվում է սովետներում, որոնք էլ հայտարարվում են «ներքևից վերև» պետական իշխանության միակ մարմիններ:

Իրենց առանձնահատկությունները ունեն որոշ զարգացող երկրների սահմանադրական նորմ-սկզբունքներ: Երբեմն դրանցում խոսվում է ազգայնության սկզբունքի վերաբերյալ (Բանգլադեշի 1973թ. Սահմանադրության հոդ. 6, Ինդոնեզիայի 1945թ. Սահմանադրության նախաբան), որի տակ ընկալվում են ազգային միասնության ամրապնդման խնդիրները, երկրի ազգային կոնսոլիդացիան, տարբեր էթնիկ խմբերի «միաձուլումից» միասնական ազգության ստեղծումը: Աֆրիկայի բազմաթիվ սահմանադրություններում շարադրված է աֆրիկյան միասնության սկզբունքի վերաբերյալ, մուսուլմանական պետությունների

խմբում այս կամ այն ձևով հռչակվում է իսլամական արժեքների սկզբունքը:

Առանձին երկրների սահմանադրություններում պարունակվում են առանձնահատուկ սկզբունքներ (միավորական բնույթի սկզբունքներ): Այսպես, Ճապոնիայի 1946թ. Սահմանադրության հոդ. 9 և Իտալիայի 1947թ.:

Սահմանադրութան հոդ. 11 պարունակվում է պետության արտաքին քաղաքականության կարևոր սկզբունք՝ հրաժարում պատերազմից: Ճապոնական սահմանադրության մեջ ասված է, որ ճապոնական ազգությունը «հավերժ ժամանակներով հրաժարվում է պատերազմից որպես ազգության ինքնիշխան իրավունք»: Կոստա-Ռիկայի 1945թ. Սահմանադրության մեջ ամրագրված է մշտական բանակի ստեղծումից հրաժարման սկզբունքը: Նույն բանը վերաբերվում է Շվեցարիային:

Ժամանակակից սահմանադրություններում առկա է նաև նորմերի այլ տեսակներ, նորմ-սահմանում խորհրդանիշներ (օրինակ, Գվինեայի 1990թ. Սահմանադրության հոդ. 1 հաստատում է «հանրապետության կարգախոսը». «Աշխատանք, արդարություն, համերաշխություն»):

Իրավական բովանդակության նորմերին զուգահեռ սահմանադրությունները իրենց արտահայտումն են ստանում իրավական ինստիտուտներում: Իրավական ինստիտուտը՝ իրավունքի որոշակի ոլորտի սահմաններում միատարր, սակայն հարմարեցված հասարակական հարաբերությունների նորմերի համակարգ է: Տվյալ դեպքում խոսք է գնում ոչ թե սահմանադրական իրավունքի ոլորտի, այլ սահմանադրական նորմերի համակարգի վերաբերյալ: Սահմանադրական նորմերի նման ինստիտուտը ներառում է առավելագույն դրույթները, որոնք էլ ստանում են իրենց զարգացումը սահմանադրական իրավունքի այլ ակտերում (ամենից առաջ օրենքներում) և սահմանադրական նորմերի հետ ձևավորում սահմանադրական-իրավական ինստիտուտը: Սահմանադրական ինստիտուտների թվին դասվում են տնտեսական, սոցիալական, քաղաքական համակարգերի, հասարակության հոգևոր կյանքի, սեփականության, աշխատանքի, պետության ղեկավարի կարգավիճակի վերաբերյալ ելակետային դրույթների, դատական համակարգի, տեղի ինքնակառավարման և այլ սահմանադրական հիմքերը:

Սահմանադրության «բովանդակություն» (սոցիալական և իրավաբանական,

որոնք գործնականում հանդիսանում են «միավորված» ձևով) հասկացությանը զուգահեռ սահմանադրությանը նվիրված հետազոտություններում կիրառվում է սահմանադրության «հիմնական հատկություններ» կամ «հիմնական գծեր» բառակապակցությունը: Այս հասկացությունների միջև հստակ սահմանազատումներ հաստատված չեն: «Հատկությունների» և «գծերի» շարքում սովորաբար նշում են իրավաբանական, քաղաքացիական և գաղափարական բնույթի երևույթներ: Առաջինների շարքում նշում են նրանք, որոնք առկա են վերևում սահմանադրության սահմանման մեջ. սահմանադրության որպես հիմնական օրենքի բնույթը, դրա բարձրագույն իրավաբանական ուժը, փոփոխությունների ընդունման բարդեցված կարգը, ինչպես նաև դրա հետ կապված սահմանադրության կայունությունը: Ճշմարիտ է այս բնութագրիչներից առկա են բացառություններ: Մուսուլմանական երկրներում սահմանադրությունից վեր կանգնած է Ղուրանը (դրան հակասող օրենքները չեն գործում, անկախ նրանից, համապատասխանում են սահմանադրությանը, թե ոչ)[86]: Մեծ Բրիտանիայում խորհրդարանի բոլոր օրենքները անկախ նրանից, համարվում են սահմանադրության հասկացության մեջ ներառվող օրենքներ, թե ոչ, հավասար են ըստ իրենց իրավական ուժի, ընդունման և փոփոխության կարգի: Սահմանադրության կայունությունը ևս չի պահպանվում բազմաթիվ երկրներում: Վենեսուելայում գրեթե երկու հարյուրամյակում (1811 թ-ից) փոխվել են չորս տասնյակ սահմանադրություններ, այսինքն միջինում սահմանադրությունը փոխվել է հինգից-վեց տարին մեկ անգամ (հաճախ նոր նախագահի ընտրության հետ կապված), չնայած դրանց տեսքերը շատ նման են: Ինչպես նշվել է, հաճախակի սահմանադրությունը փոփոխվել է Թայլանդում (դրանցից շատերը հռչակվել են որպես ժամանակավորներ), Եմենում, մի շարք աֆրիկյան երկրներում: Որոշ երկրներում հաճախակի կատարվում է սահմանադրության լրացումներ և փոփոխություններ: Մեքսիկական 1917թ. Սահմանադրության մեջ (գրեթե ինը տասնամյակի ընթացքում) կատարվել են 600 լրացումներ, մեծամասությունում ռեակցիոն, սակայն բոլոր դեպքերում լրացումներ: Նաև ՌԽԴՍՀ 1978թ. Սահմանադրության մեջ «վերակառուցման» մի քանի

[86] Մանրամասն տես՝ **Сюкияйнен Л.** Глобализация и мусульманский мир: оценка совершенной исламской правовой мысли. М., 2012:

տարիների ընթացքում (մինչև 1993թ) կատարվեցին մոտավոր 500 լրացումներ, 100-ից ավելին լրացումներ կատարվել են Գերմանիայի 1949թ Սահմանադրության մեջ, բազմաթիվ՝ Ֆրանսիայի 1958թ. Սահմանդրության մեջ: Դրանք հաճախակի էականորեն փոփոխում են այդ սահմանադրությունների բովանդակությունները: ԱՄՆ Սահմանադրության մեջ 220 տավա ընթացքում ներառվել են ընդամենը 27 լրացումներ (դրանցից ոմանք նորացվել, սակայն հետագայում չեղյալականացվել են): Ճապոնական 1946թ. Սահմանադրության մեջ չի կատարվել որևէ լրացում: Այդ իսկ պատճառով, խոսելով Սահմանադրության կայունության վերաբերյալ, անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր գործոնները:

Սահմանադրության քաղաքական հատկությունները պայմանավորված են կարգավորվող հարաբերությունների բնույթով: Սահմանադրության քաղաքական հատկությունների գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հասարակության խնդիրների լուծման նկատմամբ քաղաքական մոտեցման առաջնային նշանակությունը, ինչպես նաև, որ սահմանադրությունը հաստատում է հասարակության մեջ հանրային իշխանության ինստիտուտների՝ պետական մարմինների, դաշնության սուբյեկտների, ինքնավար տարածքային, մունիցիպալ ձևավորումների, տարածքային հանրային կոլեկտիվների, դրանց ժողովրդի (ժողովրդի հատվածի, հաճախ՝ երկրի բազմազգ ժողովրդի) շուրջը ձևավորվող հիմնական քաղաքական գործընթացները: Սահմանադրության քաղաքական հատկությունները կապված են հասարակության մեջ քաղաքական կուսակցությունների դերի հետ (ժամանակակից սահմանադրություններում սովորաբար ասվում է, որ կուսակցությունը ձևավորում է ժողովրդի քաղաքական կամքը և նպաստում ընտրությունների ուղիով դրա արտահայտմանը), անմիջական ժողովրդավարական ինստիտուտների դերով (ընտրություններ, հանրաքվե և այլն), հասարակության կառուցվածքի կազմակերպման մեջ հասարակական միավորումների տեղով: Քաղաքական մոտեցման դիրքորոշումներից լուծվում են հասարակության համար կարևոր հարցեր սեփականության, տնտեսական հարաբերությունների, ֆեդերալիզմի, տեղի ինքնակառավարման վերաբերյալ: Քաղաքական հատկանիշների ընդհանրացված արտահայտումը հանգեցնում է դեմոկրատական, ավտորիտար, տոտալիտար սահմանադրությունների

դասակարգմանը:

Ցանկացած սահմանադրություն ներառում է որոշակի գաղափարախոսություն[87]: Սահմանադրության գաղափարախոսական հատկությունները առավել հստակ արտահայտված են դրա սկզբունքներում, նորմ - նպատակներում, որոշ սահմանադրություններում առկա ծրագրային դրույթներում, այս կամ այն գաղափարախոսությունների նկատմամբ հասարակության վերաբերմունքի վերաբերյալ նորմերում: Վերջնական արդյունքում, ինչպես ասվել է, այս բոլոր դրույթները առավել կամ պակաս հստակ, իսկ որոշ դեպքերում (ԱՄՆ, Նորվեգիայի սահմանադրություններ) թաքնված ձևով արտացոլում են այն գաղափարախոսությունը, որոնցով ղեկավարվել են սահմանադրության ստեղծողները: Նախկինում արևմտյան գրականության մեջ սոցիալիստական սահմանադրությունը առանձնացվում էր «գաղափարականների» առանձին բաժնում: Ինչ-որ աստիճանով Արևմուտքի գիտնականների շարքում նման մոտեցումը պահպանվել է նաև այժմ, սակայն առավել հաճախ ընդունվում է, որ ցանկացած սահմանադրություն ունի գաղափարախոսական բնույթ այն իմաստով, որ դրա ստեղծման ժամանակ հեղինակները ղեկավարվել են այս կամ այն տեսանկյուններով: Ամերիկացի հեղինակ Ս. Սմիթը անվանում է ԱՄՆ Սահմանադրությունը «գիտակցության հպարտություն» («մաքուր գիտակցության»), հայտարարելով, որ այն «իմաստաստավորում է առարկաները, որոնք ներկայացնում են քաոս»:[88] Սակայն նաև երբեմն ոչ գաղափարախոսական հռչակվող ամերիկյան Սահմանադրության «հայրերի» մոտ ևս առկա էին իրենց գաղափարախոսական կանխադրույթները (ժողովրդի ինքնիշխանություն, հանրապետություն, այլ ոչ միապետություն, սևամորթերի ստրկության պահպանություն և այլն): Ցանկացած սահմանադրություն կրում է իր դարաշրջանի և իր ստեղծողների տեսանկյունների հետքերը: Իր հերթին, այն ունենում է հսկայական ազդեցություն իր, իսկ հաճախ հետագա սերունդների մտքի վրա: Դրանում ևս արտահայտվում է վերջինիս գաղափարական բնույթը:

---

[87] Մանրամասն տես՝ **Պողոսյան Վ., Միրումյան Կ.** Գաղափարախոսությունը և Սահմանադրությունը: Երևան, 1999:

[88] Տես՝ **Smith S.D.**The Constitution and the Pride of Reason N.Y. 1998 էջ X-XI:

Վերոշարադրյալի հիման վրա կարելի է առաջարկել սահմանադրության հետևյալ հասկացությունը (բնորոշումը). Սահմանադրությունը ողջ ժողովրդի կամքն արտահայտող բարձրագույն իրավաբանական ուժով օժտված, իրավաստեղծման, իրավակիրառ և իրավապահպան գործունեության առարկայական-բովանդական հիմք հանդիսացող նորմատիվ իրավական ակտ է, ինչպես նաև պետականության ստեղծման և զարգացման իրավաքաղաքական ծրագրային փաստաթուղթ և հասարակական պայմանագիր-դաշինք:

1.3. Գործող օրենսդրության համակարգի ընդհանուր իրավաբանական բնութագիրը

Օրենսդրությունը լինելով իրավունքի ենթահամակարգ, չափազանց բարդ կազմավորում է, և իր հերթին կարող է դիտվել որպես առանձին համակարգ:[89] Օրենսդրությունը, որպես առանձին համակարգ, կարելի է քննարկել բովանդակության և կառուցվածքի առումով, որը այդ բովանդակության արտահայտման եղանակն է՝ ձևը: Կառուցվածքային առումով, օրենսդրությունն ինքը կազմված է առանձին խոշոր խմբերից, որոնք ուղղված են հասարակական կյանքի առանձին ոլորտների կարգավորումը: Իրենց հերթին, օրենսդրության խոշոր խմբերը բաղկացած են առանձին ճյուղերից և ինստիտուտներից:

Օրենսդրության համակարգը՝ որպես նորմատիվ իրավական ակտերի համակցություն, որոնց ձևավորման գործում նշանակալից է սուբյեկտիվ գործոնը, պայմանավորված իրավաբանական պրակտիկայի պահանջներով:[90] Օրենսդրության համակարգի կառուցվածքը համարվում է երկչափ: Ուղղահայաց կառուցվածքը հիերարխիկ է, ըստ նորմատիվ-իրավական ակտերի իրավազորության (իրավաբանական ուժի): Օրենսդրության հորիզոնական (ճյուղային) կառուցվածքը հիմնականում ձևավորվում է հասարակության մեջ օբյեկտիվորեն ստեղծված

---

[89] Տես՝ **Ստեփանյան Հ.Մ.** Հայաստանի Հանրապետության օրենսդրության համակարգումը (Փորձ և հիմնահարցեր): Երևան, 1995, էջ 27:

[90] Մանրամասն տես՝ Систематизация законодательства как способ его развития. О-в. Ред. В.А. Свицкий М., 2010, էջ 12-13:

համակարգի ազդեցության տակ:[91]

Օրենսդրության համակարգի միջուկն են կազմում մի շարք հիմնակազմ ճյուղեր՝ սահմանադրական, վարչական, քաղաքացիական, քրեական և այլ ճյուղերի օրենսդրությունները և դրանց կեցության դատավարական (օրինակ՝ քրեական դատավարություն, քաղաքացիական դատավարություն, սահմանադրական դատավարություն, վարչական դատավարություն) ձևերը: Ընդ որում, օրենսդրության հիմնակազմ ճյուղերի հիմքը սահմանադրական օրենսդրությունն է և դրա իրացման երաշխիքը՝ սահմանադրական օրինականության ապահովումն է:

Օրենսդրության մյուս բարդ ճյուղերը, այսպես թե այնպես արժանացված են հիմնակազմ ճյուղերից և նրանց նկատմամբ ստորակա են:

Օրենսդրության համակարգի նախնական տարրերը իրավական նորմերն են, որոնց համակցությունից են կազմված ինստիտուտները, ճյուղերը և օրենսդրության առանձին խոշոր խմբերը:

Իրավունքի նորմն իրավունքի հիմնական հասկացություններից մեկն է, որոնք իրավունքը մեկնաբանում են նորմատիվորեն, այսինքն՝ իրավունքի ամբողջությամբ հասկանում և սահմանվում են նորմի միջոցով, գտնում են, որ իրավունքը, որպես այդպիսին, բաղկացած է նորմերից:[92]

Պոզիտիվ իրավունքի նորմերն օժտված են իրավաբանական ուժով և իրավաբանորեն պարտադիր են հենց պոզիտիվ իրավական հիմքերով ու բնութագրերով, որոնք արդեն իսկ արտահայտված են իրավական նորմի՝ որպես դիսպոզիցիայի, հիպոթեզի և սանկցիայի համակարգային միասնության, առանձնահատուկ իրավաբանական-տրամաբանական կառուցվածքում: Եթե ամբողջականությամբ իրավունքն օժտված կլիներ առանձնահատուկ նորմատիվ իրավական հատկություններով և բնութագրերով, ապա ընդհանրապես չէր կարելի խոսել նաև իրավունքի իրավաբանորեն պարտադիր (պաշտոնապես պարտադիր) առանձին նորմերի՝ որպես ամբողջությամբ օրենսդության համակարգի բաղադրատարրերի մասին:

---

[91] Տես՝ Систематизация законодательства в Российской федерации. Под. Ред. А.С. Пиголкина. СПБ. 2003:

[92] Տես՝ **Нерсесянц В.С.** Общая теория права и государства. Учебник для вузов. М. 2015, էջ 283:

Իրավունքի նորմատիվ ուղղությունը, որը շեշտում է իրավական նորմերի կարևորությունը, լուրջ հաջողությունների կարելի է հասնել իրավական նորմերի արդյունավետ կարգավորման բնագավառում:

Իրավական նորմը բնորոշվում է որպես պետության կողմից սահմանված ընդհանուր բնույթի, համապարտադիր վարքագծի կանոն, որը հասարակական հարաբերությունների որոշակի սուբյեկտների օժտում է իրավունքներով, նրանց վրա դնում է պարտականություններ, և այդպիսիք խախտելու դեպքում նախատեսում է պատասխանատվություն:

Իրավական նորմերը, որպես օրենսդրության համակարգի տարրեր, գոյություն չունեն հենց այնպես: Դրանք հանդես են գալիս նորմատիվ իրավական ակտի հոդված, կետի և նույնիսկ առանձին պարբերության տեսքով: Հանս Քելզենի նորմատիվիստական ուսմունքի համաձայն իրավունքի նորմը, որպես պարտադրանք, հրամայում, թույլատրում կամ լիազորում է:[93]

Ուրեմն, օրենսդրության համակարգը կարելի է դիտել նաև որպես իրավական նորմեր պարունակող իրավական ակտերի համակցություն: Այդ նորմատիվ իրավական ակտերը նույնպես կապված են ուղղահայաց և հորիզոնական կապերով: Ուղղահայաց կապերով են կապված, օրինական՝ օրենքները և ենթաօրենսդրական ակտերը, իսկ հորիզոնական կապերով՝ միևնույն ճյուղային պատկանող նորմատիվ իրավական ակտերը:

Այսպիսով, օրենսդրությունը իրավունքի ենթահամակարգերից մեկն է: Օրենսդրությունը իրավունքի կեցության յուրահատուկ ձևն է, այլ կերպ ասած՝ իրավունքի կեցության նորմատիվ հարթությունը: Օրենսդրության այդպիսի մեկնությունն ունի ինչպես գիտատեսական, այնպես էլ գործնակլսն-կիրառական նշանակություն:

Ազգային օրենսդրության համակարգը ներառում է հետևյալ նորմատիվ իրավական ակտերը. Սահմանադրություն, սահմանադրական օրենքներ, սովորական օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը ամրագրել է իրավական

---

[93] Տես՝ Чистое учение о праве Гансах Кельзена. Вып. 1, М., 1987, էջ 12:

ակտերի և իրավական նորմերի աստիճանակարգությունը (հիերարխիան).

1. Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ:

2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին:

3. Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:

Ներկայացնելով ազգային օրենսդրության համակարգի ընդհանուր իրավաբանական բնութագիրը, նշենք, որ այն արդյունավետ կգործի, եթե պահպանվի իրավական ակտերի (նորմերի) սահմանադրությամբ ամրագրված աստիճանակարգությունը (հիերարխիան) և սահմանադրության գերակայությունը այդ համակարգում:

Իրավական ակտերի (նորմերի) աստիճանակարգությունը (հիերարխիան)[94] օրենսդրության համակարգի ոչ միայն տրամաբանական ճիշտ կառուցվածքն է, այլև իրավակարգավորումների արդյունավետության նախապայմանը[95], նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգությունը հիմնված է դրանց իրավաբանական ուժի համեմատական կարգի վրա:

Իրավաբանական ուժը պայմանավորված է առնվազն երկու ասպեկտով, ա) հասարակական հարաբերությունների կարգավորման կարևորությամբ (նշանակելիությամբ) և բ) ընդունող մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակով: Նշված երկու ասպեկտները (տեսանկյունները) կազմում են մեկ միասնական անխախտ ամբողջություն՝ իրավազորություն: Հետևաբար, նորմատիվ իրավական ակտի ձևն ու դերը ազգային օրենսդրության համակարգում պայմանավորված է նրա իրավազորությամբ: Այս առումով, ՀՀ Սահմանադրությունն իր իրավազորությամբ գտնվում է օրենսդրության բուրգի գագաթնակետում և, ըստ

---

[94] Մանրամասն տես՝ **Толстик В.А.** Иерархия источников российского права. Дис...д-ра юрид. наук. Нижний Новгород, 2002, էջ 13:

[95] Մանրամասն տես՝ **Толстик В.А.** Иерархия источников российского права. Дис...д-ра юрид. наук. Нижний Новгород, 2002, էջ 14:

Հանս Քելզենի արտահայտությամբ, կազմում է ազգային օրենսդրության համակարգի «հիմնական նորմը», որին պետք է համապատասխանեն՝ սահմանադրական օրենքները, սովորական օրենքները, ենթաօրենսդրական ակտերը, բարձր դատական ատյանների իրավական դիրքորոշումները և նախադեպային իրավունքի նորմերը, գործարար շրջանառության սովորույթները, ինչպես նաև ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի նորմերը: Այլ կերպ ասած, ՀՀ Սահմանադրությունն օժտված է գերակայությամբ՝ մյուս նորմատիվ իրավական ակտերի և այլ նորմատիվ կարգավորիչների նկատմամբ:

Սահմանադրության գերակայությունը հիմնարար նշանակություն ունի ինչպես հասարակական հարաբերությունների սահմանադրականացման, մարդու իրավունքների պաշտպանության, այնպես էլ իրավակարգավորումների արդյունավետության բարձրացման, գործող օրենսդրության կատարելագործման տեսանկյունից:

Օրենսդրության համակարգում Սահմանադրության գերակայության երաշխավորումը[96] ենթադրում է ոչ միայն Սահմանադրության անմիջական գործողությունը, այլև սահմանադրական օրինականության համակարգում՝ ամրապնդելով օրենսդրության կայունությունը և նրա առաջընթաց զարգացումը:

[96] Սահմանադրության և, ընդհանրապես՝ իրավունքի գերակայության վերաբերյալ ուսանելի և արժեքավոր դրույթներ են պարունակվում մի շարք միջազգային փաստաթղթերում, մասնավորապես՝ իրավունքի գերակայության մասին Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1594 (2007) բանաձևում, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2008 թ. նոյեմբերի 21-ի CM (2008) 70 հանձնարարականում, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 2011թ. ապրիլի 4-ի CDL-AD(2011)003 rev. զեկույցի դրույթներում, ՄԱԿ-ի 2012թ. սեպտեմբերի 24-ին ընդունած «Իրավունքի գերակայության մասին» բանաձևի դրույթներում, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում անցկացված «Իրավունքի գերակայությունը որպես գործնական հայեցակարգ» բանաձևի դրույթներում և այլն:

Գլուխ 2

Սահմանադրությունը և գործող օրենսդրության համակարգի հարաբերակցության հիմնախնդիրը

2.1. Օրենսդրության համակարգում Սահմանադրության անմիջական գործողության հիմնախնդիրը

Մեզանում անցկացված Սահմանադրական բարեփոխման իմաստը նրանում է, որպեսզի Սահմանադրությունը «քարացած» փաստաթղթից վերածվի «կենդանի» և անմիջականորեն գործող նորմատիվ իրավական ակտի: Պետության կողմից հաստատված և հասարակության իրավունքները սահմանափակող, ինչպես նաև մարդկանց և նրանց ընկերակցությունների սոցիալ ակտիվության դրսևորումների հանդեպ պետական վերահսկման ձևերը ամրագրող օրենքից Սահմանադրությունը պետք է դառնա գործող օրենք, որը նախատեսում է պետության պարտավորությունները քաղաքացիների, սոցիալական տարբեր կառույցների և հասարակության առջև: 2015թ. սահմանադրական բարեփոխումից շատ առաջ մեր երկրի պետահիրավական միտքը եկավ այն եզրակացության, որ Սահմանադրությունը հանդիսանում է իրավական համակարգի, ազգային օրենսդրության անքակտելի մասը:[97] Այն պետք է լինի ոչ թե հանդիսավոր հռչակագիր, այլ աշխատող քաղաքական - իրավաբանական փաստաթուղթ, որի դրական ազդեցությունը հասարակության, պետության և անձի վրա պետք է առարկայական և շոշափելի: Սակայն Սահմանադրության իրագործման պրակտիկան դեռևս կրում է չափազանց սահմանափակ բնույթ, և այդ միտումը չի կարելի հաղթահարված համարել: Այս առումով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում նշված է, որ առավել հրատապ և սկզբունքային հիմնախնդիրներից է. «համակարգային ամբողջականության մեջ հիմնական իրավունքների անմիջական գործողության երաշխավորումը...»[98]:

---

[97] Տես՝ **Նազարյան Վլ.** Հայաստանի Հանրապետության սահմանադրության կոնցեպցիան, Երևան, 1992թ., **Խաչատրյան Հ.Մ.** Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը: Երևան, 1997:

[98] Տես՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Մշակվել է Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր սահմանադրական

Իրավական գիտության խնդիրն է մշակել սոցիալական պրակտիկայի կենդանի հյուսվածքի մեջ սահմանադրական որոշումների ներգործման արդյունավետ մեխանիզմը: Այդ խնդիրը կարող է լուծվել իրավագիտության բոլոր ճյուղերի մասնագետների համատեղ ջանքերով: Սակայն այդ լուծումը չի սահմանափակվում միմիայն դատական մարմինների ու այլ իրավակիրառողների պրակտիկայում սահմանադրական նորմերի անմիջական կամ միջնորդավորված գործողության հարցով: Խնդիրը պետք է դրվի և լուծվի շատ ավելի լայն՝ սահմանադրության սոցիալական մեխանիզմի գործողության մասին, որի բաղկացուցիչ մասն է կազմում իրավաբանական մեխանիզմը: Ասածն օրակարգից չի հանում Սահմանադրության ու նրա նորմերի իրագործման տեսության մշակման խնդիրը: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է ներկայանում միանգամից նշել տարբերությունը սահմանադրության ու նրա իրագործման կամ իրականացման միջև: Սխալ կլինի, սակայն, ծայրահեղության մեջ ընկնել դրանց միջև անհաղթահարելի պատնեշ կանգնեցնելով: Ընդհակառակը, սահմանադրական նորմերի գործողությունը պարտադիր նախապայման է դրանց իրականացման համար՝ համապատասխան Հիմնական օրենքի ու ընթացիկ օրենսդրության կողմից սահմանված արարողակարգերի:

Սոցիալական պրակտիկայի մեջ հասարակական հարաբերությունների սահմանադրական մոդելի ինտեգրումը սոցիալական պրակտիկայի մեջ «օրենսդրության մեջ արտահայտվում է տարբեր տերմիններով՝ «ուժի մեջ մտնում», «գործողության մեջ մտցնում», «գործողություն», «ուղղակի գործողություն», «անմիջական գործողություն», «իրագործում», «կիրառում», որոնք իմաստային տարբեր բեռնվածություն ունեն և նշանակում են ոչ համանման հասկացություններ: Այնուամենայնիվ, սահմանադրական իրավունքի տեսությունում և պրակտիկայում շատերը չեն տարբերակում, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ (և արդեն անդրադառնում է) սահմանադրական նորմերի իրագործման պրակտիկայում:[99]

բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից: Երևան, 2014, էջ 24:

[99] Տես՝ **Эбзеев Б.С.** Введение в Конституцию России, М. 2013, с 125-126: Նույնի, Человек, народ, государство в конституционном строе Российкой Федерации. Изд. Второе. Перер и доп. М., 2013, էջ 67-68:

Ինչպես հայտնի է, իրավական նորմերի գործողությունը հավասարազոր է դրանց գոյությանը որպես օրենսդրի կողմից սահմանված վարքաձևի ստանդարտների: Այդպիսի ընկալումը կարելի է տարածել նաև Սահմանադրության վրա, ըստ այդմ նկատի ունենալով, որ Հիմնական օրենքի գործողությունը՝ նրա իրականացման պայման ու պահն են, սոցիալական պրակտիկայի մեջ սահմանադրական որոշումների ինտեգրումը, քաղաքացիների կողմից նրանց ի ծնե պատկանող ու Սահմանադրության մեջ ամրագրված իրավունքների ու ազատությունների իրագործումը:

Այլ կերպ ասած՝ իրավական նորմերի գործողությունը, այդ թվում նաև Սահմանադրության նորմերի, ավանդորեն նույնացվում է նրանց որպես օրենսդրի կողմից սահմանված վարքաձևի ստանդարտների գոյության հետ: Դա, ինչպես գրում է Յու. Ա. Տիխոմիրովը, «հասարակական պրակտիկայի հետ շփումից ազդակներ ստացող օրենսդրական կարգավորիչի գործառնության գործընթաց է»:[100]

Սահմանադրությունը, ունենալով նորմատիվ ակտին բնորոշ բոլոր հատկանիշները, ունի նաև մի շարք առանձնահատկություններ, պայմանավորված օրենսդրության համակարգի մեջ նրա տեղով: Նրանում առավել լրիվ ձևով արձանագրվում են սոցիալ-պատմական զարգացման՝ հասարակության կողմից պարզված ու ընկալված օբյեկտիվ օրինաչափությունները: Սահմանադրական նորմերը, վկայելով ձևավորված հասարակական հարաբերությունները, աջակցում են դրանց կայունացմանն ու զարգացմանը՝ համապատասխան բուն Սահմանադրության կողմից սահմանված իրավաբանական խնդիրների ու նպատակների և արգելք են հանդիսանում հասարակության մեջ զարգացող բացասական երևույթների ու գործընթացների դեմ: Սակայն անկախ իրականացվող սոցիալական, քաղաքական և այլ գործառնություններից, ինչպես նաև Սահմանադրության համակարգում գրված տեղից, սկսած նախաբանից և վերջացրած եզրափակիչ հոդվածներով, դրանք բոլորն ունեն կարգավորիչ նշանակություն և կրում են գործող բնույթ:

Տվյալ դատողության կատեգորիկությունը պայմանավորված է երկու

---

[100] Տես՝ **Тихомиров Ю.А.** Теория закона, М., 1992. էջ 222:

պարագաներով: Առաջինը ՀՀ Սահմանադրության գործողությունը կապված չէ նրա խախտման հետ: Սահմանադրական իրավախախտումն առաջ է բերում պետական հարկադրանքի, ինչպես բուն Սահմանադրությամբ, այնպես էլ այլ օրենքներով նախատեսված սանկցիաների կիրառման անհրաժեշտություն, սակայն Հիմնական օրենքի նորմի խախտումը չի կարող դիտվել որպես նրա գործողության սկզբնական պահ:

Երկրորդ, իրավագիտության մեջ տարածում է գտել այն կարծիքը, որ նորմատիվությունը բնորոշ է Սահմանադրության միայն «հիմնական» բաժիններին և որ նրա դրույթներից շատերը հիմք են ծառայում ընթացիկ օրենսդրության համար, սակայն չեն հանդիսանում ուղղակի գործողության նորմեր: Այս կապակցությամբ եզրահանգում է արվում Սահմանադրության դրույթների առնվազն մի մասի անգործ բնույթի վերաբերյալ: Այնուամենայնիվ, ո՛չ սահմանադրական դոկտրինան, ո՛չ էլ պրակտիկան Սահմանադրության «հիմնական» ու «ոչ հիմնական» բաժինների տարանջատման և ոչ մի օբյեկտիվ չափանիշ: Լինելով միասնական համակարգի, Հիմնական օրենքի տարրեր, բաղադրամասեր, նրանք հավասար կերպով հանդիսանում են հիմնական և անմիջական գործող նորմեր:

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ սահմանադրական նորմերի տեսակները բազմաթիվ են ու բազմազան: Դա նախևառաջ կապված է այն բանի հետ, որ, վերջին հաշվով կատարելով միասնական սոցիալական գործառույթ, Սահմանադրության նորմերը միաժամանակ կատարում են տարբեր իրավաբանական գործառույթներ, ունեն տարբեր նյութական ու իրավաբանական բովանդակություն, տարբերվում են իրենց իրավաբանական հատկանիշներով ու հատկություններով: Սահմանադրական նորմերի այս գործառույթային դերն էլ հիմք է հանդիսանում նրանց դասակարգման համար: Տվյալ չափանիշն ունի որակական բնույթ, օժտված է սոցիալական և իրավաբանական նշանակելիությամբ, ներկա է բոլոր ստորաբաժիններում, նպաստում է սահմանադրական նորմերի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունների բացահայտմանը և այդ իսկ պատճառով որոշիչ դեր է խաղում Հիմնական օրենքի նորմերի այլ տարբերակումների համար: Ասվածը չի նսեմացնում մյուս դասակարգումների նշանակությունը, ընդհակառակը՝ սահմանադրական նորմերի ցանկացած գիտական դասակարգում հանդիսանում է

ճանաչման կարևոր գործիք ու իրավունք ունի գոյության:[101]

Ըստ իրավական կարգավորման մեխանիզմում իրենց գործառույթային դերի իրավունքի ընդհանուր տեսության մեջ առանձնացնում են. ելային իրավական նորմեր, վարվելակերպի կանոններ-նորմեր և ընդհանուր ու հատուկ նորմեր, որոնք իրենց հերթին բաժանվում են ենթախմբերի:

Ինչպես տեսնում ենք, այդ դասակարգման մեջ տեղ չի գտել սահմանադրական նորմերը «հիմնականների» ու «ոչ հիմնականների» բաժանման համար: Այդպիսի բաժանման համար, մեր կարծիքով, ոչ մի հիմք չկա: Այլ բան է, որ որոշ սահմանադրական նորմեր կիրառվում են ոչ անմիջականորեն և իրենց կարգավորիչ ազդեցությունը կատարում են ոչ ամբողջականորեն և իրենց կարգավորիչ ազդեցությունը կատարում են կամ այլ նորմերի հետ համատեղ, կամ ճյուղային կոնկրետ նորմերի միջոցով, իսկ մյուս բոլոր նորմերը, կարգավորելով՝ հասարակական հարաբերությունները անմիջականորեն կիրառվում են դատարանների ու պետական իշխանության այլ մարմինների կողմից: Ներկայացվում է, որ ցանկացած այլ մեկնություն իմաստազրկում է սահմանադրական նորմերի իրագործման վերաբերյալ բուն հարցադրումը:

Նույնիսկ անցյալի (Խորհրդային շրջան) սահմանադրական փորձի ուսումնասիրման համատեքստում սխալական է բուն քաղաքականի և իրավաբանականի հակադրումը, նշված սահմանադրությունների ոչ թե «շատ», այլ բացառապես բոլոր հոդվածները կրում էին քաղաքական բնույթ, ինչն, այնուամենայնիվ, փաստարկ չի հանդիսանում որոշ գիտնականների կողմից պաշտպանվող այդ թեզի օգտին. Ընդհակառակը՝ հենց այդ նկատի առնված հոդվածներն ու նրանցում պարունակվող նորմերն էին ձևավորում ու ձևակերպում ավտորիտար-բյուրոկրատական համակարգի սահմանադրական մոդելը:

Այս դիրքորոշման խոցելիությունը կայանում է նաև նրանում, որ դրա կողմնակիցները մոտենում են սահմանադրական նորմերի գնահատմանը չափանիշներով, որոնք մշակված են սահմանադրական իրավունքի գիտության սահմաններից դուրս, այն էլ օրենսդրության բոլորովին այլ ճյուղերի վերաբերյալ:

---

[101] Մանրամասն տես՝ Россия и Конституция в XXI веке. 2-е издание М., 2008. էջ 61-62: Конституция в XXI веке. Сравнительно-правовое исследование. Отв. ред. проф. **В.Е. Чиркин** М., 2014. էջ 46-47:

Սահմանադրությունը միասնական քաղաքական-իրավաբանական փաստաթուղթ է,[102] որի յուրաքանչյուր մասը պետք է օրգանապես կապված լինի մյուսների հետ և միասնական համակարգի շրջանակներում կատարի իր գործառույթները: Այն՝ հասարակության կյանքի կազմակերպման բանական մոդել է, որն ընդգրկում է նրա բոլոր ոլորտներն ու առավել կարևոր դրսևորումները: Ասվածը չի կարելի մեկնաբանել որպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության կարգավորիչ դերի ու նշանակության բացարձակեցում: Նրա ունիվերսալությունը՝ հասարակական հարաբերությունները իր կարգավորիչ ազդեցությամբ ընդգրկելու առումով, սահմանափակ է: Մանրամասն կանոնակարգելով պետության ու նրա մարմինների կազմակերպման և գործունեության բազմաթիվ, նույնիսկ մասնավոր հարցերը, Սահմանադրությունը միաժամանակ պարունակում է ընդհանուր, ձևական որոշակիությամբ աչքի չընկնող դրույթներ, որոնք ձևակերպում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման միայն որոշակի, առավել կարևոր սկզբունքները: Այդպիսի տարբերություններով հանդերձ Սահմանադրությունը հանդիսանում է միասնական, կուռ նորմատիվ-իրավական ակտ, որի նորմերն ու ինստիտուտները հասարակական հարաբերությունների նորմավորման ընթացքում գտնվում են փոխկապակցվածության և փոխգործողության մեջ: Մասնավորապես, Սահմանադրության նախաբանի նորմատիվային նշանակությունը նրանում է, որ այն սովորաբար որոշում է իրավաստեղծման ու իրավակիրառման ռազմավարությունը, պետության, պետական ու հասարակական մարմինների, պաշտոնատար անձանց վրա իրավաբանական պարտականություն է դնում - գործել համապատասխան դրա մեջ ձևակերպված հիմնարար սկզբունքների և այն նպատակների, որոնք այնտեղ հռչակվում են: Կարծում ենք, չի կարելի թերագնահատել Սահմանադրության նախաբանի նշանակությունը նաև նրա բովանդակության համարժեք ընկալման և բացատրման համար: Նախաբանն ունի առաջին հերթին քաղաքական նշանակություն: Նրանում շարադրվում են որոշ ելակետային դրույթներ, որոնց վրա հիմնվում է նպատակները, որոնք նա հետապնդում է: ՀՀ Սահմանադրության նախաբանը արձանագրում է Հայոց պետականության հիմնական սկզբունքները և

[102] Տես՝ **Авакьян С.А.** Конституция России: природа, эволюция, современность. 2-е изд. М., 2000, էջ 31-32: **Хабриева Т.Я. Чиркин В.Е.** Теория современной конституции. М., 2005, էջ 32-33:

համազգային նպատակները, ազգային և համամարդկային արժեքները: Նրանում արտահայտում են ազգային պետականության հաջորդականությունը, ինչպես նաև հարգանքը պատմական անցյալի հանդեպ: Սահմանադրության նախաբանում իր արտացոլումն են գտել հայ ժողովրդի վճռորոշ դերը Հայրենիքի հզորացմանը և բարգավաճմանը, ապահովելու համար սերունդներների ազտությունը, ընդհանուր բարեկեցությունը, քաղաքացիական, համերաշխությունը, ինչպես նաև վճռականությունը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունման գործում, այսինքն՝ Սահմանադրության ընդունման հայցում դրված է հայ ժողովրդի կամքը, իսկ Սահմանադրության 2-րդ հոդվածն ազդարարում է. իշխանության աղբյուրը՝ ժողովուրդն է: Այստեղից հետևություն. Սահմանադրության անմիջական գործողության և բարձրագույն իրավաբանական ուժի մասին:

ՀՀ Սահմանադրության նախաբանում նշվում են այն արժեքները, որոնք գերիշխող դեր են խաղում հասարակական արժեքների ամբողջ հիերարխիայում և միաժամանակ այն նպատակները, որոնք հետապնդում է Սահմանադրությունը: Սահմանադրության այս արժեքների ու նպատակների համակարգում է գտնվում մարդու իրավունքների և ազատությունների, քաղաքացիական խաղաղության և համերաշխության հաստատումը, երկրի պատմակակորեն ձևավորված միասնության պահպանումը, Հայաստանի ինքնիշխան պետականության վերածնունդը և նրա ժողովրդավարական հիմքի անսասանությունը:

Սակայն ՀՀ Սահմանադրության նախաբանն ունի նաև կարևոր իրավաբանական նշանակություն: Նրա մեջ, ըստ էության, կանխագծված է Հայաստանի Հանրապետության օրենսդրական համակարգի կարգավորման ռազմավարությունը: Հիմնական օրենքի նախաբանում ամրագրված նպատակները որոշիչ նշանակություն ունեն օրենսդրության, օրենքների կատարման, սահմանադրական արդարադատության ոլորտներում Սահմանադրության և նրա նորմերի իրագործման համար: Նրանք հանդիսանում են ոչ միայն սոցիալ-քաղաքական և բարոյական, այլև իրավաբանական ուղենիշ, համապատասխան որի պետք է իրականացվի օրենսդրական, գործադիր և դատական իշխանության մարմինների գործունեությունը: Դա փաստորեն շարադրումն է պետության և նրա մարմինների այնպիսի կարևորագույն պարտավորությունների, ինչպիսին են մարդու

իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, սոցիալական և միջազգայնական խաղաղության ու համերաշխության ապահովումը, հակազդեցությունը անջատվողական միտումներին, Հայաստանի Հանրապետության անվտանգության և ազգային շահերի պահպանումը:

Սահմանադրության նախաբանի մեջ արտահայտված են ժողովրդի և քաղաքացիների հանդեպ, երկրի ժողովրդավարական զարգացման ապահովման վերաբերյալ պետության որոշ պարտականությունները և այլն: Նախաբանի քառասունչորս բառերը ելակետ են հանդիսանում ժողովրդի իրական կամքին համապատասխան Սահմանադրության մեկնաբանման համար: Խորհրդարանը չի կարող օրենքներ ընդունել, իսկ գործադիր իշխանությունը՝ հրապարակել ակտեր, որոնք խախտում են մարդու իրավունքները և ազատությունները կամ կարող են խախտել քաղաքացիական խաղաղությունն ու համերաշխությունը, խարխլել ազգային պետականության ժողովրդավարական հիմքերը:

Նախաբանի մեջ իրենց արտացոլումն են գտել հայրենասիրության գաղափարը, հավատն առ բարին ու արդարը մարդկանց միջև և սոցիումի կազմակերպման մեջ: Էական դեր կարող է խաղալ նաև իրավունքի իմաստավորման, Հիմնական օրենքում բացերի ու հակասությունների, ինչպես նաև նրա հետագա ձևափոխման դեպքերում:

Այս կապակցությամբ համամիտ ենք պրոֆեսոր Գ. Հարությունյանի կարծիքի հետ, ըստ որի. «Սահմանադրության նախաբանում ամրագրված նորմ-նպատակները ելակետային են իրավակարգավորիչ նորմերի նկատմամբ և օժտված են Հիմնական օրենքին բնորոշ բարձրագույն իրավաբանական ուժով»:[103]

Անհրաժեշտ ենք համարում ուշադրություն դարձնել գրականության մեջ արտացոլված մեկ անճիշտ նախադրույթի վրա, համաձայն որի Սահմանադրության նորմերը իրագործվում են միայն այնքանով, որքանով նրանք կոնկրետացված են ճյուղային օրենսդրության մեջ: Իսկապես, Սահմանադրության նպատակների մեջ չի մտնում հասարակական հարաբերությունների մանրազնին կարգավորումը՝ այն իրենից ներկայացնում է հասարակության կազմակերպման և նրա կառույցների փոխգործության առավել կամ նվազ չափով կատարյալ մոդել, նախանշում է մարդու

[103] Տես՝ Հարությունյան Գ. Սահմանադրական մշակույթ. պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Երևան, 2016, էջ 161:

տեղը այդ հասարակության մեջ:

Այս հիմնավորմամբ, սակայն, չի կարելի եզրակացնել, որ Սահմանադրությունը միայն ընդհանուր սկզբունքների շարադրում է ու չի պարունակում սահմանադրական-իրավական հարաբերությունների սուբյեկտների կոնկրետ իրավունքներ ու պարտականություններ: Այդպիսի ընկալումը չի համապատասխանում իրավական դրան բնորոշ սահմանադրականության ռեժիմով պետության ձևավորմանը, ինչպես չի համապատասխանում նաև ՀՀ Սահմանադրության առայժմ դեռ սահմանափակ կիրառման պրակտիկային: Բուն այդ տեսակետն էլ, թերևս, պայմանավորված է նրանով, որ առաջներում մենք չենք ունեցել սահմանադրական նորմերի կիրառման ձևավորված և բավականաչափ տարածված պրակտիկա:

Վերն ասվածը ամենևին չի ժխտում Հիմնական օրենքի նորմերի կոնկրետացման հնարավորությունը: Առավել ևս, փոփոխված Սահմանադրությունը նախատեսում է մի շարք օրենքների ընդունում ի լրումն սահմանադրական հիմնադրույթների: ՀՀ Սահմանադրության մեջ պարունակվում են մի քանի տասնյակից ավելի հղումներ ու օրենքների հիշատակումներ, նախատեսվում է մի շարք սահմանադրական և սովորական օրենքների ընդունում:

Դա սահմանադրական կարգավորման արդյունավետության բարձրացման կարևոր պայման է: Առանց ընթացիկ օրենսդրության մեջ սահմանադրական նորմերի կոնկրետացման, առանց ընթացակարգային դատավարական ձևերի, որոնց շրջանակներում պետք է կատարվի ՀՀ Սահմանադրության դրույթների իրագործումը[104]:

Հենց Սահմանադրության անբավարար իրավական պաշտպանությունն է պատճառ դառնում երբեմն պատշաճ իրավաբանական գնահատում չստացող սահմանադրության բազում խախտումների:[105]

Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է հաշվի առնել սահմանադրական

---

[104] Մանրամասն տես նաև՝ **Ряховская Т.И.** Система обеспечения прямого действия конституции Российский федерации. М. 2015: **Антоненко В. М.** Прямое действие Конституции Российской Федерации. М., 2014.

[105] Տես նաև՝ **Хабриева Т.Я** Толковая конституции Российский федерации. Дис.д-ра юрид. Наук.М., 1997.

կարգավորման և դրա մեթոդների առանձնահատկությունը, շնորհիվ որի այս կամ այն նորմերը ընդհանրապես չեն պահանջում հատուկ կոնկրետացում օրենսդրական ակտերի միջոցով: Ինչպես հայտնի է, իրավունքի ընդհանուր տեսության մեջ իրավական կարգավորման մեթոդների համակարգում տարբերակում են արգելքը, իշխանային հրամանը, լիազորումը, դիսպոզիտիվ և հանձնարարական մեթոդները: Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրությանը, ապա սահմանադրական կարգավորման մեթոդների համակարգում արգելքների, իշխանային հրահանգների և այլնի հետ մեկտեղ օգտագործվում է նաև Հիմնական օրենքի հիմնադիի հատկանիշներով պայմանավորված հարաբերությունների (պետական մարմինների համակարգի, ազգային - պետական կառուցվածքի և այլն) ձևավորված կարգի փաստումը: Համապատասխան սահմանադրական նորմերը սուբյեկտների վրա որևէ կոնկրետ պարտականություններ չեն դնում, սակայն հենց այդ պարտականություններից է բխում սահմանադրական (և ընդհանուր առմամբ իրավական) կարգավորումը:

Սահմանադրության մեջ ամրագրված նպատակների ու խնդիրների իրականացման գործիք հանդիսացող մյուս բոլոր մեթոդները բխում են այդ հարաբերությունների պահպանման, զարգացման ու կատարելագործման շահերից: Սահմանադրության հիման վրա հրապարակվող օրենսդրական ակտերը զարգացնում և հավելում են նրա դրույթները, օժտում են նրանց կոնկրետ որոշակիությամբ, ինչը հատկապես կարևոր է իրավակիրառման գործընթացում, սակայն դա ամենևին չի զրկում Սահմանադրությունը և նրա նորմերը ուղղակի գործողության բնույթից:

Ասվածը, սակայն, չի նշանակում սահմանադրական նորմերի անմիջական իրագործման թեզի բացարձակման: Իրավունքների, ազատությունների ու պարտականությունների մասին ՀՀ Սահմանադրության նորմերի իրագործման այդ ձևի մասին ուռճացված պատկերացումը կամա թե ակամա բերում է Սահմանադրության և ընթացիկ օրենսդրության միջև անքակտելի կապի անտեսմանը և կարող է թյուրիմացություն մտցնել իրավաբանական պրակտիկայի մեջ:

Սահմանադրությունը սկսում է գործել նրա գործողության մեջ մտցնելու

հայտարարության պահից և հենց այդ պահից են նրա պահանջներն ու դրույթները պարտադիր դառնում իրավունքի բոլոր սուբյեկտների համար: Այն ընդգրկում է պետության ամբողջ տարածքը, այդ տարածքում գտնվող իրավաբանական ու ֆիզիկական անձանց, ինչպես նաև արտասահմանում գտնվող այդ պետության քաղաքացիների վրա: Դրանում է կայանում Սահմանադրության գործողության ստատիկ կողմը: Սակայն Սահմանադրության գործողությունն ունի նաև դինամիկ կողմ:

Այդպիսի բնութագրման մեթոդաբանական հիմք են համարում սովորաբար բազիսի և վերնաշենքի հարաբերակցությունը, որտեղ որոշիչ դերը տրվում և տնտեսական բազիսին: Եվ իսկապես, հայտնի չէ որևէ հասարակություն, որը, օժտված լինելով քաղաքական մեծ ազատությամբ, դրա հետ մեկտեղ տնտեսական գործունեության զգալի մասի կազմակերպման համար չօգտագործեր ազատ շուկայի որևէ նմանակ: Ընդ այնմ կարևոր է հաշվի առնել, որ քաղաքական և իրավաբանական վերնաշենք, որի մասն է կազմում Սահմանադրությունը, տնտեսական բազիսի հանդեպ պասիվ չէ, այլ խաղում է ակտիվ դեր:

Սահմանադրությունը հանդիսանում է մարդկանց գիտակցված գործունեության արգասիք և այդ առումով սուբյեկտիվ է: Դրա հետ մեկտեղ այն օբյեկտիվ է, քանի որ իդեալական առումով կոչված է ծառայել որպես սոցիալ - պատմական զարգացման հասարակության կողմից իմացված ու ճանաչված օրինաչափությունների օրենսդրական ամրագրման միջոց: Այն իրավունքի լեզվով թարգմանում է օբյեկտիվ օրենքների պահանջները, պարտադրում է դրանք որպես վարքաձևի նորմեր իրավունքի բոլոր սուբյեկտներին, տալով նրանց իրավունքներ և դնելով պարտականություններ և ինչպես հասարակությանն ընդհանրապես, այնպես էլ քաղաքացիներին և նրանց միավորումներին ապահովելով զարգացման տվյալ փուլում առավելագույն հնարավոր ազատությունը: Այդ իսկ պատճառով Սահմանադրության ու հասարակական պրակտիկայի միջև տարբերության հաղթահարումը, Հիմնական օրենքում հասարակական զարգացման օբյեկտիվ պահանջմունքների համարժեք արտացոլումը և դրանով իսկ հասարակության ինքնակարգավորման մեխանիզմի իրավաբանական ձևակերպումը կարևոր պայման են հանդիսանում սահմանադրական կարգի ամրապնդման,

պետականության ինստիտուտների ժողովրդավարական ներուժի վերականգնման ու բազմապատկման համար: Եվ ընդհակառակը, այդպիսի տարբերության պահպանումը, պետության, նրա մարմինների և պաշտոնատար անձանց կամայականությունից մարդու և նրա իրավունքների պաշտպանության արդյունավետ համակարգի բացակայությունը ծնում է ժողովրդավարության գաղափարի հանդեպ թերահավատություն ու հիասթափություն և հող է ստեղծում ժողովրդավարական ինստիտուտների և հաստատությունների ամլացման և նույնիսկ նրանցից հրաժարվելու համար:

Ինչ վերաբերում է Սահմանադրության գործողության դինամիկ առումին, ապա այն ՀՀ Սահմանադրությունում նշվում է «ուղղակի գործողություն» հասկացությամբ, որը Հիմնական օրենքի տեքստում ամրագրված է 3-րդ հոդվածում՝ կապված մարդու իրավունքների հետ:

Ընդ այնմ, Սահմանադրության մեջ, նա պարունակվում է ցուցում ուղղակի գործողության բովանդակային բնութագրման վերաբերյալ:

Այսպիսով, ցանկացած սահմանադրական նորմ, անկախ Սահմանադրության մեջ իր գրված տեղից և իրականացվող գործառույթներից, ինչպես նաև հետապնդվող նպատակներից հանդիսանում է ուղղակի գործողության իրավական նորմ: Սահմանադրությունը օրենսդրության մաս է, և դա հենց այն մասն է, որը կարգավորիչ ուղղակի ազդեցություն է գործում հասարակական հարաբերությունների վրա:

Այլ կերպ ասած՝ սահմանադրական նորմերի գործողության տակ առաջին հերթին հասկացվում է Սահմանադրության՝ հասարակական հարաբերությունների վրա կարգավորիչ բուն ազդեցությունը: Այն կարող է իրականացվել անմիջականորեն՝ միմիայն սահմանադրական միջոցներով կամ էլ համատեղ իրավական այլ նորմերի հետ, որոնք տվյալ դեպքում գլխավորապես նշում են Հիմնական օրենքի նորմերի իրականացման ընթացակարգը: Սահմանադրական նորմերի գործողությունը կարող է լինել նաև միջնորդացված՝ այլ օրենսդրական ակտերում նրանց նախապես կոնկրետացումից հետո: Բնականաբար «Սահմանադրության գործողությունը չի սահմանափակվում միայն կարգավորմանը: Այն շատ ավելի լայն է ու ներառում է հասարակական հարաբերությունների վրա

ներազդման և այլ ձևեր, օրինակ՝ ինֆորմատիվ, արժեքա-կողմնորոշիչ, սակայն դինամիկայում, սահմանադրական նորմերի իրագործման ընթացքում դիտվող սահմանադրական կարգավորումն է կազմում Հիմնական օրենքի ուղղակի գործողության կորիզը: Այդուհանդերձ, ինչպես արդեն նշվել է, որոշ դեպքերում հասարակական հարաբերությունների կարգավորման համար բավական է զուտ սահմանադրական նորմը, մեկ այլ դեպքերում սահմանադրական նորմը պահանջում է կոնկրետացում:

Այս կապակցությամբ հնարավոր է ու անհրաժեշտ ՀՀ Սահմանադրության անմիջական և միջնորդացված գործողության տարանջատումը: Այդպիսի տարանջատման հիմքում ընկած են սահմանադրական իրավահարաբերությունների կարգավորման տարբեր մակարդակներ, երբ որպես այդ իրավահարաբերությունների սուբյեկտներ հանդես են գալիս պետություններ, պետական ու հասարակական մարմիններ ու կազմակերպություններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, պաշտոնատար անձինք կամ քաղաքացիներ և այլն: Եվ եթե ավելի բարձր մակարդակներում սահմանադրական կարգավորման համար, որպես կանոն, բավականացնում են սահմանադրական նորմերը, ապա այլ մակարդակներում, երբ սահմանադրական իրավահարաբերություններում մասնակցում են մարդիկ, առավել հաճախ պահանջվում է ձևական որոշակիության շատ ավելի մեծ որոշակիություն ու պարտականությունները որոշելու համար: Պետությունն ապահովում է դա վարչական, քաղաքացիական, քրեական և իրավունքի այդ ճյուղերի նորմերի շնորհիվ: Վերջին դեպքում սահմանադրական նորմերը, կոնկրետացված լինելով իրավունքի համապատասխան ճյուղերի նորմերում, գործում են միջնորդացված ձևով:

Բնականաբար, չպետք է շփոթել Սահմանադրության կարգավորման առարկաները իրավունքի ճյուղերի հետ. դրանց որակական յուրահատկությունները մնում են անփոփոխ, սակայն այդ նորմերը փոխգործում են ու զուգորդվում: Եթե օգտագործենք պետական սահմանների որոշման ժամանակ կիրառելի տերմինաբանությունը, ապա սահմանադրական նորմերը ծառայում են իրավական կարգավորման դիլիմիտացիայի համար, այսինքն՝ նշում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ընդհանուր ուղղությունը, իսկ

ճյուղային նորմերը կատարում են այդ կարգավորման դեմարկացիա, այսինքն որոշում են նրանց կոնկրետ շրջանակները, փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները, անձնավորում են սուբյեկտներին և այլն:

Տարբեր եղանակներով արտահայտված սահմանադրական նորմերի ուղղակի գործողությունը բնորոշ է իրավահիրագործման բոլոր տեսակներին, այդ թվում կատարմանը (պահպանմանը), օգտագործմանը, կիրառմանը: Այն իրականացվում է հենց սահմանադրական, այլ ոչ վարչական, քրեական, քաղաքացիական իրավահարաբերությունների շրջանակներում: Սահմանադրական նորմերի գործողությունը կարող է իրականացվել տարբեր, կարգավորման շրջանակներից դուրս եկող ձևերով, այդ նորմերի գործողությունը հավասարազոր է նրանց ազդեցությանը: Վերջապես, սահմանադրական նորմերի գործողությունը կարող է ընթանալ ոչ միայն կոնկրետ սուբյեկտների միջև սահմանադրական իրավահարաբերությունների սահմաններում, այլև Սահմանադրությամբ նախատեսված օրենսդրական ակտերի տեսքով:

Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Հարությունյանը. «Սահմանադրության լոկ գոյությունը բավարար չէ երկիրը կամ պետությունը սահմանադրական համարելու համար: Անհրաժեշտ է նաև, որպեսզի սահմանադրական նորմերը կյանքի կոչվեն, դրանց նկատմամբ դրսևորվի հասարակական կայուն վերաբերմունք՝ ձևավորվելով հասարակության սահմանադրական մշակույթի իրական որակներ, այն դարձնելով ազգային մշակույթի օրգանական բաղադրատարրերը»:[106]

Այսպիսով, ըստ սահմանադրականության տեսության,[107] իսկ այժմ նաև սահմանադրական պրակտիկայում հնարավոր է տարբերակել սահմանադրական նորմերի ուղղակի գործողության երկու ձև՝ անմիջական և միջնորդացված:

Սահմանադրական նորմերի անմիջական գործողությունը նախատեսված է բազում պետությունների սահմանադրություններում: Այսպես, ԳԴՀ-ի Սահմանադրության քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին նախորդող 1-ին հոդվածում հռչակվում է. «Ներքոբերյալ հիմնական իրավունքները

---

[106] Մանրամասն տես՝ **Հարությունյան Գ.** Սահմանադրական մշակույթ. Պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատարակություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, էջ 35:
[107] Տես՝ **Крусс В.И.** Конституционализация права: основы теории. М., 2016.

պարտավորվեցնում են օրենսդրությունը, գործադիր իշխանությանը և արդարադատությանը որպես անմիջականորեն գործող իրավունք»: Բուլղարիայի 1991 թ. Սահմանադրության 5-րդ հոդվածը հռչակում է նրա նորմերի գործող բնույթը և սահմանում այդպիսի գործողության ձևերն ու պայմանները. «Սահմանադրության դրույթները գործում են անմիջականորեն»: Դա նշանակում է, որ Սահմանադրությամբ նախատեսված իրավունքներն ու պարտականությունները իրականացվում են անմիջականորեն նրա հիման վրա բացառությամբ դեպքերի, երբ այն նախատեսում է, որ դրանց իրականացման պայմաններն ու կարգը որոշվում են այլ օրենքով: Նույն կերպ է լուծվում սահմանադրական նորմերի անմիջական գործողության հարցը մի շարք այլ պետությունների քաղաքական ու իրավական դոկտրինաներում, նույնիսկ եթե դրանց Հիմնական օրենքներում այդ մասին ուղղակիորեն չի ասված:

Սահմանադրության նորմերը գործում են անմիջականորեն, եթե համապատասխան հասարակական հարաբերությունները կարգավորված են սահմանադրական միջոցներով և դրանք բավական են կոնկրետ իրավիճակի լուծման համար:

Սահմանադրական նորմերի ուղղակի գործողությունը կարևոր նշանակություն ունի իրավական կոլիզաների (հասկացությունների ընդհարման) դեպքերում: Հնարավոր են կոլիզիաներ Սահմանադրության և օրենքի միջև: Դրանք լուծվում են Սահմանադրության բարձրագույն ուժի իրավաբանական մասին դրույթին համապատասխան: Այս հարցը հանգամանորեն կանոնակարգված է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում.

1. «Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ,

2. Օրենքները պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին,

3. ՀայաստանիՀանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը»:

ՀՀ Սահմանադրության կիրառման ընթացքում նրա բացերը հնարավոր է

հաղթահարել օրենքներ ընդունելու, ինչպես նաև իրավունքի անալոգիայի (համանմանության) օգտագործման ճանապարհով: Սահմանադրական վեճը լուծելիս կարելի է ելնել ՀՀ Սահմանադրության ընդհանուր սկզբունքներից ու իմաստից: Սահմանադրության այդպիսի կիրառման դեպքում առանձնապես մեծանում է իրավունքի սկզբունքների նշանակությունը: Դրանցից առավել կարևորներն իրենց ամրագրումն են գտել Հիմնական օրենքի մեջ[108]: Դրա հետ մեկտեղ էական դեր է խաղում նաև մասնագիտական, գիտական իրավագիտակցությունը, որը կուտակում է պատկերացումները Սահմանադրության էության, նրա սկզբունքների ու գործառույթների մասին:

Այսպիսով, սահմանադրական նորմերի անմիջական գործողությունը բնորոշ է պետական գործողությունների բոլոր ձևերի համար՝ օրենսդիր, գործադիր-կատարողական, ինչպես նաև քաղաքացիների կողմից նրանց պատկանող իրավունքների, ազատությունների ու պարտականությունների իրականացման գործընթացին:

Այստեղ, սակայն, մենք ստիպված են վերապահություն անել, որն առաջին հայացքից չի համապատասխանում շարադրանքի պաթոսին, պետք չէ բացարձակեցնել սահմանադրական նորմերի անմիջական գործողությունը՝ նմանեցնելով դրանց դատական իշխանության կողմից նրանց անմիջական կիրառման հետ:

Սույն հետազոտության համատեքստում ուշադրություն դարձնենք, որ մարդու և քաղաքացիների իրավունքները, համաձայն ՀՀ Սահմանադրության անմիջականորեն գործում են, նրանք կանխորոշում են օրենքների կիրառումը և պաշտպանվում են արդարադատության կողմից: Այլ խոսքով՝ Սահմանադրության մեջ ամրագրված մարդու և քաղաքացու իրավունքները հանդիսանում են իրավակիրառության չափանիշ, իսկ դատական իշխանությունը դրանց գլխավոր երաշխիքներից մեկն է: Ընդ այնմ, իրենց նյութական բովանդակությամբ տարբերվող իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության հնարավորությունները նույնպես էականորեն տարբերվում են: Այսպես, դատարանը

[108] Տես օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 4,6, 78, 79-րդ հոդվածները:

կարող է անմիջականորեն պաշտպանել քաղաքական և քաղաքացիական իրավունքներն ու ազատությունները, սակայն տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների պաշտպանության ժամանակ դատարանի հնարավորությունները զգալիորեն ավելի սահմանափակ են:

Դա կապված է նրա հետ, որ քաղաքացիական և քաղաքական իրավունքներն ու ազատությունները հանդիսանում են ըստ էության, անձի անհատական ինքնավարության ոլորտ, որտեղ պետությունն իրավունք չունի խուժել առանց դրա օրինական հիմքերի: Այսպես, օրինակ, ըստ ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածի, բնակարանն անձեռնմխելի է: Դա նշանակում է, որ ոչ մեկն իրավունք չունի ներս թափանցել բնակարան ընդդեմ այնտեղ ապրող անձանց կամքի: Այդպիսի ներթափանցումը՝ թույլատրելի է միայն օրենքով սահմանված կարգով դատական որոշման հիման վրա: Պետության վրա պարտակություն է դրված երաշխավորել բնակարանի անձեռնմխելիությունը ոչ այլ կերպ, քան օրենք ընդունելու միջոցով, ընդ այնմ, նրա մեջ պետք է ստույգ ցուցված լինեն առանց քաղաքացու կամքի նրա բնակարանն օրինաչափ մուտք գործելու դեպքերն ու պայմանները: Բացի այդ, պետության գործակալները կարող են մուտք գործել բնակարան առանց նրա բնակչի համաձայնության միմիայն այդ մասին դատական որոշման հիման վրա: Բնակարանի անձեռնմխելիության երաշխիք է հանդիսանում նաև այն, որ պետությունը քաղաքացիների և պաշտոնատար անձանց պատասխանատվություն է սահմանում սահմանադրական այդ իրավունքի խախտման համար:

Ինչ վերաբերում է մարդու և քաղաքացու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին, ապա նրանք իրենց մեջ բովանդակում են ծավալուն սոցիալական ծրագիր, որը բացվում է օրենսդիր և գործադիր մարմինների կողմից ընդունվող օրենքներում և այլ իրավական ակտերում:

Այլ կերպ ասած խոսքն այստեղ Սահմանադրության դրույթների ճյուղային օրենսդրության լեզվով թարգմանության մասին է, ինչը նախատեսված է բուն Սահմանադրությամբ: Սահմանադրության այս և շատ այլ դրույթներ պետության վրա պարտավորություն են դնում հրապարակել համապատասխան օրենքներ, հաշվի առնելով, որ դրանց իմաստն ու բովանդակությունը կանխորոշված են մարդու և քաղաքացու իրավունքներով այն տեսքով, որով նրանք ամրագրված են

Սահմանադրության մեջ: Դատական իշխանության կողմից սահմանադրական նորմերի անմիջական կիրառումն ընդհանրապես անհնար է, երբ գործը վերաբերում է քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվության մասին: Համապատասխան սահմանադրական նորմի անմիջական կիրառման համար Հիմնական օրենքի կողմից բավականաչափ լի կերպով կարգավորվում են միայն սահմանադրական պատասխանատվության հարցերը: Այնուամենայնիվ, տվյալ դեպքերում էլ պետք է հստակորեն որոշված լինեն այդպիսի կիրառման դատավարական ձևերը:

Մի խոսքով, Սահմանադրության նորմերը որպես կանոն և առավել հաճախակի իրագործվում են իրավունքի զանազան ճյուղերի նորմերի հետ համատեղ: Դա պայմանավորված է նրանով, որ սահմանադրական նորմերը ոչ միշտ են բավական Հիմնական օրենքի դրույթների իրագործման համար: Սահմանադրությունն ամրագրում է միայն գլխավոր, հիմնարար դրույթները, նա մոդելավորում է հասարակության տնտեսական, սոցիալական, քաղաքական կազմակերպության հիմնական սկզբունքները, սահմանում է քաղաքացիների իրավունքները, ազատություններն ու պարտականությունները, պետության գործունեության կազմակերպչական ու գործառութային հիմունքները: Դրանց իրականացումը ենթադրում է սահմանադրական նորմերի ձևափոխում այլ՝ սահմանադրական և սովորական օրենքներում:

Սահմանադրական ընդհանուր հրահանգումների այդպիսի թարգմանությունը ճյուղային (վարչական, քաղաքացիական, քրեական, աշխատանքային և այլն) օրենսդրության լեզվով պետք է ուղեկցվի Սահմանադրության կարգադրագրերի կոնկրետացումով, մարդու հիմնական իրավունքների, ազատությունների ու պարտականությունների մանրամասնումով ընթացիկ օրենսդրության միջոցներով, ինչպես նաև Հիմնական օրենքի նորմերի իրականացման դատավարական ձևերի մշակմամբ: Սահմանադրական նորմերի կոնկրետացման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ քաղաքացիների իրավունքների վերաբերյալ նորմերից շատերը գործում են ճյուղային օրենսդրության միջոցով, ինչպես նաև այն բանով, որ հարկավոր է բարձրացնել իրավունքների ու ազատությունների իրագործման դատավարական ձևերի արդյունավետությունը: Բացի այդ,

Սահմանադրությունը միշտ ընկալվում է որպես երկարատև գործողության փաստաթուղթ: Ընդունելով Հիմնական օրենքի կոնկրետացնող նորմատիվ ակտեր՝ առաջին հերթին սահմանադրական օրենքներ, օրենսդիրը հնարավորություն է ստանում արդիականացնել Սահմանադրությունը, ավելի լիարժեք կերպով օգտագործել նրա կարգավորիչ ու նաև քաղաքական, սոցիալական, բարոյական ներուժը ի շահ հասարակական առաջընթացի:

Անհրաժեշտ է սակայն շեշտել, որ խոսքը պետք է գնա սահմանադրական նորմերի հենց կոնկրետացման, դրանց սուբյեկտների բուն մանրամասնման, պաշտպանության միջոցների ու իրականացման դատավարական ձևերի մշակման մասին: Այդպիսի կոնկրետացման ընթացքում անթույլատրելի է հեռանալ Սահմանադրության տառից ու ոգուց, նրա մեջ մարմնավորած արժեքային ուղենիշներից, սահմանափակել սահմանադրական նորմով նախատեսված իրավասությունների կամ համապատասխան իրավունքներ ու պարտականություններ կրողների շրջանակը: Նման հեռացումը նշանակում է կամ Սահմանադրության խախտում և, հետևաբար, հակասահմանադրական է, կամ Սահմանադրության փոփոխում, ինչը նույնպես անթույլատրելի է, եթե պահպանված չեն դրա անհրաժեշտ պայմաններն ու արարողակարգերը:

Այսպիսով, կոնկրետացումը հանդիսանում է սահմանադրական նորմերի իրագործման կարևոր պայման: Սահմանադրության նորմերի բովանդակությունը ոչ միշտ է միանշանակ, ինչը հնարավորություն է տալիս մեկնաբանել դրանք տարբեր կերպ ըստ իրավակիրառողի կողմից արվող շեշտադրումների: Այդ նորմերի գնահատականը տարբերվում է նաև կախված կոնկրետ պատմական հանգամանքներից ու պահանջմունքներից՝ ինչպես դա մեկնաբանվում է իրավակիրառող մարմինների կողմից: Օրենսդիրը, կոնկրետացնելով սահմանադրական նորմը, հարմարեցնում է այն իրագործման համար կատարման, իրականացման, կիրառման ընթացքում:

Սակայն սահմանադրական նորմերի կոնկրետացումը կատարվում է ոչ միայն օրենսդիր, այլև իրավակիրառող մարմինների կողմից, քանի որ այդ նորմերն օժտված են անմիջական գործողությամբ: Իրավակիրառողը ոչ թե ներկարար է, որը պետք է ներկի մակերեսը այս կամ այն որոշակի գույնով, այլ նկարիչ, որ կոչված է

նկար ստեղծել այդ մակերեսի վրա: Եվ ինչպես գոյություն ունեն գեղանկարչության օրենքներ, այնպես էլ կան Հիմնական օրենքի կոնկրետացման նորմեր դատական և այլ իրավակիրառ մարմինների գործունեության մեջ դրանց անմիջական գործողության ու կիրառման ընթացքում:

Խոսքն, ըստ էության, գնում է սահմանադրական նորմերի կիրառման ընթացքում նրանց մեկնության քերականական, պատմական, տրամաբանական, համակարգային և այլ մեկնության մասին: Սակայն ցանկացած դեպքում նման մեկնությունը պետք է հիմնվի ՀՀ Սահմանադրության միասնականությունը հաշվի առնելով: Ինչպես առանձին սահմանադրական նորմերը, այնպես էլ սահմանադրական ինստիտուտները կազմում են ամբողջի մաս և ամբողջի շրջանակներում կատարում են իրենց գործառույթները: Սահմանադրության մեջ ամեն առանձին նորմի կամ նորմերի ֆունկցիոնալ նշանակությունն անհրաժեշտ է հաշվի առնել ու համադրել նրա ընդհանուր գործառնության հետ և մեկնել այդ նորմերը սահմանադրական հիմնարար դրույթների հունում: Այլ խոսքով առանձին սահմանադրական նորմի կոնկրետացման ընթացքում ստացված արդյունքները չպետք է հակասեն այլ սահմանադրական նորմերի, ընդհանրապես Սահմանադրության բովանդակությանը, նրա հիմնարար հենքին:

Այսպիսով, հասարակական հարաբերությունների նորմավորման ծրագիրը պարունակվում է բուն Հիմնական օրենքում, նրա տարբեր բաժիններում, գլուխներում, հոդվածներում: Բայց քանի որ նրանք փոխպայմանավորված են, փոխկապակցված և կազմում են միասնական ակտ, ապա սահմանադրական նորմի կոնկրետացումը պետք է իրականացվի Սահմանադրության համակարգում, նրա տեղի հաշվառմամբ և սահմանադրական կարգավորման ընդհանուր ուղղվածության համատեքստում: Այստեղ, ըստ էության, խոսքը դարձյալ գնում է Սահմանադրության և ընթացիկ օրենսդրության նորմերի Փոխգործողության և զուգակցման մասին, որոնք և կազմում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման անբաժանելի մասը: Դրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Սահմանադրության և սովորական օրենքների հարաբերակցությունը դրանց կիրառման ընթացքում դուրս է գալիս զուտ տեսաբանական հետազոտությունների շրջանակներից դա մի հիմնախնդիր է, որն էական

նշանակություն ունի դատական և իրավակիրառող այլ մարմինների գործունեության համար:

Սահմանադրական դոկտրինայի մեջ հնարավոր է ներկայանում առանձնացնել համատեղ կիրառման ընթացքում Սահմանադրության և ընթացիկ օրենսդրության հարաբերակցության մի քանի գլխավոր առումները:

Առաջինը. Սահմանադրության ազդեցությունն է երկրում կատարվող նորմաստեղծ գործընթացի վրա: Կարելի է խոսել իրավական համակարգի վրա Հիմնական օրենքի իրավակազմողական աճող ազդեցության մասին: Սահմանադրությունն ուղղակիորեն նախատեսում է մի շարք օրենսդրական ակտերի ընդունում: Օրենսդրության կատարելագործման ժամանակակից փուլի հատկանշական առանձնահատկությունն է կազմում սահմանադրական և սովորական օրենքների գագաթեռ և փոխկապակցված նորացումը:

Երկրորդը, օրենսդրության համակարգում Սահմանադրության տեղի հարցն է, նրա իրավաբանական ուժի հարցը: Լինելով օրենսդրության մաս՝ Սահմանադրությունը դրա մեջ խաղում է առաջատար դեր: Այն «օրենքների օրենքն» է, որն օժտված է բարձրագույն իրավաբանական ուժով և իրավաբանական բազա է հանդիսանում ընթացիկ ամբողջ օրենսդրության համար: Այստեղից տրամաբանորեն բխում է պետական և հասարակական մարմինների, ֆիզիկական և իրավաբանական բոլոր անձանց, որոնց վրա տարածվում պետության տարածքային և անձնական գերակայությունը, պարտականությունը՝ պահպանել և պաշտպանել Հիմնական օրենքը: Դա է հանդիսանում սահմանադրական օրինականության, ընդունվող նորմատիվ ակտերի՝ Սահմանադրությանը, նրա տառին ու ոգուն համապատասխանելու երաշխիքներից մեկը: Սահմանադրական վերահսկողության կազմակերպչական ձև է հանդիսանում Սահմանադրական դատարանը, որն օժտված է բավականաչափ լայն իրավասություններով:

Երրորդը. հասարակական հարաբերությունների կարգավորման գործում Սահմանադրության սահմանադրական օրենքների և սովորական օրենքների փոխգործողության հարցն է: Ազգային ներպետական իրավունքն իրենից ներկայացնում է ամբողջական համակարգ, որի օղակները բաժանված չեն պատով: Այն առաջատար դերը, որն այդ համակարգում գրավում են սահմանադրական

իրավունքը և դրա հիմնական աղբյուրը Սահմանադրությանը, նախորոշում ու պայմանավորում են այն գործառույթները, դրված իրավունքի այլ ճյուղերի վրա, որոնք կոչված են նախատեսել և ապահովել սահմանադրական նորմերի իրագործման համար անհրաժեշտ և հուսալի գործիքները: Հասարակական հարաբերությունների ոլորտում չկա այնպիսի բնագավառ, որտեղ չարտահայտվի սահմանադրական նորմերի կարգավորիչ ազդեցությունը: Սակայն այդ հարաբերությունները կարգավորվում են նաև իրավունքի համապատասխան վարչական, աշխատանքային, քաղաքացիական, քրեական և այլ ճյուղերի նորմերով:

Ինչ խոսք, դա չի նշանակում ո՛չ Սահմանադրության ուղղակի և անմիջական գործողության բնույթի, ո՛չ էլ իրավունքի այդ ճյուղերի արժեքի և դերի նսեմացում: Մենք ընդգծում ենք այն միտքը, որ սահմանադրական նորմերի իրագործման մեխանիզմը սահմանվում է ոչ միայն Սահմանադրության և ընդհանրապես պետական իշխանության կողմից, այլև ճյուղային օրենսդրությամբ, ինչն իր հերթին անխուսափելիորեն հարց է ծնում այդ մեխանիզմների սահմանների մասին:

Հիմնական օրենքի իրագործման սահմանադրական մեխանիզմը գործում է դրանց սուբյեկտների միջև հարաբերությունների բնականոն զարգացման ժամանակ: Որևէ շեղումների առաջացման դեպքում գործի է դրվում, կախված դրանց բնույթից, նաև իրագործման ճյուղային մեխանիզմը (խախտված իրավունքի վերականգնում, պարտականության կատարման ապահովում և այլն):

Սահմանադրության խնդրի մեջ չի մտնում բոլոր հասարակական հարաբերությունների կարգավորումը: Այն ամրագրում է սահմանադրական կարգի հիմքերը, սահմանում է մարդու և քաղաքացու իրավունքները, ազատություններն ու պարտականությունները, քաղաքացիական հասարակության կազմակերպման և գործունեության հիմունքները, ամրագրում պետական կառուցվածքը, կառավարման ձևը, ինչպես նաև պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման համակարգը: Սահմանադրությունը հանդիսանում է այն հիմքը, որի վրա կառուցվում է ազգային օրենսդրության ամբողջ շենքը: Այն կատարում է իր սեփական գործառնությունը և չի կարող ու չպետք է փոխարինի ճյուղային օրենսդրությանը:

Ասվածը չի նշանակում, որ իր սեփական իրավաբանական բնույթի շնորհիվ

Սահմանադրությունը դատապարտված է անգործության կամ որ նրա իրագործումը հնարավոր է միայն ճյուղային օրենսդրության միջոցով: Ընդհակառակը, հասարակական գիտակցության, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների գիտակցության մեջ մշտապես հարկավոր է սերմանել այն գաղափարը, որ Սահմանադրությունը անմիջականորեն գործող իրավաբանական փաստաթուղթ է, որի տառը ոգին, նորմերն ու սկզբունքները նախորոշում են իրավունքի սուբյեկտների վարքը:

Եվ որքան շատ հասարակության անդամները կհամաձայնեցնեն իրենց վարքը Սահմանադրության հետ, այնքան ավելի լրիվ և լիարժեք ձևով կարտահայտվի ժողովրդավարական ինստիտուտների ներուժը, այնքան ավելի հուսալի կլինեն ժողովրդավարության, ազատության և անձի իրավունքների երաշխավորված պաշտպանությունը:

Ամփոփելով վերլուծության արդյունքները, կարելի է ձևակերպել հետևյալ եզրահանգումները՝ կապած սահմանադրություն - օրենսդրություն - իրավակարգավորում փոխհարաբերության հետ:

1) Արդի սահմանադրականության, սահմանադրական պրակտիկայի տեսանկյունից՝ սահմանադրությունը, սահմանադրական կարգավորումը օրենսդրության համակարգի և իրավական կարգավորման առաջնային, գլխավոր նորմն է:

2) Սահմանադրությունը՝ որպես կարգավորման համակարգ, իր պատմական և փաստացի զարգացման մակարդակով հանդիսանում է որպես գործիք, որից կախված է ոչ միայն այս կամ այն երկրի, այլև երկրների խմբի կամ բլոկի իրավական կարգավորման ճակատագիրը:

3) Իրավակարգավորումների ոլորտում Սահմանադրությունից հետո խիստ կարևորվում է օրենսդրության՝ սահմանադրական օրենքների, սովորական օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նորմատիվ կարգավորման դերն ու նշանակությունը՝ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանություն, իրավաօրինականության ապահովման և իրավակարգի ամրապնդման գործում:

4) Օրենսդրության համակարգում իրավունքի բացերի լրացման, իրավական անորոշակիության պարզման և իրավական հակասությունների շտկման, ինչպես

նաև սահմանադրական և օրենսդրական ակտերի նորմերի բովանդակության ճիշտ ու համարժեք մեկնաբանությունների համար զգալի նշանակություն ունեն «բարձրագույն դատարանների՝ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները և սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները, որոնք նաև «կենդանի ուժ» են տալիս վերացական իրավական նորմերին:

2.2. Սահմանադրությունը և օրենսդրության համակարգվածության հիմնախնդիրը

Սահմանադրությունը որոշիչ դերակատարում ունի ազգային օրենսդրության զարգացման և համակարգվածության գործում:

Հանրահայտ փաստ են հաճախակի դժգոհությունները ազգային օրենսդրության նվազ արդյունավետության, իրավական ակտերի ցածր որակի և բազում բացերի վերաբերյալ: Նման տեսակի կոնկրետ թերությունների դիտարկումները, դրանց պատճառների որոնումները մեծ տեղ են գրավում ոչ միայն մասնագիտական գրականության մեջ, այլև օրենսդիր մարմնի գործունեությանը նվիրված հոդվածներում և ելույթներում:

Օրենսդրի հասցեին արտահայտված քննադատական նկատառումները ընդհանրացված ձևով կարելի է հանգեցնել երեք հիմնական թերությունների, օրենսդրության անհամակարգվածության, ներքին հակասության, նորմատիվ-իրավական ակտերի ավելորդ բազմության: Այս ամենը դժվարացնում է նորմատիվ իրավական ակտերի կիրառումը քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքների և շահերի պաշտպանության համար: Նման տեսակի թերությունների արձանագրումը վերաբերվում է գործող օրենսդրության կառուցվածքային բոլոր մասերին՝ հիերարխիկ (ուղղահայաց), ճյուղային (հորիզոնական) կառույցներին:

Ու թեև այս ուղղությամբ դեռ շատ անելիքներ կան, բոլոր հիմքեր կան հուսալու, որ ազգային օրենսդրության համակարգայնությունը որոշակիորեն կբարձրանա: Այդ են վկայում մասնավորապես իրավաբանական գրականության մեջ արված

բազմաթիվ և նպատակաուղղված առաջարկությունները:[109]

Այլ է դրությունը օրենսդրության մեջ կոլիզիաների պատճառների բացահայտման և դրանք շտկելու ուղիների որոնման հետ: Յավոք, իրավաբանական գիտությունը և օրենսդրական պրակտիկան ակնհայտորեն անբավարար ուշադրություն են դարձնում այս հիմնահարցերին, անտեսելով նույնիսկ նրանց հույժ կարևորությունը:

Զգալի չափով դա կապված է այն բանի հետ, որ գիտության մեջ բավարար կերպով չեն մշակված «իրավունքի ինստիտուտ» և «օրենսդրության ինստիտուտ» «իրավունքի ճյուղ» (ենթաճյուղ) և «օրենսդրության ճյուղ» - (ենթաճյուղ) զույգային կատեգորիաների հարաբերակցության հարցերը:

Այս կատեգորիաներից յուրաքանչյուրում ընդհանուրի և առանձնահատուկի բացահայտման փոխարեն հեղինակները առավել հաճախ, ելնելով այլևայլ նկատառումներից, ջանում են իրավունքի ճյուղ հայտարարել հասարակության կյանքի այս կամ այն ոլորտում տարաբնույթ և տարաճյուղ նորմերի և նորմատիվ իրավական ակտերի նոր-նոր ձևավորվող կառուցվածքային կազմությունից գրեթե զերծ որևէ միացություն: Այս իմաստով առավել բնորոշ են փորձերը որպես արդեն ձևավորված ճյուղ հռչակել «բժշկական իրավունքը»[110], թեև գիտությունը մինչև այժմ էլ գոնե մոտավորապես չի ուրվագծել օրենսդրության բժշկական ճյուղի շրջանակները: Այսպես, օրինակ, Ռ. Ա. Կվերնաձեն, վերլուծելով օրենսդրության բժշկական ճյուղը Ընդհանուր և Հատուկ մասերի իր կողմից առանձնացվող ինստիտուտներն ու կառուցվածքային ստորաբաժանումները[111], ընդհանրապես չի հիշատակվում բժշկական օրենսդրության բնակչության համար անչափ կարևոր ինստիտուտի մասին, ինչպիսին է դեղամիջոցների շրջանառությունը, առանց որի պատշաճ կանոնակարգման հայրենական առողջապահության կատարելագործման մասին բոլոր խոսակցությունները կմնան լոկ բարի ցանկություններ:

Օրենսդրության ճյուղային կառուցվածքում ամենաէական կոլիզիաները կապված

---

[109] Մանրամասն տես՝ **Ստեփանյան Հ.Մ.** Հայաստանի օրենսդրության համակարգումը (Փորձ և հիմնահարցեր): Երևան, 1995:

[110] Տես՝ **Маленина М.Н.** Человек и медицина в современном мире. М., 1995.

[111] Տես՝ **Квернадзе Р.А.** Некототрые аспекты становления и развития законодательства в области Здравоохранения // Гос. и право, 2001, №8. էջ 88-104:

են ճյուղերից ավելի մեծ կառուցվածքային գոյացությունների անկարգավորվածության հետ: Խոսքն այն գոյացությունների մասին է (գիտության մեջ նրանք ստացել են «օրենսդրական զանգվածներ (համալիր)» անվանումը), որոնց ծավալն ու ներքին կազմակերպությունն այնպիսին է, որ նրանց կառավարումը մեկ ակտիվ կենտրոնի, այսինքն՝ զանգվածը ղեկավարող կոդիֆիկացված ակտի միջոցով ըստ էության ահնարին է: Բանն այն է, որ նման դեպքերում հիմնարար ակտի վերացականության աստիճանի անխուսափելի մեծացման հետ մեկտեղ նվազում է նրա կողմից համակարգի արդյունավետ կառավարման կարողությունը, ինչը նման ակտի ընդունումը դարձնում է փաստորեն ավելորդ: Այս դեպքում կառավարման կապերը օրենսդրական զանգվածը (համալիր) ներսում պետք է իրենց տեղը զիջեն համակարգվող կապերին, նման այն կապերը, որոնք գոյություն ունեն իրավունքի համակարգի մասնավոր և հանրային իրավունքի ոլորտների ներսում[112]:

Ոչ պակաս կարևոր է համակարգայնությունը նաև այն օրենսդրական զանգվածների (համալիրների) համար, որոնք հիմնված են նրանց մեջ մտնող օրենքների և ենթաօրենսդրական ակտերի միջև առարկայական կապերի վրա՝ այն դեպքերում, երբ մի համալիրի մեջ են մտցվում իրավունքի միասեռ ճյուղերին համանման օրենսդրության ճյուղեր, ինչպես դա տեղի է ունենում բնապահպանական զանգվածում: Բնության պահպանության մասին օրենսդրության ճյուղերի նորմատիվ իրավական ակտերի փոխգործակցությունը այլոց թվում արտահայտվում է նաև նրանում, որ այդ ճյուղերից (հողային, ջրային, անտառային, լեռնային իրավունք) յուրաքանչյուրն առանձին-առանձին և բոլորը միասին պետք է հաշվի առնեն բնական օբյեկտների փոխկապվածությունը և դրանցից մեկի ազդեցությունը մյուսի վրա. ելնելով դրանից՝ մեր կարծիքով, շրջակա միջավայրի մասին օրենսդրությունը որպես ըստ ճյուղերի դիֆերենցված և միաժամանակ ինտեգրված բարդ համակարգ է: Այս ամենը հաշվի առնելով կարելի է ասել, որ բնապահպանական համալիրի մեջ պետք է ներառվեն և, հետևաբար, ներքուստ

[112] Օրենսդրության համակարգի կառուցվածքային ստորաբաժանումների մասին ավելի մանրամասն տես՝ **Ստեփանյան Հ.Մ.** Հայաստանի օրենսդրության համակարգը (Փորձ ու հիմնահարցեր): Երևան, 1995:

համաձայնեցվեն օրենքները և ենթաօրենսդրական ակտերը օրենսդրության բոլոր այն ճյուղերից և ինստիտուտներից, որոնք որոշում են կամ կոչված են որոշելու մարդու բնակության վայրի իրավական ռեժիմը, անկախ այն բանից, կոդիֆիկացված է այն, թե դեռ ոչ:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ առանձին դեպքերում ըստ առարկայական հատկանիշի առանձնացված օրենսդրական կարգավորման խոշոր զանգվածները (համալիրները) կարող են ներառել ոչ միայն ճյուղեր և ինստիտուտներ, այլև ծավալով ավելի փոքր զանգվածներ: Այսպես, գյուղատնտեսության մասին օրենսդրությունը կարող է միաժամանակ դիտարկվել և որպես օրենսդրական կարգավորման ինքնուրույն զանգված, և որպես շատ ավելի ընդարձակ տնտեսական օրենսդրության համալիրի բաղադրամաս:

Ազգային օրենսդրության տեսական իմաստավորումը և համակարգայնության աստիճանի բարձրացումը ենթադրում է, անշուշտ, և նրա հիերարխիկ (ուղղահայաց) կառուցվածքի կանոնակարգում:

Ազգային օրենսդրության համակարգայնության բարձրացման ուղիների որոնման տեսական վերլուծությունը ներառում է ոչ միայն նորմատիվ իրավական ակտերի աստիճանակարգության և այդ ակտերի յուրաքանչյուր տեսակով կարգավորվող հասարակական հարաբերությունների շրջանակի առանձնահատկության հարցերը, այլև նորմատիվ իրավական հրահանգավորումների մակարդակով կատարվող գործընթացները:

Դրանցից մեկը կապված է գործադիր իշխանության մարմինների իրավասության մեջ մտնող հարաբերությունները օրենքի մակարդակով կարգավորման փորձերի հետ:

Ինչպես հայտնի է, իրավական կարգավորումը բազմամակարդակ համակարգ է: Նրանում տեղ են գտնում ինչպես հասարակության մեջ վարքի ընդհանուր կանոնները, այնպես էլ առանձին, հատուկ կանոններ, պայմանավորված հարաբերությունների բնույթով և դրանց իրագործման մեխանիզմով: Որոշելու համար այն մակարդակը, որում պիտի կարգավորվի հարաբերությունը, անհրաժեշտ է ղեկավարվել կառավարման ընդհանուր կանոնով, որոշումը պետք է ընդունել այն մակարդակով, ուր կա ամենամանրամասն ինֆորմացիան և նրա գնահատման, և

օգտագործման ամենաօպտիմալ հնարավորությունը:

Բացի այդ, օրենքների ընդունումը ըստ գործունեության առանձին տեսակների, որոնք իրականում պետք է կարգավորվեն կառավարության կամ առանձին գերատեսչությունների ակտերով, ոչ միայն բերում է օրենքների որակի կտրուկ անկման, այլև բացասական ազդեցություն է գործում պետական կառավարման մարմինների ողջ համակարգի վրա: Պրակտիկայում դա դրսևորվում է որպես պետական յուրաքանչյուր մարմնի ձգտում ստանալ օրենք «իր մասին», որում ապահովված կլինեն գերատեսչական խմբակային շահերը: Լոբբինգի, նման օրենք «հայթայթելու» փորձերը միայն շեղում են կենսական հրատապ հարցերի լուծումից, սեփական իրավասության շրջանակներում որոշումներ ընդունելուց, ինչպես նաև այդ որոշումների համար պատասխանատվություն կրելուց:

Պարզ է, որ օրենքով կարգավորել գործունեության բոլոր տեսակները ոչ միայն նպատակահարմար չէ, այլև անհնար է: Տվյալ իրավիճակից կա միայն մեկ ելք. նորմատիվ իրավական ակտերի առարկայի որոշարկման գիտականորեն հիմնավորված չափանիշների օրենսդրական ամրագրում: Դա անհրաժեշտ պայման է օրենքի կողմից իր կարգավորիչ գործառույթի կատարման, նրա՝ որպես իրավական գերագույն ուժի ակտի արդյունավետության համար:

Սահմանադրական դրույթները ծրագրային ուղենիշ են ոչ միայն ազգային օրենսդրության համակարգում նորմատիվ իրավական ակտերի հիերարխիայի ճիշտ դասակարգման համար, այլև կանխորոշում են ազգային օրենսդրության զարգացման հիմնական մրցումները և օրենսդրական ակտերի համակարգման անհրաժեշտությունը:

Ազգային օրենսդրության համակարգայնության և արդյունավետության բարձրացման կարևոր միջոց է հանդիսանում օրինաստեղծ գործունեության մեջ տրամաբանության բոլոր օրենքների և պահանջների պահպանումը:

Ժամանակակից տրամաբանությունը նորմատիվ գիտություն է լեզվի օգնությամբ իրականացվող ինտելեկտուալ գործունեության ձևերի և սկզբունքների մասին: Ներկայումս տրամաբանությունը արագ կերպով զարգանում է ինչպես տրամաբանական նոր միջոցների (օրինակ՝ անհստակ բազմությունների տրամաբանություն) յուրացման, այնպես էլ այլ գիտությունների՝ ինֆորմատիկայի,

հաշվիչ տեխնիկայի բնագավառ (համակարգչային տրամաբանություն) ակտիվ ներխուժման շնորհիվ:

Գիտական տեսակետից օրենսդրությունն ու իրավունքը իրենցից ներկայացնում են տրամաբանական համակարգեր, որոնք կազմված են տրամաբանական տարատեսակ հարաբերություններով և դաշիքներով փոխկապված բազում բարդ նորմատիվային դատողություններից:[113]

Օրենսդրության՝ որպես իրավունքի ձևի, համակարգայնության համար օրենսդիր ակտիվորեն օգտագործվում է տրամաբանական ձևերի և միջոցների ողջ հավաքածուն (ինչպիսիք են տարբեր հասկացությունները, դատողությունները, բնորոշումները, ձևակերպումները, դասակարգումները, վերլուծությունն ու սինթեզը, եզրահանգումները և այլն): Հարկ է ճանաչել նաև, որ բանականության տեսության և պրակտիկայի առումով իրավունքն ու օրենսդրությունը հանդիսանում են ինտելեկտուալ համակարգ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Օրենդրության համակարգայնությանն անհարիր են նրա այնպիսի թերությունները, ինչպիսիք են հասարակությունը, մի նորմերի անհամապատասխանությունը մյուսներին, տրամաբանական սխալների առկայությունը: Համաձայն անհակասականության օրենքին (իսկ դա տրամաբանության օրենքներից մեկն է), երկու մտքեր հակասում են մեկը մյուսին, եթե նրանք անհամատեղելի են կամ բացառում են մեկը մյուսին[114]: Օրենսդրության համակարգում հակասությունների առկայութունն, ըստ էության, քայքայում է իրավաբանական մատերիայի կտավը: Հարկ է հաշվի առնել, որ իրավունքի և օրենսդրության համակարգում հակասությունը, որպես կանոն, կրում է լատենտային, թաքնված բնույթը և ի հայտ է գալիս միայն օրենքի կամ իրավական նորմատիվ այլ ակտի մեկնաբանման արդյունքում:

Վերջին տասնամյակում օրենսդրության անհակասության խնդիրը հույժ կարևոր նշանակություն է ձեռք բերել իրավաբանական տեսության և պրակտիկայի համար:

---

[113] Իրավաբանական և տրամաբանական այն միջոցները, որոնք ուղղված են օրենսդրության համակարգի մեջ հակասությունների և այլ թերությունների վերացմանը, կոչվում են համակարգապահպանիչ: Այդպիսիք են, օրինակ, կոլիզիոն իրավունքի նորմերը:

[114] Համաձայն մաթեմատիկական տրամաբանության թեորեմների, հակասական դատողություններ պարունակող առաջադրույթներից կարելի է բխեցնել ցանկացած դատողություն:

Այս ամենը հաշվի առնելով՝ կարելի է ձևակերպել մեկ ընդհանրական կանոն: Տարբեր կարգի նորմատիվ իրավական համակարգային հիերարխիայում յուրաքանչյուր հաջորդ նորմատիվ ակտը (այսինքն՝ այնպիսի ակտը, որը գտնվում է հիերարխիկ ավելի ցածր մակարդակում) չի կարող հակասել ավելի բարձր մակարդակի իրավական ակտերի:

Համաձայն համակարգերի ընդհանուր տեսության դրույթների՝ ազգային օրենսդրության կառուցվածքում անհրաժեշտ է տարբերակել արտաքին համակարգային հակասությունները և ներքին համակարգային հակասությունները:

Իրավագետների առջև կարևոր մի խնդիր է կանգնած, մշակել նորմատիվ-իրավական տեքստերի վերլուծության մեթոդներ՝ դրանց մեջ հնարավոր հակասությունները ի հայտ բերելու համար: Իրավաբանական գրականության մեծ ուշադրության է արժանի Ն. Ա. Վլասենկոյի առաջարկը, օրենսդրության մեջ եղած հակասությունները բաժանել ժամանակավոր, տարածային, բովանդակային և հիերարխիկ հակասությունների:[115]

Նորմատիվ տեքստերի համակարգչային վերլուծությունը վերաբերվում է ընդհանուր և իրավական ինֆորմատիկայի գլխավոր խնդիրներին և հանդես է գալիս որպես արհեստական բանականության հիմնախնդրի մաս: Դրա հետ մեկտեղ այն նաև ինքնին բարդ հարց է: Տվյալ ոլորտում արված են թեև առաջին, սակայն բավական հուսադրող քայլերը: Իրավաստեղծ բնագավառում ինտելեկտուալ համակարգերի ստեղծումը պետք է հենվի մարդ-մեքենա համակարգերի մշակումների վրա: Յուրաքանչյուր նման համակարգի աշխատանքի ժամանակ երկխոսություն է ընթանում իրավաբանի և համակարգչի միջև: Դրա նպատակն է տալ դիտարկվող տեքստի համակարգչային վերլուծություն և իմաստաբանական տարածության մեջ գտնել այն ոլորտները, օրենքի այն մասերը, որտեղ կարող են հակասություններ ծագել:

Իրավաստեղծ գործընթացում անհրաժեշտ է օգտագործել ոչ միայն դասական տրամաբանության ապարատը, այլև տրամաբանական նոր միջոցները: Դրանցից են

---

[115] Տես՝ **Власенко Н.А.** Проблемы точности выражения формы права /Логико-лингвистический анализ/. Автореф. дисс. на соискание уч. ст. доктора юрид. наук. Екатеренбург, 1997.

մասնավորապես դեոնտիկ (նորմատիվային) տրամաբանությունը:[116] Դեոնտիկ տրամաբանությունն ուսումնասիրում է պրեսպեկտիվ լեզվի (նորմեր իրագործող նորմատիվ բանաձևումների և գործողությունների լեզու) տրամաբանական կառույցները: Այն հանդիսանում է մոդուլային (եղանակավոր) տրամաբանության ճյուղը և ուսումնասիրում է հատկությունները այնպիսի օպերատորների, ինչպիսիք են «հնարավոր է», «պարտադիր է», «թույլատրված է», «արգելված է»:

Դեոնտիկ տրամաբանության մեջ նորովի են դրվում օրենքների անհակասության հարցը: Տվյալ հարցադրումներին վերաբերվող հիմնադրույթների թիվն ավելանում է: Խոսքը նշանակային տեսքով արտահայտված հետևյալ պահանջների մասին է:

~ Պգ ˆ Պգ

~Թգ ˆ Թգ

~Ագ ˆ Ագ

Պայմանանշաններն այստեղ նշանակում են. «Պ» - պարտականություն, «Թ» - թույլտվություն, «Ա» - արգելք, «ˆ» - «և» հոդը, «~»՝ բացառում, «գ» - գործողություն:

Այսպիսով, առաջին գործողությունը նշանակում է հետևյալը. չի կարող ճշմարիտ լինել մի նորմ, որը միաժամանակ պարունակում է և՛ որևէ գործողություն կատարելու պահանջ, և՛ դրա բացառում:

Երկրորդ դիրքը մեկնաբանվում է այսպես. չի կարող ճիշտ լինել մի նորմ, որը միաժամանակ պարունակում է և՛ որևէ գործողություն կատարելու թույլտվություն, և՛ դրա արգելք:

Երրորդ պահանջը հանգում է հետևյալին. չի կարող լինել մի նորմ, որը միաժամանակ պարունակում է և՛ որևէ գործողություն կատարելու արգելք, և՛ դրա բացառում:

Ազգային օրենքներում հաճախ հանդիպում ենք այնպիսի տրամաբանական ձևերի, ինչպիսիք են հասկացությունները և դրանց բնորոշումները: Դրանց համակարգաստեղծ նշանակությունն այն է, որ դրանք ի մի են բերում, կոնսոլիդացնում են իրավական ողջ նյութը: Օրենսդրական ակտերի մեջ

[116] Նորմատիվային տրամաբանությունը իր զարգացումը ստացել է **Ֆոն Ռայտի, Ա. Իվինի** և այլ գիտնականների աշխատություններում:

կատեգորիաներն ու հասկացությունները մեկ ամբողջի են միավորում տարբեր հարաբերություններ, օրինակ՝ ենթակայությունը, համաենթակայությունը և այլն:

Նորմատիվ - իրավական ակտերի տեքստերում գործածվում են բնորոշումների տարբեր տեսակներ, սուբստրանցիոնալ (բարդ հասկացության իմաստի պարզաբանում) և նոմինալ (տվյալ հասկացության իրավաբանական ֆունկցիայի պարզաբանում): Կարող են օգտագործվել նաև ակներև և ոչ ակներև բնորոշումներ:

Օրենքներով կիրառվող հասկացությունների իմաստը պետք է լինի մշտական և անփոփոխ: Հակառակ դեպքում ծագում է տեքստի անհամաձայնեցվածության, նրա համակարգային կազմակերպվածության մակարդակի նվազեցման միտում:[117]

19-րդ դարի երկրորդ կեսին ձևավորվեց անհստակ բազմության և անհստակ տրամաբանության հասկացությունները: Դրանց հատուկ դեր է պատկանում այն սոցիալական երևույթների նկատմամբ գործում, ոնք գործնականում ունեն ոչ հստակ տրամաբանական կառուցվածք: Օրենսդրական տեքստերում գոյություն ունեցող անհստակ բազմությունները կարելի է բաժանել որակականների («արդարություն», «հիմնավորվածություն», «բացառիկ ցինիզմ», «ակնհայտորեն սուտ ցուցմունքներ» և այլն) և քանականների (սիստեմատիկ շորթումներ», «արարքի ծանրություն», «խոշոր չափեր» և այլն): Իրավունքի տեսության մեջ այդ հասկացությունները ավանդաբար դիտվում են որպես գնահատականային հասկացություններ: Սակայն նման մոտեցումը չի բացահայտում իրավաբանական և տրամաբանական երևույթի բոլոր կողմերը:

Օրինագծի վրա աշխատելիս օրենսդիրը ջանում է հստակ դարձնել օրինագծի մեջ եղած անհստակ հասկացությունները: Դա իրականացվում է հասկացությունների բնորոշումների ներմուծման ճանապարհով: Սակայն նման բանը ոչ միշտ է հնարավոր: Այդ իսկ պատճառով իրավական նորմատիվ ակտերի տեքստերում մնում է անհստակ հասկացությունների որոշակի մաս, և դրանք ենթակա են տրամաբանական մեկնաբանման:

Այս ամենը վկայում է, որ օրինագծերի մշակման ընթացքում կարող են ծագել տրամաբանական-իմացաբանական բարդ հարցեր: Այդպիսի դեպքերում

[117] Տես՝ Систематизация законадательства в Российской Федерации. Санкт-Петербург. 2003. էջ 40-41:

նպատակահարմար է նշանակել տրամաբանական փորձաքննություն, որը պետք է կրի համալիր բնույթ: Իրավագետների հետ մեկտեղ փորձաքննությանն անհրաժեշտ է ներգրավել նաև բանասերներին և տրամաբանական գիտության ներկայացուցիչներին:

Տրամաբանական փորձաքննությունը կոչված է լուծելու այնպիսի խնդիրներ, ինչպիսին են՝ տրամաբանական սխալների վերացումը, օրինագծի տրամաբանական սրբագրում, օրինագծի տրամաբանական կառուցվածքի բարելավման ուղղությամբ առաջարկների և հանձնարարականների մշակում և այլն:

Ազգային օրենսդրության համակարգի ամրապնդումը ենթադրում է նրա ոչ միայն նյութական, այլև դատահիրավական ճյուղերի կատարելագործում:

Ներկայումս գործող ազգային օրենսդրությունը անընդմեջ փոփոխությունների գործընթացի մեջ է: Գործող օրենքների մեջ մտցվող բազմաթիվ փոփոխումներն ու լրացումները միայն վատթարացնում են վիճակը, քանի որ իրենց հետ բերում են իրավական կարգավորման համար անչափ կարևոր իրավական նորմերի համակարգվածության և համակարգայնության խախտման և հակասականության: Օրակարգի հրատապ հարց է իրավական կարգավորման տարաբաժանումը: Այդ միտումն առանձնապես հստակորեն է արտահայտվում վերջին տասնամյակներում: Ինչպես հայտնի է, բուն պոզիտիվ իրավունքի ծագումը կապված է իրավական կարգավորման տարաբաժանման հետ և հանդիսանում է դրա արդյունք: Տարաբաժանումը իրավական կարգավորման մեջ կարող է դիտվել որպես նրա զարգացման, կանոնակարգման գործոն, որն ի մի է բերում իրավական հրահանգավորումները և դարձնում այն կուռ, միասնական, ներքուստ համաձայնեցված և ներդաշնակեցված համակարգ:

Պոզիտիվ իրավունքում և օրենսդրության մեջ տարաբաժանման գործընթացներն ընդգրկում են ինչպես ողջ համակարգը, այնպես էլ դրանց բաղադրամասերը՝ ճյուղերը, ենթաճյուղերը, ինստիտուտները: Նման ստորաբաժանումը օրենսդրության հնարավոր է նաև պոզիտիվ իրավունքի ամենացածր՝ իրավական նորմի մակարդակով: Դա է վկայում դիսպոզիտիվ և ալտերնատիվ իրավական հրահանգավորումների առկայությունը:

Ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարելի է արձանագրել, որ իրավական

կարգավորման տարաբաժանման միտումները դիտվում են որպես օրենսդրության բնականոն, բնական զարգացման գործընթաց, որի պատճառ են հանդիսանում, առաջինը՝ հասարակական հարաբերությունների զարգացումը, և երկրորդ՝ քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և ազատությունների պաշտպանության համար հավելյալ երաշխիքների անհրաժեշտությունը, այդ թվում նաև հենց այդ գործընթացի ռացիոնալացումը և օպտիմալացումը: Իրավական կարգավորման տարաբաժանման գործընթացի խորացումը հանդիսանում է նաև օրենսդրության կատարելագործման հնարավոր ուղիներից մեկը:[118]

Օրենսդրության զարգացման կարևոր միտում և նրա համակարգման միջոց է հանդիսանում իրավական կանոնակարգման ինտեգրումը և ունիֆիկացումը (միասնականացումը):

Իրավական կարգավորման ունիֆիկացման գործընթացները պայմանավորված են երկակի բնույթի պատճառներով: Առաջինն այնպիսի օբյեկտիվ պատճառն է, ինչպիսին հասարակական հարաբերությունների զարգացումը: Այս դեպքում իրավական կարգավորման ունիֆիկացումը հանդիսանում է հասարակական կյանքի բարդացման արդյունք և արտացոլում է բուն իրավական կարգավորման ձևի և օրենսդրական տեխնիկայի կատարելագործումը, ինչը բնորոշվում է կազուիստիկայից՝ կեղծ փաստաբանումից և ընդհանուր հասկացություններ մշակելու հրաժարումը: Երկրորդ՝ սուբյեկտիվ կարգի պատճառն են իրավաստեղծ գործունեության անորակությունը և օրենսդիր սխալները: Ունիֆիկացիան դառնում է օրենսդրական կարգավորման ոլորտում կրկնությունների վերացման կարևոր միջոց:

Ունիֆիկացման օրինակներ են ԱՊՀ մակարդակով մոդուլային օրենքների և օրենսգրքերի մշակումը և դրանց հիման վրա ազգային նմանատիպ օրենսդրական ակտերի ու օրենքների ընդունումը:

Նորմատիվ կարգավորման ունիֆիկացման ձևն իրականացվում է կարգավորման տարբերակված ռեժիմ նախատեսվող նորմերի բացառման ճանապարհով: Իրավական կարգավորման ունիֆիկացիան հնարավոր է նաև

---

[118] Տես, օրինակ՝ Систематизация законадательства: как способ его развития. Отв. ред. **В.А. Сивицкий.** М., 2010. էջ 13-14:

հարաբերությունների որոշակի շրջանակ կարգավորող կանոնները համանման այլ հարաբերությունների վրա տարածելու ճանապարհով:

Օրենսդրության համակարգայնության բարձրացման բավական մեծ հնարավորություններ է պարունակում ազգային օրենսդրական գործընթացի կատարելագործումը: Այդպիսի հնարավորություններ են ի հայտ գալիս և օրինագծերի մշակման փուլում, և ՀՀ Ազգային ժողովի կողմից դրանց քննարկման փուլում:

Օրինագծի մշակման փուլում օրենսդրական նախաձեռնության իրավունքի սուբյեկտների կողմից կարող են առաջարկվել օրենսդրության համակարգայնության ապահովման երկու հիմնական եղանակ:

Առաջին, օրենսդրական նախաձեռնություն ցուցաբերած սուբյեկտներից մեկն ընտրվում է որպես «հիմնական» տվյալ գործընթացում և նրա օրենսդրական նախաձեռնությանը տրվում է գերապատվություն: Այս դեպքում բոլոր օրենսդրական նախաձեռնությունները դիտվում են որպես առաջինին «օժանդակ»: Երկրորդ տարբերակ, օրենսդրական նախաձեռնության սուբյեկտների օրինաստեղծ աշխատանքի համակարգում դեռ օրինագծի նախապատրաստման փուլում:

Առաջին տարբերակի օգտին է վկայում արտասահմանյան փորձը (Գերմանիա, Ֆրանսիա, Իսպանիա), որտեղ կառավարության դերը օրենսդրական գործընթացում առանցքային է (նա է մշակում օրինագծերի գերակշիռ մասը, որոնք հետագայում ընդունվում են որպես օրենքներ): Դրա հետ մեկտեղ կառավարությունը՝ պատասխանատվություն է կրում օրենսդրության հետևողականության, համաձայնեցվածության և փոփոխումների, ինչպես նաև ենթաօրենսդրական բոլոր ակտերը ժամանակին ընդունելու համար:

Ինչ վերաբերվում է Հայաստանին, ապա այստեղ անհրաժեշտ է հատկապես հաշվի առնել կառավարության անբավարար կատարողական կարգապահությունը անհրաժեշտ օրինագծերի մշակման և ներկայացման մասով: Ակներև է, որ անհրաժեշտ է ՀՀ կառավարության աշխատանքի այնպիսի օրենսդրական կարգավորում, որը կբացառի վերջինիս անբավարար և ոչ որակյալ օրինաստեղծությունը և կստիպի նրան ժամանակին և լիարժեք կերպով լրացնել «օրենսդրական բացերը»:

Օրենսդրության համակարգայնության ապահովման եղանակ է հանդիսանում նաև օրենսդրության ընդհանրապես և առանձին ճյուղերի մասնավորապես զարգացման հայեցակարգի մշակումը, համաձայնեցումը և ընդունումը: Դրա հետ մեկտեղ այս աշխատանքը պետք է ուղեկցվի հետագա ընթացակարգերով, մշակված և խորհրդարան ներկայացված օրինագծերի՝ ավելի վաղ ընդունված հայեցակարգային փաստաթղթերին համապատասխանության վերահսկմամբ, ինչպես նաև այնպիսի օրինագծերի վերաբերյալ բոլոր մակարդակներում որոշումների ընդունման վերահսկմամբ՝ որպեսզի նրանք խստիվ համապատասխանեն հաստատված հայեցակարգերին:

Օրինագծերի ներկայացման և ՀՀ Ազգային ժողովի կողմից դրանց քննարկման ընդունման փուլում օրենսդրության համակարգայնության ապահովման նպատակով անհրաժեշտ են օրինագծերի վերաբերյալ խիստ պահանջներ և դրանց կատարման վերահսկում:

Բացի այդ, չի պահանջվում ևս մի չափազանց կարևոր պահանջ, որպեսզի օրինագծերի մեջ մտցվեն նորմեր այլ գործող օրենքներում փոփոխություններ մտցնելու կամ օրինագիծը նրա հիման վրա հրապարակված ակտերի և փոփոխման ենթակա օրենքների հետ մեկտեղ միասնական «փաթեթի» մեջ միավորելու մասին:

Միևնույն ժամանակ լինում են հավելյալ և ավելորդ պահանջներ, օրինակ՝ «հանձնարարական» բնույթի հոդվածներ (ՀՀ կառավարության կողմից իրենց նորմատիվ իրավական ակտերը նոր օրենքներին համապատասխանեցման մասին), ինչպես նաև, հավասարապես, հակասություններ կամ գործող ընդհանուր կանոններ կրկնություն (օրենքը ուժի մեջ մտնել ժամկետների առումով):

ՀՀ Ազգային ժողովում օրինագծերը քննարկման փուլում ևս բավական հնարավորություններ կան օրենսդրության համակարգայնության աստիճանի բարձրացման համար: Այս նպատակով միևնույն հարցով օրինագծերի քննարկման ժամանակ անհրաժեշտ է օրինագծերի հոսքի հատուկ կազմակերպում: Խոսքը ըստ ժամանակի քննարկվող օրինագծերի կանոնակարգման մասին է՝ կախված նրանցով կարգավորվող հարաբերությունների ընդհանրությունից (ընդհանուրից դեպի մասնավորը), և համատեղ քննարկման համար ոչ միայն ամբողջապես այլընտրանքային օրինագծերի միաբանման (դա արդեն տեղի է ունենում), այլև

մասնակիորեն հատվող և փոխլրացնող ակտերի միավորման մասին:

Նպատակահարմար է նաև որոշակի ժամանակամիջոցում միևնույն օրենքում փոփոխություններ մտցնելու մասին ստացված բոլոր օրինագծերը մեկ ընդհանուր օրենքում միավորելու: Դա թույլ կտա զգալի չափով պահպանել գործող օրենքի տրամաբանությունը և միասնականությունը և միմյանց հետ համաձայնեցնել առաջարկվող փոփոխությունները:

Օրենսդրության համակարգայնության բարձրացման հնարավորություններ կան նաև առանձին քննարկման ժամանակ:

Այս առումով նպատակահարմար է հատուկ «համակարգային» փորձաքննությունների անցկացումը ըստ օրենսդրական կարգավորման տարբեր ոլորտների:

Նպատակահարմար ենք կարծում նաև տեքստի նախնական իրավաբանական-տեխնիկական լրամշակումը մասնագետների կողմից՝ հետագայում տրամադրելով շտկված տարբերակը՝ օրենսդրական նախաձեռնության սուբյեկտին վերջնական որոշում կայացնելու համար: Դա թույլ կտա պարզաբանել օրենսդրական կարգավորման առաջարկվող փոփոխման էությունը, նվազեցնել օրենսդրական գործընթացի սուբյեկտների բեռնվածությունը, հնարավորինս պակասեցնել օրենսդրության անճշտություններն ու անհամաձայնեցվածությունը:

Ազգային օրենսդրական հիմքերի կատարելագործումը ամենասերտ կերպով կապված է նրա սոցիալական բազայի ընդլայնման հետ: Հասարակական կարծիքի դերի մեծացումը, քաղաքացիների մասնակցությունը օրենսդրական գործունեությանը կարող է ընդունել տարբեր ձևեր, ընտրողների նամակներում, պարբերական մամուլում, արտահայտված կարծիքների հեռուստատեսային կամ ժողովներում ունեցած ելույթներում արված առաջարկություններ հրապարակված օրինագծերի վերաբերյալ, հասարակական քննարկումներ, մասնակցություն հանրաքվեներին և այլն:

Քաղաքացիների նման գործողությունը կարևորագույն գործոնն է հասարակության և պետության ժողովրդավարական զարգացման համար: Քաղաքացիների մասնակցությունը օրինաստեղծությանը հանդիսանում է քաղաքացիական հասարակության ձևավորման և զարգացման կարևոր

բաղադրամաս: Դա իշխանության և հասարակության փոխգործակցության կարևոր ձևերից մեկն է:

Օրենսդրության լայն սոցիալական հենքի ստեղծումը առաջին հերթին կարևոր է հենց օրենսդրի համար՝ որպես «հետադարձ կապի» գործոն: Անհասկանալի կամ հասարակական շահերին հակասող օրենքը դառնում է, որպես կանոն, մեռելածին կամ էլ մեծացնում է սոցիալական լարումը հասարակության մեջ, անվստահություն է ծնում իշխանությունների հանդեպ, այսինքն՝ գործնականորեն հակասություն է ստեղծում իրավական կարգավորման նպատակի և դրա արդյունքի միջև:

Հասարակության և պետության կենսագործունեության որակապես նոր իրավական հիմքի ստեղծման խնդիրը օրենսդրի առջև նորանոր հիմնախնդիրներ է դնում: Դա բարդ և երկարատև գործընթաց է, որն առաջարկում է տեսականորեն իմաստավորել և որակապես վերանայել հայացքներն ու մոտեցումները ոչ միայն ընդունվող օրենքների բովանդակության, այլև այն գործոնների վերաբերյալ, որոնք պետք է կազմեն բաղադրամասը այն կազմակերպչական սկզբունքների և ձևերի, որոնց շրջանակներում կարող են առավել լիարժեք կերպով իրագործվեն հետագա խնդիրները: Այդ պատճառով էլ բնական է եզրակացնել, որ օրենսդրական գործընթացը պետք է մշտապես գտնվի հասարակական վերահսկման ոլորտում: Հաշվի առնելով կենսավիճակների աճող բարդությունը՝ կարելի է համապատասխան եզրակացություն անել նաև օրինաստեղծ գործընթացի շրջանակներում գործող օրենսդրի և հասարակական կարծիքի փոխգործակցության բացառիկ կարևորության մասին, հատկապես այն դեպքերում, երբ մշակվում է այս կամ այն կարևոր օրենսդրական որոշումը: Այդ փոխգործակցությունը հույժ անհրաժեշտ է այդպիսի որոշումը օրենսդրական քաղաքականության սկզբունքների և վերջնական նպատակների հետ համաձայնեցնելու համար: Նման փոխգործակցությունը ավելի հուսալի է դարձնում օրենսդրական գործընթացը, որն առավել ամուր մեթոդաբանական հիմք է ստեղծում եզակիի և ընդհանուրի դիալեկտիկական հարաբերակցության մեջ՝ հասարակության մեջ տարբեր սոցիալական ուժերի անհրաժեշտ հավասարակշռվածության հասնելու համար:

Սկզբունքորեն կարևոր այս նկատառումից է բխում օրինաստեղծության ևս մի կարևոր սկզբունք:

Օրինաստեղծության բնագավառում հասարակական տարրի շրջանակների և սահմանների ընդլայնման սերտորեն կապված է իրավունքի կամային բովանդակության հիմնախնդրի հետ: Այս առումը պահանջում է առանձին և առավել հանգամանալի քննարկում: Հասարակության սոցիալական կառուցվածքի վերլուծության բացակայությունը, օրենսդրի նպատակադրող դիրքորոշման երբեմնի անհստակությունը դժվարացնում են պարզելու, թե ում կամքն են արտահայտում այս կամ այն օրենսդրական նորմերը, այս կամ այն օրենքը: Հարցի բարդությունը պայմանավորված է ևս մեկ պատճառով: Օրինաստեղծության գործում հասարակական կարծիքի դերը, օրենսդրի, իշխանության և ժողովրդի փոխհարաբերությունները որոշ դեպքերում կրում են, ըստ երևույթին, ոչ միայն իրավաբանական բնույթ:

Դրանցում բավական հզոր է նաև քաղաքական բաղադրիչը, և այդ իսկ պատճառով այստեղ առավել ևս անհրաժեշտ է երկխոսություն:

Օրինաստեղծ գործունեությանը մասնակցելու քաղաքացիների իրավունքն ուղղակիորեն ամրագրված է ՀՀ Սահմանադրության մեջ (2,204 հոդվածներ) և, բացի այդ, անուղղակիորեն բխում է Սահմանադրության մյուս հոդվածների՝ մեկնություններից: Այս գործընթացը կարգավորող հատուկ նորմեր ստեղծելու առաջարկությունը ըստ ամենայնի աննպատակահարմար է, քանզի նոր նորմերը, ինչպես դա հաճախ է պատահում, միայն կավելացնեն իրավական զանգվածը: Տվյալ դեպքում պետք է խոսել օրենսդրական ոլորտը ավելի բաց, ինֆորմատիվ, թափանցիկ դարձնելու օրենսդրի պարտականության մասին, այն մասին, որ անհրաժեշտ է ավելի լայնորեն և ժամանակին հրապարակել օրինագծերը հասարակական քննարկման համար, հատկապես այն օրինագիծը, որոնք վերաբերվում են հիմնարար օրենքներին և շոշափում են քաղաքացիների մեծամասնության անմիջական իրավունքներն ու կոնկրետ շահերը:

Այսպիսով, ազգային օրենսդրության համակարգայնության բարձրացումը կարևորագույն գործոն է հանդիսանում ոչ միայն օրինաստեղծ գործունեության կանոնակարգման, այլև բուն նորմատիվ իրավական բազայի կատարելագործման, ինչպես նաև իրավաստեղծ մարմինների և երկրի բնակչության միջև ուղղակի և հետադարձ կապի հաստատման և ամրապնդման համար:

2.3. Օրենսդրության համակարգում սահմանադրական գործառույթների դերն ու նշանակությունը

Սահմանադրության գործառույթների խնդիրը գիտական գրականության մեջ հատուկ գրեթե չի քննարկվել: Միևնույն ժամանակ հիմնական օրենքը հասարակության և պետության մեջ ունի գործառույթները: Դրանք հանդիսանում են անհրաժեշտ հասարակության համար, հակառակ դեպքում սահմանադրությունը որպես հատուկ փաստաթուղթ չէր ծագի կամ, ծագելով, կդադարեցներ իր գոյությունը չպահանջվածության արդյունքում:

Սահմանադրության գործառույթները այն արդյունավետ պետահիրավական կառուցակարգն է, որի միջոցով ապահովվում է գործող օրենսդրության կայունությունը, միասնականությունը և բնականոն առաջընթաց զարգացումը:

Սահմանադրության գործառույթները այն հիմնարար ներգործության ուղղություններն են, որոնց միջոցով ապահովվում է սահմանադրական օրինականությունը, ամենից առաջ, գործող օրենսդրությունում և իրավակիրառ պրակտիկայում, մարդու իրավունքների պաշտպանությունը և, ընդհանրապես՝ հասարակական հարաբերությունների սահմանադրականությունը:

Սահմանադրության գործառույթները արտահայտում են ընդհանուրի, առանձնահատուկի և հատուկի դիալեկտիկան: Մարդկության զարգացման ժամանակակից փուլում սահմանադրության անհրաժեշտությունը սահմանում են սահմանադրության ընդհանուր գործառույթները: Սահմանադրության տարբեր բովանդակությունները, զարգացման տարբեր փուլերում դրանց փոփոխությունները, սահմանադրության բնույթը (դեմոկրատական, տոտալիտար և այլն) սահմանում են այս կամ այն տեսակի սահմանադրության հատուկ գործառույթները: Դա՝ գործառույթներում առանձին սահմանադրություն է: Ի վերջո, առանձին երկրների առանձնահատուկ պայմաններում այս կամ այն պետության սահմանադրությանը կարող են հաղորդվել տարբեր բնույթի գործառույթներ:

Ցանկացած պետության մեջ սահմանադրությունը իրականացնում է որոշակի գործառույթներ: Ամերիկացի սահմանադրականության մասնագետներ Վ. Կ. Ջեկսոնը և Մ. Տաշները, ըստ համեմատական սահմանադրական իրավունքի աշխատության մեջ, մեկնաբանելով ամերիկյան հեղինակների տարբեր

դիրքորոշումները նշում են սահմանադրության հետևյալ գործառույթները: Սահմանադրությունը ա) կառավարման համար խարտիա է (այն տրամադրում է կառավարությանը որոշակի սահմաններում գործելու իրավունք և հնարավորություն ընձեռնում ընտրել կառավարման համար մեթոդները), 2) հիմնական իրավունքների պաշտպան է (դրանք բնականաբար ենթադրվում են մարդուն պատկանող), 3) «պայմանագիր, սիմվոլ, ներշնչանք», համատեղ ապրելու պայմանագիր («ինչպես ամուսնության դեպքում») պատերազմում և խաղաղության ժամանակ զարգացման համար:[119]

Սահմանադրության ընդհանուր գործառույթները՝ առաջինը, առկա հասարակական և պետական կառույցների հիմքերի բարձրագույն սահմանադրական օրինականացումն է գործող օրենսդրության համակարգում: Տվյալ դեպքում նշանակություն չունի, ընդունվել է «լավ» կամ «վատ» սահմանադրություն, խիստ ժողովրդավարական կամ տոտալիտար: Դրանցից յուրաքանչյուրը իրականացնում է այն հասարակական և պետական կառուցվածքին, անհատների, կոլեկտիվների կարգավիճակին սահմանադրական օրինականության հաղորդման գործառույթ (սահմանադրականության ձևով):

Երկրորդը, սահմանադրությունը հաստատում է ելակետերը գործող օրենսդրական զարգացման համար, որի ընթացքում մի կողմից՝ ապահովում է սահմանադրական օրինականությունը օրենսդրության մեջ և իրավակիրառ պրակտիկայում, մյուս կողմից՝ ապահովում է օրենսդրության կատարելագործումը և նորմատիվ իրավական ակտերի «թարմացման» գործընթացը:

Երրորդը, ցանկացած սահմանադրություն իրականացնում է գործող օրենսդրության գործառույթ: Վերևում ասվել է, որ հաճախ կայունությունը բնութագրում են որպես սահմանադրության հատկություն: Դա վերաբերվում է սահմանադրությանը որպես հատուկ փաստաթղթի, որը, որպես կանոն, փոփոխել կամ փոխարինել առավել բարդ է, քան սովորական օրենքը: Սակայն այստեղ խոսքը վերաբերում է, ամենից առաջ, օրենսդրության կայունության ապահովման, ինչպես նաև օրենսդրության համակարգի հարաշարժ փոփոխությունները ապահովելու

[119] Տես՝ Comparative Constitutional Law. 2nd./ ed. **By V.C. Jackson, M. Tushnetr.** N.Y., 2006. էջ 219:

առումով:

Կայունացնող գործառույթը դասվում է սահմանադրությամբ հաստատված իրավակարգին և համակցվում այդ հիմքերի բազայում զարգացնող գործառույթի հետ:

Սահմանադրության գաղափարական հատկությունների հետ կապված է գաղափարական գործառույթը:[120] Այն ունի երկակի բնույթ: Մի կողմից՝ խտացված ձևով, երկրի ներսում և միջազգային ասպարեզում սահմանադրական ձևակերպումների տեսքով որոշակի գաղափարախոսության արտացոլումն է: Այս գործառույթի տվյալ կողմը հատկապես նկատելի է «սոցիալիստական» սահմանադրությունների օրինակով: Մյուս կողմից, դա գաղափարական գործառույթի դաստիարակչական հատվածն է, որը ուղղված է սեփական քաղաքացիներին: Սահմանադրական նպատակները, դրանցում ամրագրված դրույթները կողմնորոշում են քաղաքացիների վարքագիծը, շրջապատի վերաբերյալ նրանց ընկալումները, նրանց գնահատականները, դաստիարակում այն սկզբունքներին համապատասխան, որոնք հռչակվում են սահմանադրության մեջ:

Այս կամ այն տեսակի սահմանադրության հատուկ գործառույթները կապված են դրանց բովանդակության բնույթի, սահմանադրության կոնկրետ բնույթի հետ: XIXդ. գործիքակազմային-լիբերալ սահմանադրությունները իրականացնում էին նոր իշխանության, պետության մարմինների կառուցվածքի և նոր իշխանության այն հատվածի բարձրագույն լեգալիզացում, որը կապված էր քաղաքացիության, քաղաքական և անձնական իրավունքի հարցերի հետ: Նույն ուղղությամբ գործում են դրանց զարգացնող, կայունացնող և գաղափարական, գործառույթները: XXդ. երկրորդ կեսին սոցիալ-գործիքակազմային ժողովրդավարական սահմանադրությունները իրականացնում են բարձրագույն լեգալիզացումը առավել լայն ծավալներով: Դրանք ամրագրում են հասարակական կառուցվածքի հիմքերը և քաղաքացու սոցիալ-տնտեսական իրավունքները, լեգալիզացնում պետության կարգավորիչ դերը և այլն: Տոտալիտար սահմանադրությունները լեգալիզացնում, իրավաբանորեն օրինական են դարձնում հակադեմոկրատական քաղաքական

[120] Մանրամասն տես՝ **Պողոսյան Վ., Միրումյան Կ.** Գաղափարախոսությունը և Սահմանադրությունը: Երևան, 1999:

կարգերը: Այն հակասում է համամարդկային արժեքների հետ անբեկանելի կապված ժամանակակից սահմանադրության սկզբունքներին, չի համակցվում լեգիտիմության հետ: Ժողովրդի պատկերացումներում տոտալիտար կարգերը դասվում են ոչ լեգիտիմներին, չնայած բնակչությունը անմիջական հարկադրության, հոգեբանական կախվածության, դաստիարակության, գաղափարական մշակման արդունքում ստիպված է պահպանել տոտալիտար սահմանադրության նորմերը: Ժողովրդավարական սահմանադրությունները ապահովում են հասարակական և պետական կառուցվածքի հիմքերի, մարդու և քաղաքացու իրավական դրության բարձրագույն լեգալիզացիան: Նման լեգալիզացիան համակցվում է լեգիտիմության հետ: Նույն ուղղությամբ գործում են դրանց զարգացնող, կայունացնող և գաղափարական գործառույթները:

Հասարակական և պետական կառուցվածքի հիմքերը, մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակը ամրագրող, իրավական նորմերի կիրառման ուղիով մարդու, կոլեկտիվի, պետության, հասարակության փոխկապվածությունները կարգավորող ժամանակակից սահմանադրության որպես հիմնական օրենքի որակները սահմանում են վերջինիս նշանակությունը երկրի կյանքում: Մարդու իրավունքների և իշխանության նախկին նեղ սահմաններից ելքը, ժամանակակից սահմանադրություններում հասարակական կառուցվածքի սկզբունքային հարցերի ընդգրկումը ուժեղացնում է վերջիններիս նշանակությունը: Սահմանադրության մեջ հիմնական նպատակների և սկզբունքների ամրագրումը հանդիսանում է հիմնական կողմնորոշիչ հասարակության, պետության, մարդկանց և կոլեկտիվների հասարակական գործունեության համար, իսկ սահմանադրական կոնկրետ նորմերը պահանջում, արգելում են որոշակի վարքագիծ: Քանի որ սահմանադրությունը հանդիսանում է հիմնական օրենք, ապա մնացյալ իրավական նորմերը պետք է վերջինիս համապատասխանեն, դրանք զարգացնում են վերջինիս թույլատող կամ պարտադրող որոշումները:

Նշենք, առաջինը, որ սահմանադրությունը գոյություն ունեցող կարգերին լեգալիզացիա է հաղորդում, իսկ դրա նախապատրաստմանը և ընդունմանը բնակչության մասնակցության դեպքում՝ լեգիտիմություն: Ժողովրդավարական սահմանադրությունը օրինականացնում է այն, ինչը ըստ նրա ստեղծողների

կարծիքի համապատասխանում է ժողովրդի շահերին, առաջընթացի միտումներին և չեզոքացնում այն, ինչը հնացել է, խանգարում է առաջընթացի շարժմանը: Բացի դրանից, այն պարունակում է խթաններ և նորմեր, որոնք անհրաժեշտ են հնի հաղթահարման համար:

Երկրորդը, ժամանակակից սահմանադրության ելքը մարդ - իշխանություն կարգավորման նեղ շրջանակներից, մարդ - կոլեկտիվ - հասարակություն- պետություն փոխկապվածության սկզբունքային հարցերի ընդգրկումը հաղորդում է վերջինիս ամբողջ հասարակական կյանքի օրենսդրական համակարգի դեր: Ներկայումս սահմանադրությունը կարգավորում է նշանակալի կարևորություն ներկայացնող հասարակական հարաբերությունների հիմքերը:

Երրորդը, սահմանադրական կարգավորման նոր շրջանակները, ժամանակակից սահմանադրության մեջ որոշ հիմնարարով սկզբունքների և նպատակների ներառումը ուժեղացնում են վերջինիս որպես օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի և իրավագիտակցության զարգացման իրավաբանական բազայի դերը: Սահմանադրությունը վերածվում է այն իրավաբանական հիմքի, որը ապահովում և խթանում է երկրում ամբողջ իրավական, և ոչ միայն իրավական, համակարգը:

Չորրորդը, սահմանադրությունը ունի մեծ դաստիարակչական նշանակություն: Սահմանադրության տեքստի, դրա սկզբունքների իմացությունը և դրանց հետևումը, դրանում ամրագրված քաղաքացու իրավունքների և պարտականությունների պահպանությունը դաստիարակում է քաղաքացիների մոտ հայրենասիրություն, սեփական անձի և շրջապատի նկատմամբ պատասխանատու վերաբերմունք: Միևնույն ժամանակ սահմանադրության ինչպես ցանկացած այլ փաստաթղթի նշանակությունը հարաբերական է: Մարդիկ թղթին կարող են հաղորդել սահմանադրության ցանկացած տեքստ, սակայն նույնիսկ ամենալավ սահմանադրության գոյությունը չի հանդիսանում այս կամ այն երկրի առաջընթաց կամ դեմոկրատական զարգացման երաշխիք: Եթե սահմանադրությունը չհամապատասխանի մարդու զարգացման բնական պատմական միտումներին օբյեկտիվ պայմաններին, նման տեքստը վերածվում է մահացածի: Հնարավոր է, դրա ամենանկատելի վկայություն հանդիսանում են սոցիալիստական

սահմանադրության կոմունիզմի որպես առաջընթաց հասարակության շինարարության վերաբերյալ դրույթները: Իրականում սոցիալիստական երկրները (այդ թվում ԽՍՀՄ) առավել հետ էին մնում Արևմուտքի առաջատար կապիտալիստական երկրներից, ինչն էլ հանգեցրեց XX դարի 80-90-ական թվականներին տոտալիտար սոցիալիզմի համակարգի անկման, իսկ պահպանված սոցիալիստական պետությունները իրենց տնտեսական կարգավորումներում ընդունեցին կապիտալիզմի որոշակի կանխադրույթներ (ճշմարիտ է, սահմանափակ ձևով): Սահմանադրության ընդունման ուղիով հնարավոր չէ բացարձակ փոփոխել հասարակության զարգացման սկզբունքային միտումները (հնարավոր է դա իրականացնել միայն ժամանակավոր հարկադրական ուղիով), «լավ» սահմանադրությունը չի կարող մեկ ակնթարթում փոփոխել մարդկանց վարքագիծը, չի կարող միանգամից ստեղծել լավագույն իրավիճակներ, առավել ժամանակակից պետություն: Սակայն ժամանակակից պայմաններում առանց սահմանադրության իրականացնել դա հավանաբար ընդհանրապես հնարավոր չէ:

ԱՄՆ Սահմանադրության և հետագա սահմանադրությունների ընդունման է կապված աշխարհում սահմանադրականության գաղափարների տարածումը: Սահմանադրականություն հասկացությունը[121], ինչպես այն մեկնաբանվում է ներկայումս, բազմանիստ է: Առաջինը, համարվում է, որ ցանկացած պետություն պետք է ունենա իր սահմանադրությունը: Պետությունների սահմանադրականացումը սովորաբար դիտարկվում է որպես պետականության վերջնական ձևավորում: Սահմանադրության առկայությունը՝ սահմանադրականության անհրաժեշտ տարրն է և, որպես կանոն, համաշխարհային հանրույթի կողմից նոր պետության ընդունման պայմաններից մեկը: Այս ֆորմալ կողմին զուգահեռ սահմանադրականության հասկացությունն ունի նաև բովանդակային կողմ:

Ժամանակակից պայմաններում սահմանադրականությունը՝ ոչ միայն

---

[121] Տես՝ **Богданова Н.А.** Категория “конституционализации” в науке конституционного права // Российский конституционализации: проблемы и решения. М., 1999, **Нерсесянц В.С.** Конституционализации как общегосударственная идеология //Конституционно-правовая реформа в Российской федерации. Отв. ред. Пивоваро Ю.С., М., 2000.

սահմանադրության, այլ նաև հատուկ տեսակի, համամարդկային արժեքների սկզբունքներին համապատասխանող սահմանադրության առկայություն է: Այս առումով նկատենք, որ սահմանադրականության ուսմունքը անբաժանելի կապված է սահմանադրության հետ:

Ինչպես նշում է Գ. Հարությունյանը. «Սահմանադրության հետ մեկտեղ առկա է սահմանադրականությունը, որը սահմանադրական նորմերն ու սկզբունքներն ապրող իրողություն են, ձևավորվել է սահմանադրական ժողովրդավարության անհրաժեշտ ու բավարար միջավայր, որտեղ սահմանադրական նորմերը գործում են անմիջականորեն և կա սահմանադրական վերահսկողության արդյունավետ համակարգ, որտեղ Սահմանադրությունը ոչ թե գործիք է պետական իշխանության տեսքին, այլ քաղաքացիական հասարակության հիմնական օրենք է, միջոց է այդ հասարակության ներդաշնակ ու կայուն զարգացումը երաշխավորելու համար՝ ոչ միայն սահմանելով վարքագծի հիմնական կանոնները, այլև սահման դնելով իշխանությանը, այն սահմանափակվելով իրավունքով»:[122]

Իհարկե, սահմանադրականության գաղափարները արտահայտվել են մտածողների կողմից նախքան սահմանադրությունների ծագումը, սակայն այս ուսմունքը ձևավորվել և ավարտուն ձև է ստացել միայն սահմանադրության ընդունումից հետո: Այս ուսմունքի բովանդակությունը կապված հասարակական կյանքի զարգացման հետ փոփոխվում է: Նախկինում սահմանադրականության ուսմունքի բովանդակությունը ուներ սահմանափակ բնույթ, սահմանադրություն ունենալու, այն դեմոկրատական ուղիով ընդունման (այդ ժամանակ առաջին պլան էր մղվում հիմնադրական ժողովը) և դրանով իշխանության սահմանափակման (նույնիսկ քաղաքացու և մարդու իրավունքները սկզբում չեն ընդգրկվել ԱՄՆ Սահմանադրության մեջ) պահանջներ: XXդ. սկզբում սահմանադրականության ուսունքը տարբերվում էր XIXդ., իսկ սահմանադրականության ժամանակակից ուսմունքի սկզբունքները, դրույթները տարբերվում են այն սկզբունքներից, որոնք ընդգրկված էին վերջինումս նախքան Երկրորդ Համաշխարհային պատերազմը:

Ժամանակակից պայմաններում սահմանադրականության ուսմունքը ելնում է

[122] Տես՝ **Հարությունյան Գ.** Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Վերահրատարակություն՝ լրամշակումներով: Երևան, 2016, էջ 36:

դեմոկրատական, սոցիալ-գործիքակազմային սահմանադրության պահանջներից և ընդգրկում հետևյալ սկզբունքները, պետության համար սահմանադրության անհրաժեշտություն, նախագծի մշակում ժողովրդի, նրա ներկայացուցիչների մասնակցությամբ, սահմանադրության ընդունում անմիջականորեն ժողովրդի կամ սահմանադիր ժողովի կողմից, սահմանադրության որպես առանձնահատուկ քաղաքական, իրավաբանական և գաղափարական փաստաթղթի դերը, որը ամբողջական ձևով կարգավորում է հասարակության «հիմքը», մարդ-կոլեկտիվ-հասարակություն-պետության հիմնական հարաբերությունները, սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը, կյանքի փոփոխվող պայմաններին համապատասխանությամբ դրա անհրաժեշտ կայունությունը և փոփոխականությունը, սահմանադրության մեջ համամարդկային և ազգային արժեքների խելամիտ զուգորդումը:

Ամփոփում

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա կարելի է ընդհանրացնել հետևյալ եզրահանգումները.

1. Չնայած «սահմանադրություն» եզրույթի պատմական երկարատև վաղեմությանը, ժամանակակից իմաստով սահմանադրություններն առաջացել և բուրժուադեմոկրատական հեղափոխությունների դարաշրջանում (XVIII-XIX դարերում) և դրանք ուղղված էին սովորական միահեծան թագավորական իշխանությունների և շերտավորված դասային անհավասարության դեմ: Այս առումով, սահմանադրությունները եկան հաստատելու իշխանության կազմակերպման իրավական (արդարացի) ձևը, մարդու իրավունքների հարգումը, իրավունքի իշխանության գերակայությունը:

2. Սահմանադրությունը ողջ ժողովրդի կամքն արտահայտող բարձրագույն իրավաբանական ուժով օժտված, իրավաստեղծման, իրավակիրառության և իրավագիտակցության համար իրավաբանական հենք հանդիսացող հիմնադրական իրավաքաղաքական նորմատիվ իրավական ակտ է և «հասարակական դաշինքի» փաստաթուղթ:

3. Ժամանակակից սահմանադրությունը ոչ միայն իրավաքաղաքական փաստաթուղթ է, այլ նաև հասարակության և սոցիալ-քաղաքական ուժերի կենսական շահերի իրավական ամրագրում է: Դրանք մարդու փոխհամաձայնեցված շահերի և բազմակողմանի կապերն են:

Սահմանադրությանը նաև ազգային և համամարդկային արժեքների իրավաբանական ամրագրման փաստաթուղթ է:

4. Ժամանակակից ժողովրդավարական, սոցիալականացված, ինֆորմացված հասարակության պայմաններում սահմանադրության էությունը կարող է բնութագրվել որպես հիմնական օրենքով ժողովրդի համընկնող կենսական շահերի ամրագրում, համամարդկային արժեքների ընդունում և այդ հենքի վրա հասարակությունում ձեռք բերված փոխզիջման կամ կոնսենսուսի իրավաբանական ամրագրում:

5. Սահմանադրության բովանդակությունը առավել խորը և բազմակողմ է: Ժամանակակից սահմանադրության բովանդակությունը՝ հասարակության մեջ ձեռք

բերված կոնկրետ փոխզիջման նորմատիվ իրավական արտահայտման եղանակ է: Արտաքնապես բովանդակությունը ներկայացված է հիմնական օրենքի նորմերի համախմբով, իսկ կոնկրետ սահմանադրության առումով՝ սահմանվում են մարդու - հասարակության - պետության փոխկապվածության և փոխհամաձայնեցվածության հիմքերը:

6. Սահմանադրության բովանդակությունը երկակի բնույթ ունի՝ սոցիալական և իրավաբանական: Սոցիալական բովանդակությունը՝ մարդու - կոլեկտիվի - հասարակության - պետության շահերի խելամիտ համադրումն է հիմնական օրենքում:

Սահմանադրության իրավաբանական բնույթը՝ բուն նորմատիվ իրավական նյութն է (համապարտադիր և օրինակելի վարքագծի կանոնների հանրագումարն է), որոնք մարմնավորված են սահմանադրական նորմերում, սկզբունքներում, ինստիտուտներում և գործող օրենսդրության մյուս նորմերի նկատմամբ օժտված են հիմնադիր և բարձրագույն իրավաբանական ուժով:

Սոցիալական և իրավաբանական բովանդակության առանձնահատկություններով պայմանավորված որոշվում է սահմանադրության էությունը, հասարակական-քաղաքական նշանակությունը և իրավաբանական բնույթը:

7. Օրենսդրությունը որպես հարաբերական ինքնուրույն համակարգ՝ կազմված է նորմատիվ իրավական ակտերից, որոնք իրենց իրավազորության աստիճանի (իրավաբանական ուժի) կազմում են հիերախիկ բուրգ՝ սահմանադրական օրենքներ, սովորական օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր:

Սահմանադրության և գործող օրենսդրության փոխհարաբերակցությունը հիմնական կրում է շեշտված միակողմանի բնույթ՝ Սահմանադրության գերակայող դիրքով: Այս առումով, Սահմանադրությունը օրենսդրության նկատմամբ օժտված է ոչ միայն բարձրագույն իրավաբանական ուժով, այլև հանդես է գալիս որպես ծրագիր և ուղեցույց՝ գործող օրենսդրության կատարելագործման և զարգացման համար: Դա տեղի է ունենում հետևյալ ուղղություններով. ա) Սահմանադրական նորմերը կոնկրետացվում են օրենսդրական ակտերի միջոցով (ընդունվում են նոր նորմատիվ իրավական ակտեր կամ կատարվում են համապատասխան

փոփոխություններ գործող ակտերի բովանդակության մեջ), բ) ընդունվում են Սահմանադրությամբ չնախատեսված, սակայն Սահմանադրությանը չհակասող նորմատիվ իրավական ակտեր՝ հասարակության իրավական պահանջմունքների անհրաժեշտությունից ելնելով, գ) ընդունվում են նոր նորմատիվ իրավական ակտեր, որոնք բխում են վավերացված (հաստատած) միջազգային պայմանագրերի դրույթներից:

8. Սահմանադրությունը գործող օրենսդրության համակարգի վրա ներգործում է իր գործառույթների միջոցով: Սահմանադրության գործառույթները այն արդյունավետ պետահիրավական կառուցակարգն է, որի միջոցով ապահովվում է գործող օրենսդրության կայունությունը, միասնականությունը, որոշակիությունը և հարաշարժ առաջընթաց զարգացումը:

Սահմանադրության գործառույթները գործունեության հիմնական ուղղություններն են, որոնց միջոցով իրականացնում է հասարակական հարաբերությունների սահմանադրականացումը, ապահովվում է սահմանադրական օրինականությունը գործող օրենսդրության համակարգում և իրավակիրառ պրակտիկայում:

9. Մեր տեսանկյամբ ցանկացած սահմանադրության հիմնական գործառույթների շարքին դասվում են. հիմնադիր, օրինականացման, իրավաբանական (օրենսդրության, իրավակիրառ պրակտիկայի, իրավագիտակցության զարգացման համար իրավաբանական հիմքի գործառույթ), կազմակերպչական, կայունացնող և ծրագրային: Այս գործառույթները, հստակորեն նկատելի են XXI դարի սահմանադրությունների մեջ, տարանջատված չլինելով «չինական պատով», իրական կյանքում դրանք հատվում են:

Օգտագործված գրականության ցանկ

ա. նորմատիվ իրավական ակտեր և փաստաթղթեր իրավական

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Երևան, 2015թ. (Պաշտոնական տեղեկագիր)

2. Հայաստանի Հանրապետության օրենքը իրավական ակտերի մասին: Երևան, 2015 (Պաշտոնական տեղեկագիր)

3. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ: Երևան, 2014, 92 էջ:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագիծ և մեկնաբանություններ: Երևան, 2015, 143 էջ:

բ. Մասնագիտական գրականություն

1. Այվազյան Ն.Ա., Այվազյան Ա.Ն. Սահմանադրության էությունը և բովանդակությունը (համեմատական սահմանադրական վերլուծություն): Երևան, 2005, 204 էջ:

2. Դանիելյան Գ.Բ., Այվազյան Վ.Ն., Մանասյան Ա.Ս. Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի դրույթները և դրանց իրացման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում (գիտագործնական հետազոտություն): Երևան, 2015, 240 էջ:

3. Խաչատրյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը: Երևան, 1997, 398 էջ:

4. Խաչատրյան Հ.Մ. Սահմանադրությունը և կոնստիտուցիոնալիզմի հիմնահարցերը: Երևան, 1998, 79 էջ:

5. Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք: Գիրք առաջին: Դասագիրք բուհերի համար: Երևան, 2016, 416 էջ:

6. Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական մշակույթ, պատմության դասերը և ժամանակի մարտահրավերները: Երևան, 2016, 672 էջ:

7. Հարությունյան Գ.Գ. Սահմանադրական մշտադիտարկում: Երևան, 2016, 352 էջ:

8. Հարությունյան Գ.Գ. Իրավունքի գերակայության սահմանադրական երաշխիքները: Երևան, 2016, 72 էջ:

9. Նազարյան Վլ. Ռ. Հայաստանի սահմանադրության կոնցեպցիան: Երևան, 1992, 127 էջ:

10. Ներսեսյանց Վ.Ա. Իրավունքի և պետության տեսություն: Երևան, 2001, 300 էջ:

11. Ներսեսյանց Վ.Ա. Իրավագիտություն: Երևան, 2002, 284 էջ:

12. Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ: Գլխ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան: Երևան, 2014, 692 էջ:

13. Պողոսյան Վ., Միրումյան Կ. Գաղափարախոսությունը և Սահմանադրությունը: Երևան, 1999, 80 էջ:

14. Ստեփանյան Հ.Մ. Հայաստանի օրենսդրության համակարգումը (Փորձ և հիմնահարցեր): Երևան, 1995, 181 էջ:

15. Վաղարշյան Ա.Գ. Պետության իրավունքի տեսություն-2: Դասախոսություններ: Երևան, 2011, 448 էջ:

16. Азаров, Н.И. Теория государства и права (Текст) / Н.И. Азаров. - М., 1998. 245 с.

17. Алексеев, С.С. Государство и право (Текст) / С.С. Алексеев. М. : Юрид. лит., 1994. 192 с.

18. Алексеев, С.С. Общая теория права (Текст) / С.С. Алексеев. - М., Т. 1. 1981 -360 с.

19. Алексеев, С.С. Общая теория права (Текст) / С.С. Алексеев. - М., Т. 2. 1982 - 360 с.

20. Алексеев, С.С. Философия права (Текст) / С.С. Алексеев. - М.: Норма, 1998, 336 с.

21. Азми Д.М. Система права и её строение: методологические подходы и решения. М., 2014, 392 с.

22. Авакьян С.А. Конституция России: природа, эволюция, современность. М., 2000, 528 с.

23. Арутюнян Г.Г. Конституционализация: уроки, вызовы, гарантии. Киев., 2011, 308 с.

24. Боброва, Н.А. Ответственность в системе гарантий конституционных норм:

государственно-правовыеаспекты (Текст) / Н.А. Боброва, Г.Д. Зражевская. - Воронеж : Изд-во Воронеж, ун-та, 1985. 154 с.

25. Боннер, А.Т. Законность и справедливость в правоприменительной деятельности (Текст) / А.Т. Боннер. - М., 1992. 320 с.

26. Братусь, С.Н. Юридическая ответственность и законность (Текст) / С.Н. Братусь. - М. : Юрид. лит., 1976. -216 с.

27. Братусь, С.Н. Юридическая ответственность и законность (Текст) / С.Н. Братусь. - М. : Городец-издат, 2001. - 208 с.

28. Венгеров, А.Б. Теория государства и права (Текст) / А.Б. Венгеров. - М.: Юрист, Т. 1. 1996. -168 с.

29. Венгеров, А.Б. Теория государства и права. (Текст) / А.Б. Венгеров. - М.: Юрист, Т. 2. 1996. -160с.

30. Вопросы теории государства, и права: новые идеи и подходы (Текст) / Под род. М. И. Байтина. -Саратов: СГАТТ 2000. -152 с.

31. Егибарен Р.В. Конституционное развитие в современном мире. Основные тенденции. М., 2007, 496 с.

32. Зорькин В.Д. Россия и Конституция в XXI веке. 2-е изд. М., 2008, 592 с.

33. История государства и прав зарубежных стран. Том 2. М., 2006, 816 с.

34. Конституция Российской федерации. Стабильность и развитие общества. М., 2004, 64 с.

35. Конституция в XXI веке. Сравнительно- правовое исследование. М., 2014, 656 с.

36. Конституционное право и политика. Сборник материалов международной научной конференции. М., 2012, 800 с.

37. Крусс В.И. Конституционализация права: основы теории. М., 2016, 240 с.

38. Конституция как фактор социальных изменений. Сборник докладов. М., 1999, 107 с.

39. Мазуров А. В. Конституция и общественное практика. М., 2004, 364 с.

40. Матузов, Н.И. Правовая система и личность (Текст) /Н.И. Матузов. - Саратов: Изд-во Сарат. ун.та, 1987. -296 с.

41. Нерсесянц, В.С. Философия права (Текст) /В.С. Нерсесянц.- М.: Инфра. М-Норма, 2007, 702 с.

42. Нерсесянц, В.С. Общая теория права и государства. М., 2015, 560 с.

43. Марченко М.Н. Проблемы общей теории, государства и права. (Государство). М., 2015, 744 с.

44. Марченко М.Н. Проблемы общей теории, государства и права, (право). М., 2015, 644 с.

45. Общая теория права (Текст) /Под ред. А.С. Пиголкика. - М. : Изд-во МГТУ им. Н.Е. Баумана, 1996. 384 с.

46. Общая теория права (Текст): курс лекций /Под ред. В.К. Бабаева. -Н. Новгород, 1993. - 451 с.

47. Пермяков, Ю.Б. Лекции по философии права (Текст) /IG.Е.Пермяков. Самара: Изд-во Самарск. ун-т, 1995, -120 с.

48. Проблемы теории государства и права (Текст) /Под ред. С.С. Алексеева. М., 1987. 448 с.

49. Примаков Д.Я. История еврейского и израельского права. М., 2015, 212 с.

50. Протасов, В.Н. Теория права и государства (Текст) : вопросы и ответы /В.И. Протасов. М., 1999. -240 с.

51. Радько, Т.Н. Функции права. Т. 2 (Текст) /Т.Н. Радько. //„Общая теория государства и права /Отв. ред. М.Н. Марченко. - М., 1.999. - 475 с.

52. Систематизация законадательства: как способ его развития. М., 2010, 535 с.

53. Систематизация законадательства в Российской федерации. Под ред. А.С. Пиголкина. СПб., 2003, 382 с.

54. Сырых, В.М. Теория государства и права (Текст) / В.М. Сырых. - М., 1998. - 512 с.

55. Спиридонов, Л.И. Теория государства и права (Текст) / Л. И. Спиридонов.- М., 1995. -489 с.

56. Стратегия и проблемы устойчивого развития России в XXI веке (Текст): -М., 2002, -124 с.

57. Сюкияйнен Л. Глобализация и мусульманский мир: оценка совершенной

исламской правовой мысли. М., 2012, 88 с.

58. Теория государства и права (Текст) /Под ред. В.В. Лазарева. - М., 2001. 576 с.

59. Теория государства и права (Текст) /Под ред. В.К. Бабаева. -М., 1999. 122 с.

60. Теория государства и права (Текст) /Под ред. В.М. Корельского, В.Д. Перевалова. М. : Норма, 2000. - 616 с.

61. Теория государства и права. Философия права (Текст) /Науч. ред. и Л.М. Ломоносов. - Йошкар-Ола : Марийск, гос. ун-т., 1999. - 76 с.

62. Теория государства и права. (Текст): курс лекций /Под ред. Н.И. Матузова, А.В. Малько. - М.: Юрист., 1997 -672 с.

63. Теория государства и права. (Текст): курс лекций /Под ред. Н.И. Матузова, А.В. Малько. - М.: Юрист., 2001, 776 с.

64. Теория права и государства в связи с теорией нравственности (Текст) : - СПб., 2000. -608 с.

65. Хабриева Т.Я., Чиркин В.Е. Теория современной конституции. М., 2005, 320 с.

66. Чиркин В.Е. Конституция Российская модель. М., 2002, 160 с.

67. Шахмалов, Ф. Основы теории государственного управления [Текст]: -учебник для вузов/ Ф. Шахмалов. М.: ЗАО Изд-во Экономика, 2003- 518 с.

68. Шершеневич, Г.Ф. Общая теория права (Текст) /Г.Ф. Шершеневич. - М.: Юрид. кол. МГУ., Том 2, Вып. 2,3,4. 1995 -221 с.

69. Эбзеев Б.С. Введение в конституцию России. М., 2013, 560 с.

70. Эбзеев Б.С. Конституция, власть и свобода в России. Опыт синтетического исследования. М., 2014, 336 с.

71. Эбзеев Б.С. Человек, народ, государство в конституционном строе Российской федерации. М., 2013, 656 с.

գ) Գիտական հոդվածներ

1. Авакьян С.А. Государственно-правовая ответственность (Текст) /С.А. Авакьян// Советское государство и право. 1975, N 10, с. 31-36.

2. Автономов А.С. Ценность Конституции //Государство и право. 2009, N 3, с. 5-11. Авдийский В.И., Павликов С.Г. О соотношении экономики и права и тенденциях конституционно-правового регулирования экономических отношений// Государство и право. 2014, N 11, с. 35-42.

3. Мартышин О.В. Конституция и идеолигия //Государство и право. 2013, N 12, с. 34-44.

4. Марченко М.Н. Конституция послесоветской России: проблемы теории и методологии познания //Государство и право. 2013, N 12, с. 26-33.

5. Умнова И.А. О современном понимании Конституции Российской федерации в контексте доктрин конституционализма и судебной правоприменительной практики //Государство и право. 2014, N 11, с. 18-26.

6. Чиркин В.Е. О базовых ценностях Российской Конституции //Государство и право. 2013, N 12, с. 18-25.

7. Эбзеев Б.С. Конституция Российской федерации: прямое действие и условия реализации //Государство и право. 2008, N 7, с. 5-15.

8. Эбзеев Б.С. Конституция Российской федерации - 20 лет: государство, демократия, личность сквозь призму практического конституционализма// Государство и право. 2013, N 12, с. 5-17.

դ) Ատենախոսություններ և սեղմագրեր

1. Խաչատրյան Հ.Մ. Հայաստանի Հանրապետության առաջին Սահմանադրությունը (պետաիրավական վերլուծություն): Գիտական զեկուցման ձևով իրավ. գիտ. դոկտորական ատենախոսություն: Երևան, 1998, 64 էջ:

2. Ստեփանյան Հ.Մ. Հայաստանի օրենսդրության համակարգումը (Փորձ և հիմնահարցեր): Սեղմագիր իրավ. գիտ. թեկն. գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 1996, 25 էջ:

3. Виноградов В.А. Конституционно-правовая ответственность. Дисс.. д.-ра юрид. наук. М., 2005, 384 с.

4. Ряховская Т.И. Система обеспечения прямого действия Конституции Российской федерации. Дисс.. канд. юрид. наук. М., 186 с.

5. Титова А.А. Конституция в системе российского законодательства (теоретико-правовой анализ). Дисс.. канд. юрид. наук., Саратов, 2012, 202 с.

6. Толстик В.А. Иерархия источников российского права. Дис...д-ра юрид. наук. Нижний Новгород, 2002, 494 с.

7. Хабриева Т.Я. Толковая Конституции Российской федерации. Дисс.. д-ра. юрид. наук. М., 1997, 346 с.